



ՀԹ. ՏԱՐԻ


ԲԱՐՄԱՆԱԿ

ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԱՐՄԱՆԻՐ
ԱՐԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԱՆՅՐ ԱԹԱԽԱՅ ՄԻՔԱՅ ԷԶՐԻԱԾԻՆԻ

ԳԻՆԿՆԵՐԵՐ

2022

II. ԷԶՐԻԱԾԻՆ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ Գեորգ Մադոյեան

Լեզուատնական խմբագիր՝ Նարէ Սարգսեան

Տեխնիկական խմբագիր՝ Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բոգոյեան,
Խաչիկ Րաֆֆի Գազեր,
Վարդան Դերիկեան,
Աբրահամ Տէրեան,
Գեորգ Տէր-Վարդանեան**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer,
Vardan Devrikyan,
Abraham Terian,
Gevorg Ter-Vardanyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав


Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекиан,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Вардан Деврикян,
Абраам Терян
Геворг Тер-Вардanian**

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆԳՐԱԿՆԵՐ



ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 դեկտեմբերի, 2022 թ.)

*Սիրելի բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս,
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունը,
սերն ու բարեմաղթանքներն ենք բերում ամենքիդ:*

Նոր տարվա սեմին ենք մեր սպասումներով ու հույսերով, նաեւ անհանգիստ սրտով ու մտահոգություններով: Անցնող տարին մեր ժողովրդի համար զերծ չեղավ տագնապներից, ունեցանք նոր զոհեր ու կորուստներ: Հայրենիքը տակավին կանգնած է անվտանգային մարտահրավերների առջեւ. թշնամական նշանառության տակ են մեր սահմաններն ու խաղաղ բնակավայրերը: Արցախաբնակ Մեր զավակները աննկուն ոգով շարունակում են պայքարել հանուն իրենց անկախ կյանքի իրավունքի պաշտպանության՝ դիմագրավելով բազում նեղությունների՝ նաեւ Լաչինի ճանապարհի արգելափակումով պայմանավորված: Այսպիսի դժվարին իրավիճակում մենք չենք կարողացել մեր ազգային ներուժով լիարժեք միաբանվել հայրենիքը զորացնելու եւ ծանր կացությունից դուրս բերելու համար: Այսօր աշխարհն ալեկոծող աշխարհաքաղաքական սուր դիմակայությունները, որ տեղիք են տվել հոգեւոր, սոցիալական եւ տնտեսական բազմազան խնդիրների, նույնպես իրենց անմիջական ներգործությունն են ունենում մեր տարածաշրջանում ծավալվող զարգացումների վրա:

Այդուհանդերձ, առ Աստված ապավինությամբ Ամանորի այս երեկո մենք բարեմաղթանքներ ենք ուղղում միմյանց: Բարեմաղթանքներ՝ աշխարհի խաղաղության, մեր հայրենիքի՝ Հայաստանի եւ Արցախի ապահովության ու առաջընթաց կյանքի: Մեր հոգում առավելաբար ակնկա-

լիքներն են մեր կորուստների վերականգնման, հառնած խնդիրների հաղթահարման եւ ազգային մեր կյանքի նորոգության:


Սիրելիներ, քրիստոնյայի առաքելությունն է ապրել հույսով եւ լինել լավատես՝ համոզումով, որ, ինչպես ասում է առաքյալը, «հույսը երբեք չի ամաչեցնում» (Հռ. Ե. 5): Պետությունները կործանվում են, ժողովուրդները անհետանում ոչ թե փորձությունների ծանրությունից, այլ հույսի սպառումից, ապագայի հանդեպ տեսլականի եւ այն կյանքի կոչելու վճռականության բացակայությունից: Մեր ժողովրդի հարագնա երթը եղել է ու պիտի շարունակի մնալ Քրիստոսախարիսիս հավատքի, հույսի ու լավատեսության պատմություն: Այս վստահությամբ ապրենք ու գործենք՝ ամրորեն կառչած մեր ինքնությանը, մեր լինելիության անփոխարինելի գրավականներին՝ հայրենիքին, մեր լեզվին ու մեր հավատքին: Հեռու վանենք մեզանից վհատությունը, ապագայնությունն ու անտարբերությունը եւ հուսառատությամբ համախմբվենք ազգային ու պետական շահերի շուրջ: Գիտակցենք, որ այս է ուղին մեր վիրավոր հայրենիքի ապաքինման, Արցախի մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության, հայրենիք-սփյուռք միասնականությամբ լուսավոր գալիքի երաշխավորման եւ ազգիս հարատեւության: Ուստի, առաքելական հորդորով «արթո՛ն լինենք եւ սիրո ու հավատի զրահները հագնենք եւ փրկության հույսի սաղավարտը դնենք» (Ա. Թեսաղ. Ե. 8–9):

Հայրապետիս աղոթքն է, որ Ամենակարողն Աստված խաղաղության մեջ պահի մեր հայրենիքը եւ անփորձանք՝ հայրենյաց պաշտպան մեր զինվորներին: Տիրոջ օրհնությունն ու մխիթարությունն ենք հայցում ծանր կորուստներ կրած ընտանիքներին, ապաքինություն՝ վիրավորներին, շուտափույթ վերադարձ՝ գերեվարված ու անհայտ կորած մեր զավակներին:

Ամանորի սեմին միասնաբար հայցենք Ամենակալից, որ նոր տարում մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս պահպանի խաղաղ ու ապահով, սիրով միասնական ու շնորհի հայրենաշենն ու ազգաշահ իրագործումներ: Թող Տերը մեր կյանքում առատացնի հույսը մեր հայրենիքի ու ազգի ապագայի հանդեպ: Եւ թող Աստծու սերն ու շնորհները այսօր եւ միշտ ուղեկից լինեն մեզ եւ ամենքին:

Օրհնյալ, բարի նոր տարի:





**Տ. ԶԱՔԱՐԻԱ ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐԱԶԸ՝
ԽՈՍՎԱԾ ԵՐԵԽԱՆԻ Ս. ԱՆՆԱ ԵԿԵՂԵՑՈՒՄ**

(4 դեկտեմբերի 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այլ թէ ո՛չ ապաշխարիցե՛ք՝ ամենեւեան
նոյնպէս կորնչիքիք»

(Ղուկ. ԺԳ. 5):

Ս. Աննա եկեղեցու սիրելի՛ հավատացյալներ,

Ամեն Ս. Պատարագի ժամանակ Աստված կրկին խոսում է մեզ հետ՝ հորդորելով թողնել նախկին ընթացքն ու նորն ապրել Քրիստոսով, դառնալ «միասիրտ եւ միաշունչ» Վաղ Եկեղեցու հավատացյալների նման՝ զորացնելով Իր խորհրդական մարմինը՝ Եկեղեցին: Ինչպես յուրաքանչյուր կիրակի՝ Տիրոջ օրը, այսօր էլ եկել ենք աղոթաբույր այս եկեղեցին՝ Աստծու հետ հաղորդակցվելու, Նրա հետ զրուցելու, Աստծու խոսքով զորանալու եւ մեզ չզրկելու կենդանարար Ս. Հաղորդությունից: Բայց միեւնույն ժամանակ շատ կարեւոր է, որ ուշադրութեամբ լսենք Ս. Ավետարանը, հաղորդակից դառնանք օրվա խորհրդին եւ մեր տները վերադառնանք առավել զորացած եւ նոր դրական լիցքերով՝ ավետարանական թեկուզ մեկ պատգամ կամ արտահայտություն մտապահելով եւ կյանքում իրագործելով:

Ս. Ղուկաս ավետարանիչը պատմում է, որ Հիսուս քարոզչության ժամանակ Երուսաղեմից երկու լուր է ստանում: Մի խումբ գալիլիացիներ տաճար էին գնացել զոհ մատուցելու համար, որը խռովության պատճառ էր դարձել: Նույն այդ ժամանակ Պիղատոսի զինվորների եւ այս գալիլիացիների միջեւ կռիվ էր բռնկվել, երկուստեք զենք էին գործածել, եւ զոհաբերության ժամանակ գալիլիացիների արյունը խառնվել էր զոհի արյանը: Մյուս դեպքն առավել պատահականության արդյունք էր: Սիլո-

վամի աշտարակը փլվել էր, եւ տասնութ երուսաղեմցի մնացել էր փլատակների տակ եւ մահացել: Բնականաբար, մարդիկ քննարկում էին այս երկու միջադեպերը, եւ դրանք համարում Աստծու պատիժ: Բայց բոլորին հետաքրքրում էր, թե ինչ է այս դեպքերի մասին մտածում հենց Հիսուս: Տերն ամենեւին չի բացառում Աստծու բարկության հանգամանքը, քանզի չէին օգտվել իրենց շնորհված ժամանակից, բայց նաեւ հորդորում է տեղի ունեցածը դիտարկել ավելի լայն համապատկերում: Չէ՞ որ, բացի նշված գալիլիացիներից եւ երուսաղեմցիներից, էլի մեղավորներ կային նույն այդ ժամանակ, որոնց ապաշխարությանն ու դարձի գալուն էր սպասում Աստված: Ուստի Տերը երկու դեպքի համար էլ զգուշացնում է բոլորին. «Եթե չապաշխարեք, ապա ամենքդ էլ նույնպես կկորչեք» (Ղուկ. ԺԳ. 5):

Ապաշխարության կամ ապաշխարելու Տիրոջ հրավերն ուղղված է մեզանից յուրաքանչյուրին, քանի դեռ ապրում ենք այս աշխարհում եւ մտեղեն մարմնում: Սթափեցնող նույն այս կոչով էին մարդկանց դիմում Ս. Հովհաննես Մկրտիչը, Հիսուս եւ Նրա առաքյալները: Ուրեմն սա եւս մեկ անգամ շեշտում է ապաշխարության կարեւորությունը մեր կյանքում: Եթե Ս. Մկրտությունը Եկեղեցուն անդամակցելու եւ քրիստոնյա դառնալու խորհուրդն է, ապաշխարությունը հոգեւոր ճանապարհորդության սկիզբն է, որն առաջնորդում է մեզ այս կյանքում դեպի Աստված: Այն մտքի եւ սրտի փոփոխությունն է՝ Քրիստոսով նոր մարդ դառնալու եւ վկայելու արարչաստեղծ պատկերի ու նմանության մասին: Իրականում քրիստոնյաներիս կյանքն ապաշխարության անվերջանալի շրջան է, երբ հաստատակամությամբ եւ համոզումով ցանկանում ենք ազատվել մեղքերից եւ մոտենալ Աստծուն: Ուստի ապաշխարել նշանակում է ոչ թե տխրությամբ եւ ափսոսանքով հետ նայել, այլ հույսով լցված՝ դեպի առաջ, ոչ թե հուսահատվել մեղքերի բազմությունից, այլ զղջալ ամեն գործած մեղքի համար՝ ապավինելով Աստծու ողորմությանն ու անբավ սիրուն: Երբ այս գիտակցությամբ ենք շարժվում, Աստված էլ տալիս է համապատասխան ուժն ու համբերությունը՝ դիմագրավելու մեղքերին, կյանքի բազում փորձություններին ու մարտահրավերներին: Բայց շատ կարեւոր է, սիրելի՛ քրիստոնյա եղբայրներ եւ քույրեր, գիտակցաբար մեկ օր սկսել ապաշխարության շրջանը, պարզապես նման որոշում ընդունել եւ արթնանալ մեղքի թմբիրից ու փոխել կյանքի ընթացքը: «Վարք հարանց»-ում այս մասին հետաքրքիր մի պատմություն կա, որում նկարագրվում է ժամանակի սրբակենցաղ եւ սիրելի մարդկանցից՝ Աբբա Սի-

սոյի մահը: Եղբայրները հավաքվել էին նրա մահճի մոտ՝ քաջ գիտակցելով, որ իրենց ուսուցչի կյանքի վերջին վայրկյաններն էին: Դժվար էր համակերպվել հարազատի կորստին, որն իրենց համար ճշմարիտ քրիստոնյայի օրինակ էր: Եւ հանկարծ նրանք նկատեցին, որ Աբբա Սիսոյի շուրթերը շարժվում են, ասես նա խոսում էր ինչ-որ մեկի հետ: Ուստի եղբայրներից մեկը հարցրեց. «Հայր, ո՞ւմ հետ ես խոսում»: Ծերը պատասխանեց. «Հրեշտակները եկել են ինձ տանելու, իսկ ես նրանցից մի փոքր ավելի ժամանակ եմ խնդրում ապաշխարելու համար»: Աշակերտները զարմացած ասացին. «Դու դրա կարիքը չունես»: Իսկ Աբբա Սիսոն պատասխանեց. «Իրականում վստահ չեմ, թե արդյո՞ք սկսել եմ անգամ ապաշխարելը»: Հոգեւոր հարուստ փորձառությանը հոգեւոր այս ծերի պատասխանը միեւնույն ժամանակ հարցադրում է մեզ՝ սկսել ենք ապաշխարելը, թե՞ սպասում ենք ինչ-որ հրաշքների:

Ապաշխարության հոգեւոր ճանապարհորդության առաջին հանգրվանը սրտանց զղջումն է, երբ գիտակցում ենք մեր գործած մեղքի ծանրությունը եւ իսկապես ցավ ապրում դրա համար: Սիրելիներ, առանց զղջման արցունքների՝ փրկություն չկա: Առանց սրտանց զղջման՝ հնարավոր չէ մոտենալ Աստծուն, քանզի մեղքը խոչընդոտ եւ պատնեշ է մարդ—Աստված հարաբերության համար: Համատարած անզղջությունը մեզ կտրել է իրականության զգացողությունից, ապրում ենք անհասկանալի ձեւով, ասես մեկ օր պատասխան չենք տալու մեր արածի եւ չարածի համար: Այս չապաշխարած վիճակը դրսևորվում է ինչպես անհատական, այնպես էլ հավաքական մակարդակներում: Ուշադիր նայենք այսօրվա մեր կյանքին, մեր երկրին եւ մարդկանց պահվածքին. զղջում չկա ընդհանրապես, մեղավորներ չկան. ի՞նչ է, բոլորս այդքան արդար ենք, կարո՞ղ է նույնիսկ հրեշտակների թեւեր ունենք: Այդ դեպքում այսքան խոտելի երեւույթները որտեղից են մեր մեջ՝ խաղամոլություն, պոռնկություն, սեռով պայմանավորված՝ արհեստական վիժումներ եւ այլն: Զարմանալի է, բայց ոչ ոք՝ պարզ շինականից մինչեւ երկրի ղեկավար, չի ընդունում, որ ինչ-որ տեղ կամ ինչ-որ բանում թերացել է, սխալներ է գործել, որոնց համար արժե ներողություն խնդրել եւ ապաշխարել: Մենք մեր մեղավորության պատճառը հիմնականում համարում ենք ուրիշներին, չենք տեսնում մեր սեփական սխալները, ուստի անիմաստ է խոսել նաեւ զղջալու մասին: Եւ այս իրավիճակում մեղավոր են բոլորը՝ նախկինները, ներկաները, աշխարհագրական դիրքը, հարեւանները, բարե-

կամները, բայց ոչ երբեք՝ ես: Այնինչ ապաշխարության սկիզբը մեզ զգուշացնում եւ հորդորում է հասկանալ, գիտակցել սեփական մեղքը, զղջալ դրա համար, խոստովանել եւ թողություն գտնել: Եթե մենք մեղավոր չենք եւ արդար ենք, ապա կարիք չունենք նաեւ Եկեղեցու, մեր հայացքն Աստծուն շրջելու: Սա էլ իր հերթին նշանակում է, որ բոլորս սրբեր ենք, բայց մի՞թե սա է ճշմարտությունը, որքան ենք շարունակելու ապրել ինքնախաբեություն՝ եւ անհմաստ ինքնաարդարացմամբ: Չէ՞ որ մենք հավատում ենք սրտերը, անգամ երիկամները քննող եւ մեզ շատ լավ ճանաչող Աստծուն, որ անհամբեր սպասում է մեր ապաշխարությանը, դարձի գալուն: Անկասկած, հենց գիտակցված ապաշխարությունն էլ մեզ կբերի նորանոր հաղթանակներ եւ ձեռքբերումներ ինչպես հոգեւոր, այնպես էլ հասարակական կյանքում: Բայց քանի դեռ մեղքերի մեջ ենք, չենք ցանկանում ապաշխարել եւ ազատվել դրանցից, նույնիսկ երբեմն չենք ցանկանում ընդունել մեր մեղավոր լինելը, չենք կարող հաղթել ո՛չ մեր եսին, ո՛չ էլ երեւցող եւ աներեւույթ թշնամիներին:


Ապաշխարության խորհրդի մյուս փուլը խոստովանությունն է. «Նախ դու խոստովանիր անօրենություններդ, որ արդարացվես» (Ես. ԽԳ. 26): Խոստովանությունը մեղքերից ազատվելու լավագույն միջոցն է՝ այս կյանքում թողություն գտնելու, դրանք խոստովանելով քահանայական ձեռնադրություն եւ օծում ունեցող հոգեւորականի առաջ: Սա հոգեւոր սխրանք է, հաստատուն որոշում՝ այլեւս չկրկնելու խոստովանված մեղքերը՝ «ըստ մեր տկարության»: Խոստովանելիս չպետք է լինել շատախոս կամ դատարկաբան, այլ խոսել ըստ էության: Հայոց Եկեղեցում խոստովանության երկու ձեւ ունենք՝ ընդհանրական եւ անհատական: Ընդհանրականն ամենքդ էլ տեսնում եք, երբ Ս. Պատարագից առաջ կամ ընթացքում մեկը կարդում է զանազան մեղքերի մի շարան, ամեն պարբերությունից հետո բարձրաձայն ասում «Մեղայ՛ Աստուծոյ», իսկ հոգեւորականը պատասխանում է. «Թող Աստված թողություն շնորհի»: Իսկ անհատական խոստովանության ժամանակ քրիստոնյան գնում է հոգեւորականի մոտ, խոստովանում իր գործած մեղքերը, որի վերջում մեղքերի թողություն է ստանում հոգեւորականից հատուկ բանաձեւի միջոցով: Անշուշտ, մարդկայնորեն անհատական խոստովանության գնալը դժվար է, բայց մենք մեր մեջ պետք է ուժ գտնենք եւ հատկապես ծանր մեղքերը քավենք անհատական խոստովանությամբ: Միշտ հիշեք, սիրելի՛ քրիստոնյաներ, որ կարող ենք թողություն ստանալ մեր մեղքերի համար

այնքան ժամանակ, քանի դեռ այս մարմնում ենք: Մահից հետո այլևս ոչինչ չենք կարող անել: Ուրեմն՝ եկե՛ք օգտվենք Աստծու ընծեռած այս հնարավորությունից, որպեսզի վերջին դատաստանին պարզերես կանգնենք երկնավոր Դատավորի առաջ, մեր կյանքը փոքր-ինչ թեթևացնենք եւ մերձենանք Աստծուն: Մի՛ սեւեռվեք այս դեպքում նաեւ հոգեւորականի անձի եւ կենցաղավարության վրա, քանզի Հիսուս նրանց է տվել մեղքերն արձակելու եւ կապելու իշխանությունը, այլ փնտրե՛ք իմաստությունը եւ շատ աղոթեք հոգեւոր ձեր հովիվների համար:

Եւ վերջապես Ապաշխարության խորհրդի վերջին արարը հատուցումն է, երբ քահանան իմաստությունամբ եւ իր հոգեւոր փորձառությանմբ համապատասխան դեղն է նշանակում խոստովանվողի համար, ժամանակ տալիս ինքնաանդրադարձի՝ վերջում թույլ տալով նաեւ ճաշակել Տիրոջ Մարմինն ու Արյունը: Հետեւե՛ք եւ պիտի տեսնեք, թե ինչպե՛ս է լուսավորվում, պայծառանում խոստովանվածի երեսը Ս. Հաղորդությունից հետո: Սա՛ է հաղթանակը մեղքի դեմ, երբ մեղքերից մաքրված՝ կարողանում ես առավել անմիջական շփվել Աստծու հետ: Այլ խոսքով՝ զղջմանը, խոստովանությանը եւ դրանց համար հատուցմանը հաջորդում է հաղթանակը: Աստված պարզապես ցանկանում է տեսնել մեր դարձի գալը, իրական զղջումն ու կյանքի փոփոխությունը:

Մշտապես հիշենք այսօր եկեղեցում ընթերցված Հիսուսի խոսքերը, ապաշխարությունը դարձնենք մեր կյանքի անբաժանելի եւ շարունակական գործողություն, ձգտենք սրբության, կատարելության, եւ այդ ժամանակ Աստված անպայման կլսի աղոթքի մեր ձայնը, կտեսնի փոխվելու մեր հաստատակամությունը եւ հաղթանակներ կշնորհի:

Թո՛ղ հարուցյալ Տերն ամենքիս պահի ու պահպանի խաղաղության եւ սիրո մեջ, այժմ, միշտ եւ հավիտյանս. ամեն:



Տ. ՊԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՄԱՐԱԶՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 դեկտեմբերի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Քույրեր եւ եղբայրներ, մեր կյանքի ընթացքում հաճախ է լինում, որ պատահում են այնպիսի իրավիճակներ, երբ պետք է ընտրութիւն կատարենք. հեշտ ընտրութիւն՝ այստեղ գնալ, այն վայրը գնալ, ուխտագնացութեանը որ եկեղեցին այցելել եւ այլն: Բայց եւ շատ դժվար, շատ ծանր ընտրութիւնների առջեւ ենք կանգնում: Երբեմն նաեւ պետք է այդ ընտրութիւնը կատարենք իմաստութեամբ եւ Աստուծոց միշտ խնդրում ենք, որ մեզ ուժ եւ իմաստութիւն տա, որ կարողանանք ճիշտ ընտրութիւնը կատարել: Այսօրվա ամբողջ սուրբգրային ընթերցանութիւնն ընտրութեան, ավելի ճիշտ ասեմ՝ նախապատվութեան կամ նախընտրութեան մասին է, թե մարդը ինչն է առաջնային դարձնում իր կյանքում: Առհասարակ ասում են, որ այն մարդն է հաջողակ, որ գիտի, թե որն է իր կյանքի նախապատվութիւնը, եւ երկրորդականն ավելի չի կարենորում իր կյանքում, քան առաջնայինը: Եւ բնական է նաեւ, որ այն ժողովուրդներն են հաջողում, որոնք գիտակցում եւ հասկանում են, թե իրենց կյանքում որն է առաջնայինը:


Սիրելիներ, ավետարանական մի հատված, մի դրվագ, որ սարկավագ եղբայրն ընթերցեց քիչ առաջ, ներկայացնում է մի հարուստ, տանտեր մարդու պատմութիւն, որ ճաշկերույթ է կազմակերպում եւ շատ մարդկանց է հրավիրում: Իր ծառային ասում է, որ գնա հրավիրչալներին հայտնի, թե ճաշն արդեն պատրաստ է, թող գան: Եւ հետաքրքիր է, որ մեկը մշուսի հետեւից սկսում են հրաժարվել այդ մարդիկ. մեկն ասում է, որ ագարակ է գնել, պետք է գնա, ստուգի եւ չի կարող գալ. «Ինձ հրաժարված համարիր»: Մյուսն ասում է, որ հինգ եզ է գնել եւ դրանց պետք է ստուգի: Մյուսն ասում է՝ «Կին եմ առել, չեմ կարող գալ»: Եւ, այսպես, այդ մարդը զայրանում է եւ իր ծառաներին ասում է. «Գնացե՛ք բոլոր աղ-

քատներին, խեղանդամներին, կաղերին, կույրերին հրավիրե՛ք եւ ներս բերե՛ք»: Գալիս եւ լցվում են այդ մարդիկ, եւ ավելի շատ տեղ է լինում այդ սրահի մեջ, եւ ասում է. «Գնացե՛ք բոլոր մայթերից ու ճանապարհներից հավաքե՛ք եւ բերե՛ք»: Այդպես գալիս եւ լցվում են, եւ սկսվում է խնջույքը: Բնականաբար երբ պատմում եմ այս հարուստ տանուտիրոջ խնջույքի մասին, ամենքս մտովի կարծում ենք, որ սա Աստծու խնջույքի մասին է: Թերեւս, պարզ մի խնջույք չէ, մի ճաշկերույթ չէ, այլ այն խնջույքն է, որին յուրաքանչյուր օր մարդ հրավիրված է մասնակցելու, եւ այստեղ է, որ նա ընտրության առջեւ է կանգնում: Տեսե՛ք, երեք մարդ մերժեց. մեկն ասաց, որ ագարակ է գնել, պետք է գնա ստուգի, վստահաբար՝ ստեց, քանի որ մեկը չէր կարող ագարակ գնել՝ առանց նախապես ստուգելու, պարզապես ստեց եւ չցանկացավ մասնակցել, գնալ այդ ճաշկերույթին: Մյուսն ասաց, որ եզներ է գնել եւ կարեւորեց ավելի երկրավորը, կարեւորեց նյութականը եւ ոչ թե այն, ինչ-որ մեծապես խոստում է տրված՝ այդ մեծ ճաշկերույթին մասնակցելը: Եւ մյուսն էլ ասաց, որ կին է առել ու չմասնակցեց: Թերեւս ամենից ընդունելին այս՝ երրորդ տարբերակն էր, բայց այդուհանդերձ՝ Աստված ասում է, որ որեւէ բան քեզ չպետք է հեռու պահի Աստծու հետ կատարյալ միությունից: Եւ երբ այդ երեք մարդիկ շընդունեցին Աստծու հրավերը՝ այդ մեծատունի հրավերն այս պարագայում, տանուտերը գնաց բոլոր նրանց հավաքեց, ովքեր պիտի գային, եւ ամենակարեւորը՝ ումից նա սպասում չուներ:

Այսօրվա ընթերցանության մեջ նաեւ ասվում է, որ մենք նրանց պետք է տեղ տանք, նրանց պետք է հյուրասիրենք, ումից ընդհանրապես սպասելիք չունենք: Սովորաբար մենք շատ տկար ենք, չէ՞... այն մարդկանց ենք ավելի հարգում, ումից սեր, հարգանք ենք սպասում: Մենք նրանց ենք մեծ պատիվ տալիս, ովքեր իշխանություն ունեն, նրանց ենք ժամանակ տալիս, ովքեր կարող են ազդեցիկ քայլ գործել, իսկ ովքեր ազդեցիկ չեն, աղքատ են, տկար են եւ այլն, նրանց կարող ենք անգամ արհամարհել: Ահա այսօրվա ընթերցանությունը նաեւ մեր ուշադրությունն է հրավիրում այս խնդրի վրա, որ Աստված մեզանից երբեւէ սպասում չունի, Աստված մեզ այսօր հրավիրել է այստեղ՝ տաճար, ոչ թե որ մեզանից սպասում ունի կամ ցանկանում է անպայման Իրեն փառավորենք, ո՛չ... մեզանից սպասում չունի, բայց նա գիտե, թե որքան մեծ է շնորհը մեզ համար, որ գալիս ենք այստեղ եւ պետք է այս տաճարում հաղորդվենք եւ պետք է այս տաճարում միասին այս հանդեսին, այս խնջույքին

մասնակցենք: Եւ, իսկապէս, հոգեւոր հայրերի, քահանա հայրերի հետ այս խորանի վրա կանգնած, նաեւ սարկավագ եղբայրների, մի պահ այդ խնջույքի պատկերացումն ունեցա այս պատարագի ընթացքում: Եւ հետեւաբար Աստված, հենց առանց սպասելու մեզանից, ասում է. «Դուք էլ այդ ձեւով պետք է վարվեք, ինչպէս որ երկնքի արքայութեան կերպն է, ձեւն է: Երկնքի արքայութիւնում մեզնից ոչ մի բան չեն սպասում, սիրելիներ, եւ Աստված ասում է. «Դուք եւս մի՛ սպասեք որեւէ մեկից որեւէ լավութիւն, որեւէ բարիք», այլ դուք նախ եւ առաջ հյուրասեր եղե՛ք, դուք նախ եւ առաջ ընդունե՛ք մարդկանց եւ այդ ձեւով Աստծու ցանկութիւնն իրագործած կլինեք: Հետեւաբար, սիրելիներ, երբ ընտրութեան առջեւ ենք մենք կանգնում, պետք է հասկանանք, թե Աստված մեզանից ինչ է ցանկանում: Մենք մշտապէս կարող ենք մերժել Աստծու հրավերը, Աստված ամեն վայրկյան, յուրաքանչյուր պահ ասում է, որ Իր հետ կատարյալ միասնութիւնը պետք է վայելենք, բայց մենք, միեւնույնն է, աշխարհի ամեն տեսակի զբաղմունքներով տարված, չենք ընդունում Աստծու այդ հրավերը: Նաեւ, սիրելիներ, հետաքրքիր է, որ այն մարդիկ, որոնց հրավեր էր ուղարկել տանուտերը, նախկինում թերեւս ցույց էին տվել, թե այդ տանուտիրոջ բարեկամներն են, մտերիմներն են, մի պահ այնպէս էին կեղծավորութեամբ խաղացել այդ մարդու առաջ, որ մարդն առանց մտածելու, առանց երկմտելու՝ հրավերն ուղղակի ուղարկել էր այդ երեք մարդկանց, բայց այն պահին, երբ նրանք պետք է ցույց տային իրենց հավատարմութիւնը, հակառակը ցույց տվեցին՝ իրենց կեղծավորութիւնը: Եւ սա, սիրելիներ, եւս պետք է մեզ համար մտածումի առիթ դառնա, մենք էլ երբեմն ականատես ենք լինում կամ կարող է հենց մենք լինենք այն մարդիկ, որ ցույց տանք, թե Աստծու բարեկամներն ենք: Կարող է երբեմն-երբեմն գալիս ենք պատարագի, կարող է երբեմն-երբեմն բարի գործեր ենք անում, ժամանակ առ ժամանակ աղոթում ենք կամ Սուրբ Գիրք ենք ընթերցում եւ այդպէս ձեւանում ենք, թե Աստծու բարեկամներն ենք: Եւ գալիս ենք լցնում ենք տաճարներ, բայց իրականում մեր հոգին այստեղ չէ, մեր հոգին ագարակներում է, մեր սրտերն ու մտքերը եզների հետ են եւ, թերեւս, կանանց հետ: Ուրեմն, սիրելիներ, այսօրվա Ավետարանի ընթերցանութիւնը մեզ ասում է, որ հետեւող պետք է լինենք Տիրոջ պատգամին, հետեւող պետք է լինենք Տիրոջ հրավերին, ընդառաջ պետք է գնանք այդ հրավերին անկեղծութեամբ, եւ որ ամենակարեւորն է, հասկանանք թե որն է վերջիվերջո մեր կյանքի նախա-

պատվութիւնը, որն է ամենակարեւորը: Իմ խորին համոզմամբ՝ մարդու կյանքի ամենակարեւոր հանգամանքը ձգտումն է երկնքի արքայությանը, ձգտումն է հավիտենական այդ հանդեսին, ինչն Աստված այսօր ավետարանական ընթերցանության միջոցով մեզ փոխանցում է: Ասում է. «Սա մանրակերտն է այն մեծ հավիտենական հանդեսի, որին Ես ձեզ հրավիրում եմ մասնակցելու»: Այս իրականութիւնը, Աստծու այդ մեծ հանդեսը կամ Աստծու այդ մեծ խնջույքն է, որին մենք պետք է ձգտենք մեր քայլերով, մեր խոսքերով եւ մեր գործերով: Սիրելիներ, այսօրվա այս սուրբ տաճարում հավաքվելու մեր առիթը եւս նմանատիպ մի հանդես է, Սուրբ Պատարագ է, խնջույք է՝ Աստծուն փառավորելու, Տիրոջ ողորմութիւնը հայցելու: Մենք եւս կարող են այստեղ ձեւանալ, թե սուրբ ենք, բայց Աստված բոլորիս սրտերը գիտի եւ ուրեմն թող ների մեր մեղքերը, մեր մտքերը բացի, որ կարողանանք ճիշտ ընտրութիւն անել եւ դառնալ բաժնեկիցը, մասնակիցը, հրավիրյալը, հրավերն ընդունողը Տիրոջ խնջույքի: Թող այս ճամփորդության մեջ Աստված ամենքիս ուժ եւ կարողութիւն տա, հավիտյանս հավիտենից, ամեն:



Տ. ՄՈՎՍԵՍ ՎԱՐՊԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱՊԵՆ

(18 դեկտեմբերի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, այսօրվա Ավետարանում ընթերցվեց մի հատված, որտեղ խոսվում էր ծառայասիրության մասին: Ծառայասիրությունը՝ որպես հիմնարար առաքինություն, բնութագրում է ճշմարիտ քրիստոնյային: Մի օր, երբ մեր Տեր Հիսուս Քրիստոս խոսում էր հավատքի ու ներողամտության մասին, անդրադարձավ նաեւ ծառայասիրությանը եւ ասաց. «Ձեզանից ով է այն մարդը, որ եթե հովիվ ծառա ունի, եւ վերջինս դաշտից հոգնած տուն վերադառնա, պիտի ասի. «Գնա՛, կե՛ր, հանգստացի՛ր», այլ հակառակը՝ նրան չի ասի «Ե՛լ, գոտիս կապի՛ր, կերակուրս պատրաստի՛ր, սպասավորի՛ր ինձ, մինչեւ որ ես կուտեմ, կխմեմ, այնուհետեւ դու ինքդ կգնաս, կուտես եւ կխմես», եւ միթե սրա համար շնորհակալություն պետք է հայտնի ծառային», եւ այնուհետեւ ավելացնում է. «Դուք էլ երբ կատարեք ձեզ հանձնարարվածը, ասացե՛ք՝ «Անպիտան ծառաներ ենք, արեցինք այն ինչ պարտավոր էինք անելու»»: Սիրելի՛ հավատացյալներ, Սուրբ Գիրքը բազմաթիվ տեղերում է խոսում ծառայության, ծառայասիրության մասին, «ծառայել» բառը նորություն չէր նաեւ Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի ժամանակ, բայց այդ ժամանակ գործածվում էր նսեմացուցիչ իմաստով:

Ծառա լինելը՝ ծառայելը, հատուկ էր ստրուկներին, գերիներին, սակայն մենք գիտենք, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ իբրեւ արժեքների մեծագույն հեղաշրջողը, այս բառը եւս վերափոխեց, իմաստափոխեց եւ այն վերածեց փառքի, մեծության եւ գեղեցկության:


Մանկուց ի վեր մեր կյանքը մրցակցություն է, մենք մեր շրջապատում միշտ մրցակցության մեջ ենք՝ մեծ լինելու, առաջինը լինելու եւ գնահատված լինելու, սիրված լինելու: Եւ շատ հաճախ մեզ անհանգստացնում տրտմեցնում է լիարժեք գնահատված չլինելու միտքը, սակայն

անդրադառնալով այսօրվա Ավետարանին՝ հասկանում ենք, որ Աստված մեզ ասում է՝ ծառայել ուրախությամբ, սիրով եւ առանց վարձի սպասումի: Սա մեզ հիշեցնում է մեր պարտականությունների մասին, որ ունենք հանդեպ ազգի, եկեղեցու, միմյանց եւ Աստծու նկատմամբ, որովհետեւ սաղմոսերգուն ինքն էլ ասում է. «Ծառայե՛ք Տիրոջն ուրախությամբ, Նրա առաջ երգե՛ք ցնծությամբ»: Սակայն սա չի նշանակում, թե մենք չպիտի գնահատված լինենք, այլ ավելի շատ պետք է մտածենք, թե մենք որքան ենք գնահատում: Կարծես Աստված մեզ ասում է, թե երբ իբրեւ մարդ մեր մարդկությունն ենք ցույց տալիս, բարիք ենք գործում, ստեղծագործում ենք կամ ստանձնած առաքելության մեջ մեր պարտականություններն ենք կատարում, դա մեր բնական պարտքն է, եւ դրա համար շնորհակալություն չպետք է ակնկալենք եւ դա պետք է կատարենք սիրով եւ նվիրումով, ինչպես մեղուն, երբ մեղր է տալիս, դա իր բնությունն է, իր պարտականությունն է, չի սպասում շնորհակալության եւ գնահատանքի:

Այդպես եւ մեր Տեր Հիսուս Քրիստոս է պատգամում մեզ մեր պարտականությունները կատարել սիրով՝ առանց շնորհակալության ակնկալիքի: Կլինի դա՝ լավ, իսկ եթե չի լինի, ամենեւին այդ չէ նպատակը կատարած գործերի: Հիշում ենք Ավետարանից այրի կնոջ լուծալի պատմությունը: Այրի կինը երկու լուծա նվիրեց տաճարին. ոչ ակնկալում էր որեւէ մեկից շնորհակալություն, ոչ իսկ կարծում էր, թե որեւէ մեկը կտեսնի: Բայց Աստված տեսավ, պատմեց Իր աշակերտներին, եւ երկու հազար տարի շարունակ պատմվում է: Այսինքն՝ պետք է կատարել այն, ինչ մենք պարտավոր ենք կատարել իբրեւ մարդ՝ առանց ակնկալելու հատուցում, որը չգիտենք՝ երբ կլինի. կլինի՞ արդյոք, թե՞ ոչ, այս կյանքում կլինի՞, թե՞ հավիտենական:

Աշխարհում շատ հայտնի մարդիկ իրենց կյանքի ընթացքում երբեւէ գնահատված չեն եղել, այսօր հարկ է հիշել նաեւ այլ օրինակներ ծառայասիրության: Մեր օրերում էլ դրանք քիչ չեն: Հիշենք հանուն հայրենիքի նահատակվածներին, որոնք իրենց կյանքը տվեցին մեզ համար՝ դրսևորելով ծառայասիրության բարձր որակներ: Այսօր ծառայասիրություն են դրսևորում մեր սահմաններին կանգնած զինվորներն ու սպաները: Այսօր ծառայասիրություն են դրսևորում Արցախում ապրող մեր հայրենակիցները, որոնց համար, հավարտ Սուրբ Պատարագի, ազգիս Վեհափառ Հայրապետ Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ պետք է կատարվի

խաղաղության եւ զորակցության աղոթք: Արդ խնդրենք, որ Աստված մեզ զորություն տա՝ սիրով ծառայելու, սիրով կատարելու մեր պարտականությունները եւ ուրախությամբ ծառայելու Տիրոջը, որի աստվածային սերը, շնորհները թող լինեն ձեզ հետ եւ ամենքիս հետ. ամեն:



**Տ. ՆԱՐԵԿ ՔԱՅԱՆԱ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(25 դեկտեմբերի, 2022 թ.)

Սիրելի՛ փոքրեր եւ եղբայրներ, այսօր հատկանշական օր է անձիս համար. շուրջ ֆառասուն օր առաջ ես եւ իմ հինգ սարկավագ եղբայրները, Աստծու կամոք եւ օրհնությամբ ազգիս Վեհափառ Հայրապետի, ձեռնադրվեցինք ֆահանա՝ մեր սպասավորությունը բերելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն եւ հայ ժողովրդին: Փառք եւ գոհություն եմ հայտնում Բարձրյալին, որ ինձ՝ նվաստիս, արժանացրեց գտնվելու այստեղ՝ Ս. Գայանե վանքում եւ իմ անդրանիկ Պատարագը մատուցելու:

Նախ եւ առաջ իմ որդիական երախտագիտությունն եմ հայտնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իր հայրական սիրո եւ հոգատարության համար:

Խոնարհումս եմ հայտնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարպետ Մուշեղ եպս. Բաբայանին՝ օգնական լինելու եւ բարի խորհուրդների համար:

Երախտապարտությունս եմ հայտնում Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս. Գալստանյանին՝ ստանձնելու համար իմ եւ օծակից եղբայրներիս հոգեւոր ծնող լինելու պատասխանատու պաշտոնը:

Շնորհակալությունս եմ հայտնում Գետրգյան հոգեւոր նեմարանի տեսչությանը, դասախոսական եւ աշխատանքային ողջ անձնակազմին, որ իրենց ներդրումն են ունեցել մեր՝ հոգեւորականի ձեւավորման եւ ֆահանայական կոչմանը հասնելու գործում, եւ ի մասնավորի շնորհակալությունս եմ հայտնում Մայր Աթոռի ողջ միաբանությանը եւ բոլոր նրանց, ովքեր այս տարիների ընթացքում իրենց հորդորներով, խորհուրդներով եւ խրատներով ինձ ամրացրել են՝ հոգեւոր կյանքում անսասան կանգնելու եւ Տիրոջ կենարար խոսքը փարզելու:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

Ձի ամենայն ուր բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեցի՛. և ուր խոնարհեցուցանէ՛ զանձն՝ բարձրացի՛ (Ղուկ. ԺԼ. 14):

Սիրելի՛ հավատացյալներ, այսօրվա ավետարանական ընթերցումը մեզ ներկայացնում է փարիսեցու եւ մաքսավորի առակը, որտեղ Քրիստոս մեզ սովորեցնում է ոչ թե աղոթել, այլ թե ինչ կեցվածք պետք է ունենանք աղոթքի ժամանակ: Երկու հոգի բարձրանում են Տաճար աղոթքի, մեկը փարիսեցի էր, իսկ մյուսը՝ մաքսավոր:

Սիրելիներ, առակը ճիշտ ըմբռնելու համար նախ հասկանանք՝ ովքեր էին փարիսեցիները, եւ ովքեր՝ մաքսավորները: Փարիսեցիները մեծ հեղինակութուն էին վայելում հրեա ժողովրդի շրջանում, նրանք իրականացնում էին Օրենքի տառացի կիրառումը: Ավետարաններից ակնհայտ է դառնում, որ նրանք շաբաթը երկու անգամ ծոմ էին պահում: Բարեպաշտության եւ Օրենքի պահպանության ծայրահեղ դրսեւորումներն ի վերջո նրանց հասցրին հոգեւոր մեծամտության եւ ձեւապաշտության:

Իսկ մաքսավորները հարկահավաքներ էին: Քրիստոսի օրոք Հռոմեական գերիշխանության տակ գտնվող հրեական գավառներում հարկահանության գործը վստահված էր տարբեր շրջանների՝ ազգությամբ հրեա հարկահավաքներին, որոնք օգտագործելով իրենց դիրքը՝ մեծ չարաշահումներ էին թույլ տալիս: Սա էր պատճառը, որ հրեաները նրանց համարում էին մեղսագործներ, եւ հրեական միջավայրում ատելի էին համարվում:

Առակի մեջ ներկայացված առաջին անձը՝ փարիսեցին, մի կողմ կանգնած ինքն իրեն այս աղոթքն էր ասում. «Աստված իմ, շնորհակալ եմ Քեզնից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպես հափշտակողները, անիրավներն ու շնացողները, եւ կամ ինչպես այս մաքսավորը: Այլ ես շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում եւ տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամուտից»: Փարիսեցին իրականում չէր գնացել Աստծուն աղոթելու, այլ աղոթում էր ինքն իր հետ: Նա աշխարհին նայում էր վերելից ներքե՛լ ինքնարդարացման եւ գերազանցության դիրքերից: Մինչդեռ ճշմարիտ աղոթքը պետք է մատուցվի Աստծուն: Փարիսեցին եկել էր Աստծու առաջ իր մասին վկայելու, եկել էր ասելու, թե որքան լավն է ինքը:

Տաճարում աղոթքի կանգնած երկրորդ անձը մաքսավոր էր: Նա կանգնած էր հեռու եւ նույնիսկ չէր ուզում աչքերը բարձրացնել դեպի երկինք, այլ ծեծում էր կուրծքը եւ ասում. «Աստված, ներիր ինձ՝ մեղավորիս»: Մաքսավորը գիտակցում էր իր կյանքի անարդարությունը, իր մեղքը եւ ցանկանում էր դուրս գալ իր մեղավոր վիճակից: Սեփական մեղքերը տեսնելը մեծ առաքինություն է, եւ հակառակը՝ այդ հատկանիշի բացակայությունը մարդու հոգու համար մեծագույն արատ է: Եւ Քրիստոս եզրակացնում է, որ այդ կոտորված սրտով աղոթքն էր, որ ընդունելի դարձրեց մաքսավորին Աստծու առաջ, քանի որ ով բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, իսկ ով խոնարհեցնում է իր անձը, պիտի բարձրանա:

Շատ հաճախ մենք եւս փարիսեցու պես մեզ համեմատում ենք մեզանից ավելի մեղավորների հետ եւ փորձում ենք արդարացնել մեր հանցանքները: Սակայն սա մեծ մոլորություն եւ ինքնախաբեություն է: Աղոթքի ժամանակ պետք չէ համեմատվել այլոց հետ եւ վեր բարձրացնել մեր անձերը. միայն Աստված է տեսնում մեր սրտերը, քանի որ մարդիկ երեսին են նայում, իսկ Աստված՝ սրտին (Ա. Թագ. ԺԶ. 7): Այլոց հետ համեմատվելով՝ մենք կամա թե ակամա դատում ենք մեր նմանին: Չիմանալով մարդու ներքին կյանքը եւ ապրումները՝ անկարելի է դատել նրա արարքները: Անկասկած այն ամենը, ինչ փարիսեցին ասաց, ճշմարիտ էր, նա ծոմ էր պահում, նա տալիս էր իր տասանորդը: Նա ընդհանրապես նման չէր մաքսավորին: Բայց այստեղ հարցն այն է, թե ում հետ ենք մեզ համեմատում: Յուրաքանչյուրին Աստված արդարացնում է անհատաբար: Մեզ համար կատարելության օրինակը Քրիստոսն է, ուստի մեր անձերը համեմատենք ոչ թե ուրիշների, այլ Քրիստոսի հետ: Ինչպիսին կցանկանայինք լինել Աստծու առջեւ: Եթե այս մտածումով մոտենանք աղոթքին, երբեք չենք բարձրացնի մեր անձերը, չենք հպարտանա մեր արած գործերով, այլ մաքսավորի օրինակով կամաչենք նույնիսկ մեր աչքերը հառել ի վեր եւ նրա նույն խոսքերով կաղոթենք:

Հիսուս Քրիստոս այս առակի մեջ փաստում է, որ Իր համար առավել թանկ է մեղավոր մարդու անկեղծ ապաշխարությունը, քան արդար ներկայացող փարիսեցու արտաքին բարեպաշտությունը:


Երկրորդ հայացքից առակը նրանց համար է, ովքեր վստահ են իրենց վրա, թե արդար են եւ արհամարհում են մյուսներին:

Եւ, ի վերջո, առակը մեզ պատգամում է, որ յուրաքանչյուրս եկեղեցի գալուց առաջ պիտի գիտակցենք, որ տաճարը կամ եկեղեցին աղոթքի

տուն է, սակայն ամեն աղոթք չէ, որ կարող է ընդունելի լինել Աստծու առաջ: Աստված տեսնում է, թե ինչ մտադրությամբ ենք գալիս եկեղեցի: Այն, ինչ ասաց փարիսեցին,— կարող ենք ենթադրել, որ նա զերծ էր մեծ եւ աղմկահարույց մեղքերից,— հույժ գովելի է: Սրանով հանդերձ՝ չպետք է գայթակղվենք, այլ պետք է հեռու մնանք հպարտությունից եւ ուրիշներին արհամարհելուց: Մաքսավորի աղոթքը կարճ էր, սակայն նպատակային. «Աստված, ողորմիր ինձ՝ մեղավորիս»: Այս կարճ խոստովանությունը մենք ընդունում ենք որպես Աստծու կողմից պատասխան ստացած աղոթք: Ուրեմն աղոթելիս չլինենք փարիսեցու նման, մեր մեջ ունենանք մաքսավորի անկեղծությունից, որպեսզի ընդունելի լինի մեր աղոթքը, եւ արդարացած գնանք մեր ակոթները:

Սիրելիներ, տարեվերջյան այս սուրբ եւ անմահ Պատարագի ընթացքում աղոթում եմ, որ Աստված օրհնի մեր ժողովրդին եւ իմաստություն պարգևի, որպեսզի կարողանանք իմաստությամբ դիմագրավել եւ հաղթահարել մեր առջեւ հառնող մարտահրավերները: Հատկապես այս օրերին չփորձենք մաքսավորի պես սեփական մեղքերը չնկատել եւ թաքցնել, առավել եւս դրանք կոծկելու համար ի ցույց բերենք ուրիշի արած կամ չարած սխալները, այլ մեր մեջ ունենանք մաքսավորի անկեղծությունից. առանց ինքնախաբեության ինքներս կարողանանք տեսնել մեր սեփական մեղքերը եւ ապա միաբանված դուրս գանք այս ծանրագույն իրավիճակից: Թող որ սահմանին կանգնած մեր եղբայրները զորանան Տիրոջով, որ Հայաստան եւ Արցախ աշխարհում խաղաղությունը տիրի:

«Շնորհ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս», ամեն:





ՅԱԿՈԲ ՔԵՍԵՅԱՆ

Փիլիսոփայական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ս. ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑՈՒ ՆՈՐԱՅԱՅՏ «ԸՆԹԵՐՑՈՒԼՄՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ» ԵՐԿՐ՝

«Մատենագիրք Հայոց» մատենաշարից ինչ-ինչ պատճառներով դուրս էր մնացել Յովհան Օձնեցու աստուածաբանական վաստակի մաս կազմող «Յովհաննոս յընթերցուածոց մեկնութենէ» երկասիրութիւնը: Հ. Բարսեղ վրդ. Սարգիսեանն այն համարում է Յովհան Օձնեցու ցարդ անյայտ Արարածոց մեկնութեան մէկ հատուածը¹: Սակայն երկի պարզ բնութիւնն իսկ ցոյց է տալիս, որ խորագրային ձեւակերպումը լիովին արտացոլում է նրա բովանդակութիւնը: Ինչպէս յայտնի է, Ազգային եկեղեցու ծիսաարարողական գործառնոյթի անադարտութեամբ մտահոգ Օձնեցին ոչ միայն սրբագրել է Ճաշոցում սպրդած սխալներն ու արտեմոնեան աղաւաղումները, վերականգնել ս. Կիրեղ Երուսաղէմացու կանոնակարգած ընթերցումները, այլեւ բացատրել ընթերցուածները: Օձնեցու՝ խնդրոյ առարկայ բացատրութիւնը զանազանում է նրա ժամանակակցի՝ Գրիգորիս Բորեպիսկոպոս Արշարունոս լայնօրէն ծանօթ «Ընթերցուածոց» մեկնութիւնից, որն, ի դէպ, գրուած էր մեծանուն հայրապետի յորդորով: Եթէ վերջինս բովանդակում է Մեծի պահոց շրջանում կիրառուող մարգարէական ընթերցումների բացատրութիւնը, ապա Օձնեցու մեկնութիւնը ներկայացնում է բացառապէս Աւագ չորեքշաբթիին օգտագործուող ընթերցումների (Ծննդ.ԺԼ., Զաք. ԺԱ.) բովանդակութիւնը: Այստումենայնի Աւագ չորեքշաբթի օրուայ համար նախատեսուած ընթեր-

¹* Ստացուել է 24.01.2023, գրախօսուել է 13.02.2023:

էլ. հասցէ՝ nelli.zhamkochyan.92@mail.ru:

² Տէս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ: Հատոր երկրորդ: Յօրինեց Հ. Բարսեղ. վ. Սարգիսեան, ի Մխիթարեան ուխտէն», Վենետիկ, 1924, էջ 247:

ցումն (Ծննդ. ԺԸ. 1–32) ինքնին թելադրել է նույն վերաբերմունքը որդեգրել մեկնելի տեղիի նկատմամբ. ինչպես Արշարունին³, այնպես էլ Օձնեցին հիմնականաբան համապատասխան տեղին յարաբերում են Յուդայի մատնությանը: Ըստ Օձնեցու, մեկնուող տեղին ունի իմաստային երկու հարթություն. եթե մատնության պահը ներկայացնում է իբրեւ արդեն կատարուած իրականություն, ապա իմաստային երկրորդ հարթությունը (Սողոմ, Գոմոր ֆաղաֆների հոյ դարակ դառնալու օրինակով) մատնացոյց է անում ընդհանուր դատաստանի հեռանկարը:

Ընթերցուծոց մեկնության մէջ լուսագոյնս դրսևորում են Հին եւ Նոր կտակարանեան իրողութիւնները խորհրդաբանօրէն մէկը միւսին յարաբերելու՝ հեղինակի կարողութիւնը, հայրախօսական աղբիւրների («Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի», Կիրեղ Երուսաղէմացի, Եսեբիոս Կեսարացի, Եպիփան Կիպրացի, Եփրեմ Ասորի, Գրիգոր Սֆանշելագործ) ֆաջ իմացութիւնը:

«Յովհաննու յընթերցուածոց մեկնութիւն»-ը յայտնի է երկու ընդօրինակութեամբ. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 993, ք. 434բ-436բ (Ժամանակ՝ 1456 թ.) եւ Վենետիկ, ձեռ. 215, ք. 45բ – 50ա (Ժամանակ՝ 1829 թ.):

Մեկնութիւնը հրապարակուում է համաձայն Մաշտոցի անուան Մատենադարանի համապատասխան ձեռագրի, որ Ճաղընտիր է ընդօրինակուած 1456 թ. Վերին Նորավանում: Գրիչն է Մատթէոսը, ծաղկողը Եսային, ստացողները՝ Թաղէոս եւ Ստեփանոս եղբայրները: Թերթերի ֆանակն է 769: Գրութիւնը՝ երկսիւն, գիրը՝ բոլորգիր⁴:

³ Տե՛ս «Մատենագիրք Հայոց», հտ. 2., էջ 77 [2–3]:

⁴ Զեռագրի հանգամանալից նկարագրութիւնը տե՛ս M. van Esbroeck, Zanetti, Le manuscrit Erévan 993, Inventaire des Préces; REA, 1977, t. XII, էջ 129–164, Մայր ցուցակ Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Գ., կազմեց Օ. Եգանեան, խմբ.Փ. Անթարեանի, Յ. Քէօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ.Շահէ քհնյ. Հայրապետեանի, Երեւան, 2007, էջ 1677–1720:

Ս. ՅՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ

ՅՈՎՀԱՆՆՈՒ՝ ՅԸՆԹԵՐՅՈՒԱԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԵՆԷ⁵

Իսկ չորրորդ աւուրն կանովն, որ է երրորդ շաբաթուն թիւս եւ հինգերորդ, ըստ միւս խորհրդոյ, որ զեւթն, ցուցանէ մեզ զերիքովական շրջագայութեան⁶: Ահա այսուիկ զեկեղեցւոյ զխորհուրդ, եւ զմիւսանգամ գալստեանն եւ զհատուցման արդարոց եւ մեղաւորաց ուսուցանէ մեզ: Եւ զի սկիզբն երից արանց ասացեալ գալստեամբ երեւեալ Աբրաամոս⁷: Սուրբն Գրիգոր զՀայր ասէ՝ երկուք հրեշտակաւք: Դարձեալ ասէ. «Եւ եկեալ հրեշտակաւք ի Մամբրէ զպարգեւական զաւակն խոստացեալ»⁸. զԻսահակ ասաց, զոր սուրբ առաքեալն Քրիստոսի աւրինակ ասաց⁹ եւ զիւր որդին գալ մտանել ընդ մարմնով, առնուլ մարմին ի զաւակէն Աբրաամոս: Տարեւոր որթն¹⁰ զաւրինակս ունի զեկեղեցոյ, երիւք բաղարջ նկանակաւք¹¹ զհաւատս Սրբոյ Երրորդութեան՝ նորոյ ուխտիս եկեղեցւոյ, զոր Փրկիչն բարեկամին առակաւ ի մէջ գիշերի եկեալ երիս նկանակս ասաց խնդրեալ¹², այս է՝ ի Սուրբ Երրորդութիւն հաւատ: Իսկ կաթն¹³ աւրինաց մանկանցն իբրեւ տղայոց, որպէս սուրբ առաքեալն եբրաեցւոցն գրէ. «Եղերուք, ասէ, կարաւտ կաթին եւ ոչ՝ հաստատուն կերակրոց»¹⁴: Եւ կոգի Քրիստոսի կտակս է, զի իւղ առեալ ասաց առակաւն¹⁵, եւ սուրբն Գրիգոր զՔրիստոս ասաց: Իսկ զերից արանցն երեւումն ոմանք ի վարդապետաց զՍուրբ Երրորդութիւն ասացին¹⁶: Զայս աւր ասաց Փրկիչն

⁵ Աղբիւր. ՄՄ, ձեռ. 993, թ. 434բ–436բ:⁶ Տէս Յեսու 9:⁷ Տէս Ծննդ. ԺԸ. 1–15:⁸ «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի». տէս Ագաթանգեղոս, պարբ. 300 (ԻԸ.)⁹ Տէս Գաղատ. Դ. 28 հմմտ. եբր. ԺԱ. 17–19:¹⁰ Տէս Ծննդ. ԺԸ. 7:¹¹ Տէս Ծննդ. ԺԸ. 6:¹² Տէս Դուկ. ԺԱ. 5–8:¹³ Ծննդ. ԺԸ. 8:¹⁴ Եբր. Ե. 12:¹⁵ Առակք Լ. 33:¹⁶ Այսպէս, ս. Նիշնէն տուեալ տեղիի բացատրութեան մէջ նկատում է. «Եւ երիս, զի երիս ետես՝ իմացաւ զերրորդական խորհուրդն, որում պատարագս մատուցանէր: Ըստ թուոյն երեք են. առաջինն չէ ծնեալ յումեքէ, երկրորդն ծնունդ է առաջնոյն, երրորդն ոչ երկրորդին, այլ առաջնոյն է ելումն եւ բխումն՝ իբրեւ արմատ, ծառ եւ պտուղ». տէս «Մատենագիրք Հայոց», հտ. Ա., էջ 329:

ցհրեայսն. «Աբրահամ ցանկացաւ տեսանել զաւր իմ, ետես եւ ուրախ եղեւ»¹⁷: Ոմանք զծննդեանն աւր ասացին ի սուրբ Կուսէն եւ ոմանք զչարչարանացն աւր ի Խաչին¹⁸, այս է՝ եկեղեցւոյ խորհուրդ Հին եւ Նոր Կտակարանաց: Իսկ վասն հանդերձելոյ յաւիտենին դատաստանի ասել Տեառն. «Միթէ թաքուստ ինչ իցէ յԱբրահամէ ծառայէ իմմէ, զոր ինչ գործելոց իցեմ»¹⁹: Այսու յայտ արարեալ զխորհուրդ Աստուածութեան՝ յայտնել ամենայն արժանացեալ սրբոց: Եւ յետ սակաւուց ասէ. «Աւրհնեսցին ի զաւակի քում ամենայն ազգք երկրի»²⁰. քարոզութիւն բանին կենաց: Եւ ասելն. «Աղաղակ սողոմայեցւոցն եւ գոմորացւոցն յաճախեալ»²¹ եւ մեղաց նոցա բազմանալ: Եւ իջանելն Տեառն տեսանել զաղաղակն եւ վճարելն, ապա եթէ ոչ՝ տեսից: Եւ Աբրահամու ասելն աղերսական պաղատանաւք. «Լինիցի արդարն իբրեւ ամբարիշտն, եւ կորնչիցի՞ արդեւք»²²: Եւ հրաժարական հայցմամբ. «Քաւ լիցի քեզ, ասէ, որ դատիս զամենայն երկիր, մի՞ արասցես զայդ դատաստան»²³: Եւ ի տասն եւ հնգեակ թուոյն նուազեցուցանելով մինչեւ ցտասին կէսն: Եւ ասէ Աստուած. «Ոչ կորուսից»²⁴: Եւ առ երեկս գալ հրեշտակացն ի Սողոմվմ, զի ի վեցհազարեան ժամանակին կատարման լինի վախճան կենաց աշխարհիս, եւ է միւսանգամ գալուստն Քրիստոսի, որպէս եւ Փրկիչն յաւրինակ առնու զՂովտ²⁵: Եւ զսողոմայեցիսն հրկիզեալ վասն միւսանգամ գալստեանն իւրոյ ասէ. «Որպէս յաւուրսն Ղովտայ ուտէին եւ ըմպէին, գնէին եւ վաճառէին մինչեւ յաւրն, յորում եւ Ղովտ ի Սողոմայ, եւ տեղաց Տէր հուր եւ ծծումբ յերկնից եւ կործանեաց զքաղաքսն զայնոսիկ»²⁶: Նոյնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս: Առաքեսցէ զհրեշտակս իւր, եւ որոշեսցեն զչարս ի միջոյ արդարոց՝ արկանել ի հնոց հրոյն. «անդ եղիցի լալ եւ կրճել ատա-

¹⁷ Յովհ. Լ. 56:

¹⁸ Ստեփանոս Սիւնեցին այս կապակցութեամբ բացատրում է. «Հայրապետն Աբրահամ եւ նման նորայ՝ Մովսէս եւ մարգարէքն յառաջագոյն տեսին հոգեւոր աշաւք զաւր մարմնանալոյն Քրիստոսի եւ զամենայն խորհուրդ Խաչին, որ կատարեցաւ յաւուր իւրում. տեսին եւ ուրախացան, վասն զի փրկեցան ի դժոխոց եւ ի մահուանէ». տե՛ս «Մատենագիրք Հայոց», հտ. 2., էջ 245–246:

¹⁹ Ծննդ. ժԼ. 17:

²⁰ Ծննդ. ժԼ. 18:

²¹ Ծննդ. ժԼ. 20:

²² Ծննդ. ժԼ. 23:

²³ Ծննդ. ժԼ. 25:

²⁴ Ծննդ. ժԼ. 32:

²⁵ Տե՛ս Ղուկ. ԺԷ. 28–29:

²⁶ Ղուկ. ԺԷ. 28–29:

մանց»²⁷։ Դարձեալ վասն ժամանակի գալստեան փառաց կենարարին ասէ նոյն ինքն Տէրն մեր, եթէ՝ «Որպէս եղեւ յաւուրսն Նոյի, այնպէս եղիցի եւ գալուստ Որդոյ մարդոյ։ Որպէս յաւուրսն Նոյի ուտէին եւ ըմպէին, առնուին կանայս»²⁸ եւ տային արանց, մինչեւ եմուտ Նոյ ի տապանն, եւ ոչ գիտացին, մինչեւ եկն ջրհեղեղն եւ եբարձ զամենեսին»²⁹։ Եւ ասէ Աստուած ցՆոյ. «Մի՛ մնասցէ ոգի իմ ի մարդիկդ, այլ եղեցին աւուրք դոցա հարիւր եւ քսան ամ, եւ ժամանակ եցոյց նոցա, զի երկիցեն»³⁰։ Եւ քանզի մարդիկն անարեւնութեամբ իւրեանց դառնացուցին զԱստուած, եւ հանապազ այսպն առնէին եւ հենգնէին զՆոյ, թէ՛ ուր է, զի եկն ջրհեղեղն, զարթոյց անարեւնութիւն նոցա զստուգութիւնն վաղվաղակի, քանզի կատարեցաւ մեղք նոցա եւ լցաւ չափ անարեւնութեան նոցա։ Զի յամին հարիւրերորդի³¹ եկն եհաս ջրհեղեղն, եւ պակասեցոյց զքսան ամն, զի զլացան զողորմութիւն Աստուծոյ, եւ փոխեցին զճշմարտութիւն բանից նորա, եւ նախատեցին զՆոյ զարդարն Աստուծոյ։ Որպէս եւ ասէ բարձրաբարբառն Նսայիաս, եթէ՝ «Վայ, որ երկայնեն զմեղս իւրեանց իբրեւ զպարան երկայն եւ իբրեւ զկար փոկոյ սայլի՝ զանարեւնութիւնս իւրեանց»³²։ Եւ ասացին. Արասցէ փութով Տէր, զոր առնելոց իցէ, զի տեսցուք, եւ եկեսցէ եւ հասցէ խորհուրդ սրբոյն Իսրայէլի, եւ գիտացցուք³³։ Եւ երանելի խորհրդապետն Պաւլոս ասէ, եթէ՝ «Անարեւնութիւն մեր զստուգութիւնն Աստուծոյ զարթուցանէ։ Մի՛թէ անիրաւ ինչ իցէ Աստուած, որ ածէ զբարկութիւն իւր. քաւ լիցի»³⁴։ Եւ դարձեալ ասէ, թէ՝ «Զաւրութեամբ հանդերձ հրեշտակաց իւրոց ի բորբոքումն հրոյ առնէ զհատուցումն եւ վրէժխնդրութիւն յայնցանէ, ոյք ոչ ունկնդիր եղեն աւետարանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ի փառաց զաւրութենէ նորա, յորժամ եկեսցէ, եւ երեւեսցին փառք նորա ի սուրբս իւր եւ սքանչելիք իւր՝ ի հաւատացեալս իւր, թէ հաւատացաւ վկայութիւն մեր ի ձեզ յաւուր յայնմիկ որպէս զի եղեւ յաւուրս Նոյի»³⁵։ Զի յառաջ քան զեւթն աւր ջրհեղեղին եմոյժ զնա ի

²⁷ Մտթ. Ը. 12, ԺԳ. 42, 50, ԻԲ. 13, ԻԵ. 51, ԻԵ. 30, Ղուկ. ԺԳ. 28։

²⁸ ձեռ. կայայս։

²⁹ Մտթ. ԻԴ. 38—39։

³⁰ Ծննդ. Զ. 3։

³¹ ձեռ. հարիւրորդի։

³² Ես. Ե. 18։

³³ Ես. Ե. 19։

³⁴ Հռոմ. Գ. 5։

³⁵ Բ. Թեսաղ. Ա. 7—10։

տապանն եւ փակեաց ընդդէմ նորա եւ ամենայնի, որ ընդ նմա: Եւ սկսան ձայնք եւ որոտմունք եւ փայլատակմունք եւ ճայթիւնք եւ արհաւիրք եւ շարժմունք, եւ ահագին հնչմամբ հողմ սաստիկ զայն եւթն ար, եւ հաւատացաւ վկայութիւն Նոյի: Զայն եւթն աւուրս եկին պատեցան բազումք զտապանան Նոյի, եւ բախէին եւ խնդրէին, եւ ոչ ոք բանայր նոցա, քանզի փակեաց զդուռն տապանին, եւ տանջեցան նոքա զայն եւթն ար, եւ ապա եկն ի վերայ նոցա ջրհեղեղն: Ասէ Տէր մեր, եթէ որպէս եղեւ յաւուրսն Նոյի, այնպէս եղիցի գալուստ Որդւոյ մարդոյ, զի յառաջ քան զյայտնութիւն նորա եղիցին նշանք յարեգակն եւ լուսին եւ յաստեղս, եւ եղիցի մարդկան նեղութիւն ի յերկրի, եւ խռովութիւն է բարբառոյն, որ ի նման է ծովու: Եւ եղիցի ելանել ոգւոց մարդկան յերկիրէ եւ յայլափոխ շտապուէ տագնապին, որ հասանիցէ ի վերայ աշխարհի: «Եւ խաւարեսցի արեգակն, եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր, եւ շարժեսցին զաւրութիւնք երկնից: Եւ ապա երեւեսցին նշան Որդւոյ մարդոյ յերկինս, եւ տեսցեն զայն ամենայն ազգք երկրի: Եւ տեսցեն զՈրդի մարդոյ, զի գայցէ ընդ ամպս երկնից զաւրութեամբ մեծաւ եւ փառաւ: Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, որ աղաղակեսցեն եւ ժողովեսցեն զընտրեալսն ի չորից հողմոց, եւ որոշեսցեն զչարս ի միջոյ արդարոց՝ արկանել ի հնոց բորբոքեալ հրոյն»³⁶:

Արդ, եկեսցուք առաջին կարգ բանիս: Զսոյն ընթերցուածիս խորհուրդ անշէջ հրոյն աւրինակ եւ մեղաւորացն տանջանաց: Եւ գլուխ առաքելոցն Պետրոս յերկրորդ թղթին իւրում, յերրորդ ըստ Կաթուղիկէիցն Եւթանց ասացեալ, զի «քաղաքս, ասէ, զսողոմասցւոց եւ զգոմորացւոց դարձուցեալ յաճին դատեցաւ յաւրինակ առ յապա ամպարշտութեանցն կացուցանէր»³⁷, այս է՝ մեղաւորացն տանջանաց: «Եւ զարդարն զՂովտ ձանձրացեալ յանկարգ գնացից գիշութեանցն փրկեաց»³⁸, այս է արդարոցն փրկիլ յանշէջ հրոյն տանջանաց: Եւ յետ սակաւուց զնոյն խորհուրդ պատմէ. «Գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել ի փորձութենէ եւ զանիրաւս պահել ի տանջանս յաւուրն դատաստանի, մանաւանդ, որ զհետ պղծալից ցանկութեանց մարմնոյ իցեն երթեալք»³⁹: Զսոյն խորհրդոյ լուծումն եւ Եւթներորդ Կաթուղի-

³⁶ Մտթ. ԻԴ, 29—31:

³⁷ Բ. Պետր. Բ, 6:

³⁸ Բ. Պետր. Բ, 7:

³⁹ Բ. Պետր. Բ, 9—10:

կէին ասացեալ ի Յուդայէ Յակովբայ եղբարէ, որ ասի կնիք թղթոյն Կաթուղիկէից, յորում տեղուջ ասէ զյանցաւորս հրեշտակաց՝ զսատանայէ ասէ եւ որք ընդ նովաւ: «Եւ զհրեշտական, ասէ, որ ոչ պահեցին զիրեանց իշխանութիւն, այլ թողին զիրեանց բնակութիւն ի դատաստան մեծի աւուրն, մշտնջենաւոր կապանաւք պահեաց ի խաւարի, այս յանցելումն յաներեւոյթսն: Իսկ յերեւելիսս որպէս Սողոմէ եւ Գոմոր եւ որ շուրջ զնոքաւք քաղաքքն, որ ըստ նմին աւրինակի պոռնկեցան զհետ ընկերացն մարմնոց, կան առաջի զյաւիտենական հրոյն ընկալեալ զդատաստան»⁴⁰: Եւ զի անվախճան հրոյն տանջանաց է աւրինակ սողոմայեցւոցն՝ հրով եւ ծծմբով խառնեալ եւ անսպառ այրումն: Եւ տէրն Եփրեմ յայտ արարեալ ի ճառին, որ վասն Յարութեան է ասացեալ, ասէ. «Ի ջրոյն սողոմայեցւոց ուսեալ, թէ տակաւին երկիրն այրի: Չկունք, ասէ թէ, ի ջուրն սողոմայեցւոց ժամանեցեն, մեռանին, ալեկոծի ծովակն եւ տարածեալ սփռի, եւ ոչ ունի կենդանութիւն»: Եւ դարձեալ ասէ. «Առ քար յայլոց լերանց եւ հանցես հուր ծայրատաշելով, առ քար ի սողոմայեցւոց երկրէն եւ ոչ տայ հուր, վասն զի այրեալ է ասի եւ է»⁴¹: Թէ սպառեալ էին տանջանքն, թերեւս կենդանութեան զգայութիւն լինէր յերկրին եւ ի ջուրսն եւ ի քարինսն: Այլ ասէ. «Ի ծագել արեգականն ի ներքս ի Սեգովր մտցուք»⁴², այս է՝ Քրիստոսի գալստեամբն եւ շարժարանաւքն, իբրեւ ամուր պարսպաւք, քաղաքաւորեսցուք, զի մի աւտար հրովն ծախիցիմք, այս է՝ շար վարդապետացն հայհոյութեանց, զոր գործէ ծուլութիւն: Այսպէս եւ երկուց խորհրդոց ունի վերլուծութիւն ընթերցուածիս միտք: Իսկ զի սոյն աւր չորրորդ, յորում մատնութեան Տեառն խորհուրդ եղեւ, յԱռակացն եւ Զաքարիայի ընթերցուածն զսոյն միտս ուսուցանեն: Առակացն. «Որդեակ ասացեալ ողորականաբար, աղերսիւ, մաւր եկեղեցւոյ, մի խաբեսցեն զքեզ արք ամպարիշտք»⁴³: Իսկ Զաքարիայ մարգարէի, քանանացիս կոչեալ զհրէից ժողովուրդս առ նոյն մատնութեան Քրիստոսի եւ սպանման մի ասէ: Եւ քանզի քանանացւոց երկիրն է զհրէից բնակութիւն, վասն այնորիկ զհրէից ժողովուրդս քանանացիս եւ արիւնահեղս կոչէ⁴⁴, զի

⁴⁰ Յուդա 7:⁴¹ Քաղուած է ս. Եփրեմ Ասորու Աւետարանի մեկնութիւնից. տէս նԲՀ, Ա., էջ 1006 («ծայրատաշել»)⁴² հմմտ. Ծննդ. ԺԹ. 23:⁴³ Առակ. Ա. 10:⁴⁴ հմմտ. Զաք. ԺԱ. 7:

ուժ ուժեք նմանիցին գործովք, նոցին եւ անուամբ լիցին կոչեցեալք: Եւ բարեաւն ասել, թէ թուի. «Տուք զվարձս իմ»⁴⁵. այս ի նոցին կամս առնել զխորհուրդ մատնութեան, «ապա թէ ոչ՝ զի ցոյց առնել»: Գրէ- թէ մարգարէս խաւսի ընդ ժողովրդեանն: Եւ ոչ յաւժարեցին ի զինս արեան⁴⁶: «Եւ կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի»⁴⁷: Ասի ի ժամա- նակագրացն զարծաթոյն զայնմանէ, եթէ ի ժամանակին դահեկանն արծաթի էր, ի նոյն գիրս տասնդրամեան վարձն, որ խնդրի ի նոցանէ, ելից ամաց ախտահալած սքանչելագործ բժշկութեանցն ասի մի տասն արծաթ: Եւ զի՛արդ ամացն երեսնից յառաջ քան զսքանչելիսն երեսուն արծաթոյ մի մի ամ մի մի ամ մի արծաթ: Եւ կամ զի՛արդ սքանչե- լագործ ամացն երեսնից տասն⁴⁸ արծաթ, որ լինին ըստ ժամանակագ- րացն Եւսեբի Պամփիլեայ⁴⁹ եւ Եպիփանեա⁵⁰ արծաթն տասնդրամեան, որ լինին երեք հարիւր դրամ, զի ահա եւ այս ըստ մատնչին ցանկու- թեան հաւասարեաց: Յայն ցանկութիւն ջեռեալ զարարիչն արարա- ծոց ընդ երեսուն արծաթոյ վաճառեաց, որ լինի երեք հարիւր դրամ: Եւ ասել Տեառն ցմարգարէն. «Արկ դու զարծաթդ ի բովս եւ քննեա, եթէ փորձ իցէ, որպէս եւ ես գտայ փորձ վասն նորա»: Երեսուն արծա- թովն զամենայն հաւատացեալս ի Քրիստոս առակեաց. երեսնամեայ ի մկրտութիւն գալով, եւ յետ այնր ի փորձանսն սատանայի լինել քա- ռասնաւրեայ պահաւք յաղթութեան յերիս փորձութիւնսն. քաղցին՝ յորովայնի շուայտութիւն եւ զփառս աշխարհիս՝ արհամարհելով զա- գահութեամբն եւ զարծաթսիրութեամբն, ոչ խարդախելով զՏէրն յաշ- տարակէ տաճարին ի վայր արկանելով առ ի ցոյցս Աստուածութեան՝ ոչ սնափառելով կամ փառասիրելով: Զայս իմաստս ուսուցանէ երա- նելին Կիւրեղ աստուածաբան յԵրախայից վարդապետութեան, ասէ յասելն մարգարէին. «Քննեա, եթէ փորձ իցէ ամենայն մարդ, որպէս եւ ես գտա փորձ վասն նոցա»⁵¹, այսինքն՝ փորձեցաւ վասն մերոյ աւ-

⁴⁵ Զաք. ԺԱ. 12:

⁴⁶ Տէս Մտթ. Իէ. 6:

⁴⁷ Զաք. ԺԱ. 12:

⁴⁸ ձեռ. տասն տասն. առաջինի վրայ ուղղման նշան:

⁴⁹ Տէս «Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանակականք երկմասնեայ», աշխտ. հ. Մ. վրդ. Աւգերեան, մասն Ա.—Բ., Վենետիկ, 1818:

⁵⁰ Տէս Յ. վրդ. Աւգերեան, Բացատրութիւն չափուց եւ կշռոց նախնեաց՝ առաջնորդութեամբ Եպիփանեա, Խորենացւոյ եւ Շիրակացւոյ, Վենետիկ, 1821. Եպիփանի երկի յունարէն բնագիրը հայերէն թարգմանութեան հետ միասին էջ 1—20:

⁵¹ Զաք. ԺԱ. 13:

րինակի⁵²: Որպէս եւ Սքանչեւագործն Գրիգոր ուսուցանէ ի ճառին, որ վասն Հաւատոյ, յետ տասն եւ երկուց զլիսոց նգովից մեկնութեան ասէ. «Յանապատի փորձեցաւ՝ ոչ փորձութեանց ի ներքոյ անկեալ, այլ զմեր փորձութիւն յառաջ կոչելով, սնոտի զփորձողսն ցուցանէ»⁵³: Եւ յասելն մարգարէին. «Առ ի զերեսուն արծաթին եւ արկ ի տուն Տեառն ի բովս»⁵⁴: Այս, որպէս յառաջն ասացաւ, ամենայն հաւատացեալք ի Քրիստոսէ են, զի ամենայն ուղղափառ հաւատացեալք Քրիստոսի են: Իսկ սուրբ Աւետարանն ըստ մատթէոսեան ասացեալ զլիսոյ, զոր ի կառանշան տեսեանն քառակերտեայ Եզեկիէլի հոգելից մարգարէի մարգարէացեալ⁵⁵, զոր Եպիփան Կիպրացի մեկնէ եւ սակս սկզբնաբար պատմութեանցն Աւետարանի, որ ըստ մարմնոյ ծնունդն Քրիստոսի պատմէ. «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրաամով»։ վասն նորին իրի, որ դէմք միոյ քրովբէին դէմք մարդոյ ասացաւ. զսա զՄատթէոս⁵⁶ աւետարանիչ ասէ⁵⁷, որ յառաջ քան զհինգ⁵⁸ հարիւր ամ աւելի կամ պակաս. զՀոգւոյն Սրբոյ գուշակութիւն ի ձեռն Զաքարիայ մարգարէութեան զխորհուրդ մատնութեան քաջերեսագոյն ճշմարտաբար կատարեալ ցուցանէ, զի ասէ. «Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն անուանեալն Յուդայ Սկարիոտացի, եւ ասէ. Զի՞նչ կամիք տալ ինձ, եւ ես մատնեցից զնա ձեզ»⁵⁹: Այս է ասելն մարգարէին. «Տուք զվարձս իմ, ասէ, եւ նոքա կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի»⁶⁰: «Եւ յայնմ հետէ պարապ խնդրէր, զի մատնեսցէ զնա»⁶¹: Այս է «պարապ» լինել. յետ միոյ աւուր ելից զչար խորհուրդն, զոր ունէր՝ առ ի մատնել զՏէրն:

⁵² Տէս «Կիրղի Երուսաղէմայ հայրապետի Կոշումն ընծայութեան», Վիեննա, 1832:

⁵³ Քաղուած է. «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յուղղափառ եւ հոգեկիր հարցն մերոց...»։ տէս «Մատենագիրք Հայոց», հտ. Դ., էջ 100 [55]:

⁵⁴ Զաք. ԺԱ. 13:

⁵⁵ Տէս Եզեկ. Ա. 4–28:

⁵⁶ ձեռ. զՄատթէոս:

⁵⁷ Այս մեկնութիւնը բացակայում է ս. Եպիփան Կիպրացու այսօր յայտնի երկի ենթագրութող համապատասխան մասում. «Նորին Երանելոյն Եպիփանու ասացեալ ի ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ». տէս Սուրբ Եպիփան Կիպրացի, Ճառք, աշխտ. Յ. Քէօսէեանի, Ս. էջմիածին, 2013, էջ 190–213: Ինչպէս երեւում է, այն առկայ է եղել համապատասխան ճառի մեզ չհասած տարբերակներից մէկում:

⁵⁸ ձեռ. զհինգ:

⁵⁹ Մտթ. ԻԶ. 15:

⁶⁰ Զաք. ԺԱ. 12:

⁶¹ Մտթ. ԻԶ. 16:

РЕЗЮМЕ

Представленный труд Ована Одзнеци Толкование к отрывку из Книги Бытия 18, 1—32, читаемое в среду Страстной недели. Как Григорис Аршаруни, так и Ован Одзнеци рассматривают содержание упомянутого отрывка в свете предательства Иуды. Согласно толкованию Ована Одзнеци представленный фрагмент имеет два смысловых пласта. И если рассказ о предательстве представлен Ованом Одзнеци как уже свершившийся факт, то второй смысловой аспект (уничтожение Содома и Гоморры) указывает на эсхатологическую перспективу страшного суда.

SUMMARY

The work of Hovhan Odznetsi presents a commentary on Genesis 18:1—32, read on Holy Wednesday. Both Grigoris Arsharuni and Hovhan Odznetsi connect the content of the mentioned passage with the betrayal of Judas. According to Hovhan Odznetsi, this fragment has two semantic strata: while the moment of betrayal is presented by Hovhan Odznetsi as a *fait accompli*, the second semantic aspect (the destruction of Sodom and Gomorrah) points to the eschatological perspective of the Last Judgment.



ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԱԶԻԶՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ՄՅՈՒՌՈՆՈՐՅՆՈՒԹՅԱՆ ԺԻՄԱԿԱՐԳԸ.
ԺԻՄԱՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ՝

Վայոց Եկեղեցում մյուսոսնի գործածությունն սկսվում է Դ. դարից², սակայն որեւէ տեղեկություն չունենք, թե Ս. Դրիգոր Լուսավորիչը եւ նրա հաջորդները ինչպես են մյուսոսն օրհնել: Չգիտենք նաեւ, թե սկզբնական շրջանում ինչպիսի նյութերից է պատրաստվել մյուսոսնը: Ժ. դարի մատենագիր Ուխտանես եպիսկոպոսը ներկայացնում է է. դարում տեղի ունեցած Մյուսոսնօրհնության համառոտ նկարագրություն. «...այնուհետեւ մտեալ ի պաշտօն գիշերոյն՝ սաղմոսիւք՝ եւ օրհնութեամբ՝ եւ երգօք հոգեւորօք ըստ խորհրդոյ աւուրն, եւ կարդացմամբք ըստ պատշաճի խորհրդոյն հանէին զգիշերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ եւ զտիւն ողջոյն տքնեալ՝ մինչեւ կատարեցաւ խորհուրդն ամենայն ի փառս Աստուծոյ»³: Ճիշտ է, յստեղ չկա ծիսական միավորների թվարկում, որից կարող էինք ավելի հստակ պատկերացում կազմել Մյուսոսնօրհնության ծիսակարգի վաղ շրջանի պատմական զարգացման վերաբերյալ, սակայն հստակ է, որ հատուկ ծիսակարգ է եղել, որով օրհնվել է մյուսոսնը:

^{1*} Ստացուել է 21.12.2022, գրախօսուել է 23.12.2022:

Էլ. հասցե՝ aramayis.sarkavag@mail.ru;

² Առաջին վկայությունը մեզ հաղորդում է Ագաթանգեղոսը՝ գրելով. «Եւ իբրեւ իջանէին մարդիկն ամենայն եւ թագաւորն ի մկրտութիւն անդր, ի ջուրսն Եփրատ գետոյն՝ նշան սքանչելի երեւեալ յԱստուծոյ. զի գետը առեալ ջուրք գետոյն՝ անդրէն դարձան ընդ կրովն: Եւ լոյս սաստիկ երեւեալ ի նմանութիւն սեան լուսաւորի՝ եւ եկաց ի վերայ ջուրք գետոյն, եւ ի վերայ նորա նմանութիւն տէրունական խաչին. եւ այնչափ ծագեաց լոյսն, մինչեւ արգելոյր զճառագայթս արեգականն եւ նուաղեցուցանէր: Եւ իւր օծութեան, զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկանն՝ շրջան առեալ ի մէջ գետոյն շուրջ զմարդկան խաղայր»: Ա. Գ. Լ. Բ. Ա. Գ. Ե. Դ. Մ., Հայոց պատմական, աշխ.՝ Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1983, էջ 464:

Այդ մասին գրում է նաև պատմիչ Հովհան Մամիկոնյանն իր «Պատմութիւն Տարօնոյ» երկում. «Եւ առեալ սրբոյն Գրիգորի իշուցանէ զնոսա ի ձորն Այծասնայ եւ մկրտեաց զնոսա քրիստոնսագարդ զծամմբն՝ առնելով հաւատացեալս Սուրբ Երորդութեանն: Եւ երեւցցոյց Տէր լոյս մեծ ի սեան ճրեղէնի ի վերայ մկրտելոցն. եւ կացեալ երիւ ժամս լուսոյն»: Տէ՛ն Յովհն ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, Պատմութիւն Տարօնոյ, 1941, Երեւան, էջ 105–106:

³ ՈՒՆՏԱՆԷՍ ԵՊՈՍԿՈՓՈՍ, Պատմութիւն Հայոց, Հատուած Երկրորդ, Վաղարշապատ, 1871, էջ 68, հմմտ. «Մատենագիրք Հայոց», հտ. ԺԵ., Անթիլիաս, 2010, էջ 555:

Հայոց հոգեւոր կառույցում եկեղեցական կարգերը մեկտեղված են Մաշտոց ծիսամատյանում, որի համակարգողը եղել է Մաշտոց Ա. Եղիվարդեցի հայրապետը (897—898), սակայն նրա կազմած օրինակը մեզ չի հասել: Մաշտոց ծիսամատյանի ամենահին օրինակը Վենետիկի 457 համարի ձեռագիրն է⁴: Այս Մաշտոցում կան 45 կանոններ, որոնց թվում հիշատակվում է նաեւ Մյուռնոօրհնության կանոնը: Սակայն գրիչը միայն վերնագիրն է արտագրել՝ բաց թողնելով ծիսակարգը. «Կանոն խորհրդածութեան սուրբ իւղոյն, զոր միւռոնն կոչեն»⁵: Վերնագրից անմիջապես հետո կարդում ենք. «Բայց մեք ոչ իշխեմք գրել, զի մի՛ անհնազանդ գտանիցիմք սուրբ Լուսաւորչի աթոռոյն եւ մեծի հայրապետին մերոյ»⁶: Այս վկայությունը ցույց է տալիս, որ Մյուռնոօրհնության կանոնի հրապարակայնացումն ավանդաբար դեմ է եղել Հայոց հայրապետների կամքին: Մյուռնոօրհնության կանոնի բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Մյուռնոօրհնության կարգը ծածկյալ խորհուրդ էր համարվում: Նույնը վերաբերում է նաեւ կաթողիկոսական ձեռնադրության եւ օծման կարգին: Քաղաքական նկատառումներից ելնելով՝ այս երկու կարգերը կաթողիկոսարաններում առանձին եւ անգամ ծածուկ են պահվել: Պատճառն այն է, որ եղել են դեպքեր, երբ քաղաքական իշխանությունները Հայոց կաթողիկոսական գահին նստեցրել են իրենց հաճո որեւէ մեկին: Կաթողիկոսական ձեռնադրության եւ օծման կանոնը մեծապես օգնում էր անվավեր համարելու քաղաքական իշխանությունների միջամտությամբ որեւէ մեկին Հայոց կաթողիկոսական գահին նստեցնե-

⁴ Այս ձեռագիրը թուագրւում է Թ. կամ Ժ. դար: Տես «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Գ., կազմ.՝ Հ. Բ. Սարգսյանը եւ Հ. Գ. Սարգսյանը, Վենետիկ, 1966, էջ 1:

⁵ «Մայր Մաշտոց», հտ. Ա., գիրք Ա. (Ժ. դար), աշխ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2012, էջ 360: Գրիչը, սակայն, չի նշում, թե որ կաթողիկոսն է արգելել Մյուռնոօրհնության կանոնի ընդօրինակումը: Արգելքը չէր կարող դնել Հովհան Գ. Օձնեցի հայրապետը (717—728), քանի որ Դվինի ժողովի Թ. կանոնում նա արգելում է քահանաներին եւ եպիսկոպոսներին մյուռնոօրհնել, բայց չի արգելվում Մյուռնոօրհնության կանոնների ընդօրինակություններն ու տարածումը: Ամենայն հավանականությամբ արգելողը Անանիա Ա. Մոկացի կաթողիկոսն (946—968) է, քանի որ հայտնի է նրա պաշարը Աղվանքի կաթողիկոսի, Սյունյաց Հակոբ եպիսկոպոսի եւ Խոսրով Անձեւացու դեմ. «....հաւանօրէն ալդ խոռվալոյզ ժամանակին եւ Անանիա կաթողիկոսի ի գործ դրած ծանր միջոցներու վախէն՝ Մաշտոցիս գրիչը խոհեմութիւն համարած է զանց ընել գրելու միւռոնի օրհնութեան կանոնը»: Տես «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Գ., էջ 3:

⁶ «Մայր Մաշտոց», հտ. Ա., գիրք Ա. (Ժ. դար), էջ 360:

լու փորձերը⁷: Նույնը վերաբերում է նաեւ Մյուռնորհնության կանոնին, որ անարժանաբար կաթողիկոսական գահին նստեցված որեւէ մեկը մյուռնո շօրհնի: ԺԴ.—ԺԵ. դարերից մեզ հասած Մյուռնորհնության կանոնները խիստ սակավ են, սակայն հետագա դարերում ընդօրինակություններն աստիճանաբար ավելի շատ են կատարվում, քանի որ Հայրապետական Մաշտոցի⁸ կանոնները ծածուկ պահելու անհրաժեշտությունը հետզհետե վերանում է:

Մյուռնորհնության ծիսակարգի մեզ հասած ամենահին օրինակն Անթիլիասի համար 9 ձեռագիրն է, որը Հայրապետական Մաշտոց է: Սույն ձեռագրում Մյուռնորհնության կարգը բերված է ամբողջությամբ: Ձեռագիրն ընդօրինակվել է 1311 թ., պատվիրատուն Կոստանդին Գ. Կեսարացի կաթողիկոսն է (1307—1322)⁹: Այս ընդօրինակությունը կատարվել է Ներսես Լամբրոնացու ձեռքով գրած օրինակից¹⁰: Կարելու է այն հանգամանքը, որ Կիլիկյան շրջանում Հայ Եկեղեցու ծեսը էական փոփոխությունների է ենթարկվել: Ներսես Դ. Կլայեցու (1166—1173) եւ իր հաջորդների շրջանում՝ բյուզանդական եւ արեւմտյան եկեղեցիների հետ առնչությունների ժամանակ մեր եկեղեցու ծեսը կորցրել է սկզբնական անպաճույճ պարզությունը¹¹: Այս շրջանում է, որ Ներսես Լամբրոնացին Գրիգոր Դ. Տղա կաթողիկոսի (1173—1193) հանձնարարությամբ թարգմանել է Հռոմեական եկեղեցու ծիսարանը, ինչը մեծ ազդեցություն է թողել Հայ եկեղեցու ծիսական կյանքի վրա: Մյուռնորհնության կանոնում Ներսես Շնորհալի հայրապետն ունի հավելում՝ «Նոր օրհնութիւն ընդ հայցուածոց» շարականը¹²: Ղեւոնդ Ալիշանը կարծիք է հայտնում, որ ամենայն հավանականությամբ «Միւռնո-օրհնէից բովանդակ կանոնն ալ ինքն նորէն կարգաւորեք եւ ճոխացուցեք է, հաւասար ուրիշ եկեղե-

⁷ Տէս Վ. ԴԵՐԻՎՅԱՆ, Սրբալույս մյուռնո, Ս. էջմիածին, 2008, էջ 56:

⁸ Ժամանակի ընթացքում Մաշտոց ծիսամատյանի գործնական կիրառությունը դյուրացնելու համար այն բաժանել են երեք խմբի՝ քահանայական, եպիսկոպոսական եւ կաթողիկոսական կամ հայրապետական:

⁹ Տէս «Մայր ցուցակ ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան», աշխ.՝ Անուշաւան վրդ. Դանիէլեանի, Անթիլիաս, 1984, էջ 96:

¹⁰ Տէս Ա. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, Մյուռնորհնեքի կանոնը Մաշտոց ծիսարանում, «էջմիածին», 2008, թ., էջ 63:

¹¹ Տէս «Մայր Մաշտոց», հտ. Ա., գիրք Ա. (Ժ. դար), էջ 19:

¹² Տէս Անթ. ձեռ. 9, էջ 41բ, ՄՄ ձեռ. 4997, էջ 96բ—99բ, ՄՄ ձեռ. 5702, էջ 193բ—196բ, ՄՄ ձեռ. 1224, էջ 165ա—167բ, Կանոն օրհնութեան սրբալույս մեռոնին, Վաղարշապատ, 1876, էջ 37—42, Կանոն օրհնութեան սրբալույս մեռոնին, Վաղարշապատ, 1890, էջ 18—20:

ցական հանդիսից եւ տօնից. այսպէս բարեզարդելով այն կաթողիկոսաց սեփական արարողութիւնն ալ՝ փոխանակ մեղադրանացն յօտարաց՝ ձիթենւոյ իւղով չըլլալուն համար»¹³:

Մեզ հասած՝ Մյուռնոնօրհնության կարգը պարունակող հաջորդ ամենահին ձեռագիրը ՄՄ 4997 ձեռագիրն է, որն ընդօրինակվել է 1461 թ.: Գրիչը Ստեփանոսն է, իսկ պատվիրատուն Զաքարիա կաթողիկոսը¹⁴: Ժե. դարից պահպանվել է եւս մեկ ձեռագիր՝ ՄՄ 5702, որտեղ կա Մյուռնոնօրհնության կարգը: Այս ձեռագիրն ընդօրինակվել է 1471 թ. Աղթամարում, գրիչը Ներսես եպիսկոպոսն է, իսկ պատվիրատուն նախորդ ձեռագրի պատվիրատուի հաջորդ՝ Ստեփանոս կաթողիկոսը¹⁵:

Համեմատության արդյունքում պարզվել է, որ Սսի հայրապետական Մաշտոցի եւ ՄՄ 4997 համարի ձեռագրերի Մյուռնոնօրհնության կանոնների տարբերությունները չնչին են: Ակնհայտ տարբերությունն այն է, որ ՄՄ 4997 համարի ձեռագրում, ըստ ամենայնի, գրչական սխալմունքի հետեւանքով ծիսակարգում դրված է. «Ընթերցուած ի Զաքարիայ մարգարէէ» գլխագիրը, սակայն ընթերցվածը բերված է Գործք Առաքելոցից. «ԶԲանն առաքեաց որդւոյն Իսրայէլի աւետարանել զիսաղաղութիւն Յիսուս Քրիստոսի...»¹⁶:

¹³ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 449:

¹⁴ Տէն «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հտ. Ա., կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Այնթաբյան, Երեւան, 1964, էջ 1330:

Աղթամարի կաթողիկոսական աթոռը հիմնադրվել է 1113 թ., երբ Գրիգոր Վկայասերի քեռորդի Գրիգոր Գ-ն բազմեց Հայոց կաթողիկոսական գահին: Գրիգոր Գ-ի ղեկավարած տարիքից օգտվելով՝ Աղթամարի արքեպիսկոպոս Դավիթն իր կողմնակից հինգ եպիսկոպոսների կողմից Ջորավանքում ձեռնադրվեց կաթողիկոս: Զաքարիա Գ (1433–1464) Աղթամարի կաթողիկոսական աթոռի գահակալներից էր: Նա գործուն մասնակցություն է ունեցել 1441 թ. Սսից էջմիածին հայրապետական աթոռի տեղափոխման գործում: Երբ Կիրակոս Վիրապեցին օծվեց կաթողիկոս, նրա առաջին քայլերից մեկն էր Աղթամարի կաթողիկոսության վրայից բանադրանքի վերացումը: Աղթամարի կաթողիկոսությունը պահպանեց իր հովվապետական իրավագործությունն իր թեմում՝ ճանաչելով Մայր Աթոռի գերագահությունը: Զաքարիա Գ. կաթողիկոսը նպատակ ուներ միավորելու Աղթամարի եւ էջմիածնի աթոռները: Անգամ նրան հաջողվել է մի որոշ շրջան նստելու էջմիածնի Հայրապետական Աթոռին՝ առանց եկեղեցական ժողովի որոշման: Եւ հենց այս շրջանում՝ 1461 թ. նրա պատվերով ընդօրինակվում է Հայրապետական Մաշտոցը: Ավելի մանրամասն տե՛ս Վ. ՎԱՐԳԱՆՅԱՆ, Աղթամարի կաթողիկոսության պատմություն, Ս. էջմիածին, 2017, էջ 83–103:

¹⁵ Տէն «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հտ. Բ., կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Այնթաբյան, Երեւան, 1970, էջ 167:

¹⁶ Տէն ՄՄ ձեռ. 4997, էջ 89բ:

Անթ. Ձեռ. 9	ՄՄ ձեռ. 4997
Ընթերցում Յառակաց – Համբուրեն- ցէ գիս ի համբուրից բերանոյ իւրոյ... (Երգ Ա. 1–3) 28բ	Ընթերցում Յառակաց – Համբուրեն- ցէ գիս ի համբուրից բերանոյ իւրոյ... (Երգ Ա. 1–3) 89ա
Ընթերցում ի Զաֆարիայ մարգարէէ – Պատասխան ետու եւ ասեմ ցհրեշ- տակն իսկ զինչ են երկու ձիթենիքն որ կան ընդ աջմէ եւ ընդ ահեկէ աշտանա- կին... (Ձաք. Դ. 11–13) 29ա	
Ընթերցում ի Գործոց առաքելոց – ԶԲանն առաքեաց որդւոցն Իսրայելի աւետարանել զխաղաղութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի... (Գործք. Ժ. 36–38) 29բ	Ընթերցում ի Զաֆարիայ մարգարէէ – ԶԲանն առաքեաց որդւոցն Իսրայելի աւետարանել զխաղաղութիւն Յիսուսի Քրիստոսի... (Գործք. Ժ. 36–38) 89բ
Սաղմոս ԽԴ. կցուրդ – Վասն այսորիկ աւծ գքեզ Աստուած Աստուած քո իւզ... (Սաղմ. ԽԴ. 8) 30ա	Սաղմոս ԽԴ. – Վասն այսորիկ աւծ գքեզ Աստուած Աստուած քո իւզով... (Սաղմ. ԽԴ. 8) 89բ
Աւետարան ըստ Մարկոսի – Եւ մինչ էր ի Բեթանիա ի տան Սիմոնի բորոտի բազմեալ... (Մարկ. ԺԴ. 3–9) 30ա	Աւետարան ըստ Մարկոսի - Եւ մինչդեռ էր ի Բեթանիայ ի տանն Սիմոնի բորոտ ի բազմեալ... (Մարկ. ԺԴ. 3–9) 89բ

ՄՄ 4997 համարի ձեռագրում բացակայում է Զաքարիայի մարգարեությունից բերված ընթերցվածը: Այս շփոթն առկա է նաեւ ՄՄ 5702 համարի ձեռագրում, որտեղ եւս բացակայում է Զաքարիայի մարգարեությունից ընթերցվածը: Սույն հանգամանքը հաշվի առնելով՝ կարող ենք ասել, որ ՄՄ 5702 համարի ձեռագիրը ծագումնաբանական կապ ունի ՄՄ 4997 համարի ձեռագրի հետ: Հատկանշականն այն է, որ ՄՄ 4997 եւ ՄՄ 5702 համարների ձեռագրերի պատվիրատուները եղել են Աղթամարի կաթողիկոսներ. առաջինի դեպքում՝ Զաքարիա Աղթամարցին, իսկ երկրորդի դեպքում՝ (ինչպես ասել ենք) Զաքարիայի հաջորդ Ստեփանոսը:

Աղթամարում ընդօրինակված ՄՄ 5702 ձեռագրի Մյուռոնօրհնության կարգը, համեմատած Անթիլիասի համար 9 ձեռագրի եւ ՄՄ 4997 ձեռագրի, ունի զգալի տարբերություններ: ՄՄ 5702 ձեռագրում առկա են հա-

վելումներ¹⁷: Այս ձեռագրում Մյուռնորհնույթյան կարգն սկսվում է 104ա էջից եւ շարունակվում մինչեւ 210բ էջը: 104ա էջից մինչեւ 117բ էջը եղած ծիսական միավորները նույնական են Անթիլիասի համար 9 եւ ՄՄ 4997 ձեռագրերի ծիսական միավորների հետ: Սակայն 118ա էջից մինչեւ 184ա էջն առկա բոլոր ծիսական միավորները հավելումներ են: 184ա–210բ էջերի միջեւ ընկած ծիսական միավորները համընկնում են Անթիլիասի համար 9 եւ ՄՄ 4997 ձեռագրերում առկա ծիսական միավորներին:

Նույնական	Ավելացված	Նույնական
104ա–118ա	118ա–184ա	184ա–210բ

Ստորեւ ներկայացնում ենք ՄՄ 5702 համարի ձեռագրում 118ա մինչ 184ա էջերում ընդգրկված ծիսական միավորների հավելումները:

Եւ քարոզէ սարկաւագն—Աղաչեսցուք ամենքեան զմարդասէրն Աստուած... 118ա
Ասէ կաթողիկոսն զաղօթս—Աստուած հարցն եւ Տէր ողորմութեան... 118ա–121ա Հայր մեր... 121ա Եկայք ժողովուրդք... 121ա
Եւ ասեն շարական—Այսաւր ուրախացեալ ցնծան երկնա[յ]ինքն ընդ մարդկան... 121ա
Սաղմոս—Աւրհնեցէք զՏէր զի բարի... (Սաղմ. ՃԼԴ. 3) 121ա
Եւ քարոզէ սարկաւագն—Խնդրեսցուք հաւատով... 121ա
Եւ ասէ կաթողիկոսն զաղապս զայս — Տէր Աստուած զաւրութեանց տուող ամենայն մեծամեծ բարեաց... 121բ–123բ
Եւ ապա սարկաւագն է առաջի սրբոյ սեղանոյն եւ ասեն սաղմոս—Յիշեա՛ Տէր զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն... (Սաղմ. ՃԼԱ. 1) 123բ
Աւետարան ըստ Մատթէոսի — Իբրեւ եկն Յիսուս ի Բեթանիայ ի տուն Սիմոնի բորոտի... (Մատթ. ԻԶ. 6–13) 123բ–124ա

¹⁷ Սակայն Թինաթին Քրոնցը, Դանիել Քյոլլիգանը եւ Հայնցգերդ Բրակմանը, «Մյուռնորհնույթյան ծիսակարգը Հայ եկեղեցում. գերմաներեն թարգմանությամբ եւ ծիսապատմական դիտարկմամբ» հոդվածում, խոսելով ՄՄ ձեռ. 4997 եւ 5702 համարների ձեռագրերի ընդօրինակությունների եւ գրման հանգամանքների մասին, նշում են, որ ծեսի առումով ձեռագրերը տարբերություններ չունեն, այնինչ ՄՄ ձեռ. 5702-ում առկա են զգալի հավելումներ: Տե՛ս TINATIN CHRONZ, Daniel Kölligan, Heinzgerd Brakmann, Die Feier der Myronweihe in der armenischen Kirche. Mit einer deutschen Übersetzung und liturgiehistorischen Beobachtungen, «Oriens Christianus», Band 101, 2018, էջ 187:

Եւ ապա դնեն զեղն ի վերայ սրբոյ սեղանոյն ծածկելով զնա եւ ասէ—Տէր Աստուած հղար ամենակալ արարիչ... 124ա—131բ
Ժողովուրդն ասեն—Ուխտանա ի բարձունս ... 131բ
Եւ այս կանոն կատարի ընթերցուած յԱռակաց — Համբուրեսցէ զիս ի համբուրից... ¹⁸ (Երգ Ա. 1—3) 131բ—132ա
Ընթերցուած Յիսայեա[յ] մարգարէ[է] — Հոգի Տեառն ի վերայ իմ վասն որո[յ] եւ ամ... (Ես. ԿԱ. 1—4) 132ա—132բ
Յակովբոս Առաքելոյն ի կաթողիկեաց — Վըշտանայցէ ոք ի ձէնչ յաղաւթս կայցէ... (Հակ. Ե. 13—16) 132բ—133ա
Ալէլուիեա ալէլուիեա Հոգի Տեառն... (Ես. ԿԱ. 1) 133ա
Աւետարան ըստ Դովաստ — Եւ դարձաւ Յիսուս զարուսեամբ Հոգւոյն ի Գալիլեա... (Ղուկ. Դ. 14—22) 133ա—133բ
Եւ սարկաւագն փարոզէ—Վասն ի վերուստ խաղաղութեան... 134ա
Եւ կաթողիկոսն ասէ զաղօթս — Գոհանամք զՔէն Միածին Որդի... 134ա—135ա
Սարկաւագն ասէ—Պըռաւսխումէ 135ա
Կաթողիկոսն ասէ—Սըրբութիւնք սրբոց վայել է... 135ա
Ժողովուրդն ասեն — Ամէն 135ա
Կաթողիկոսն ասէ—Հայր Սուրբ, Որդի Սուրբ, Հոգի Սուրբ Աւրհնութիւն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ... 135ա
Սաղմոս — Գտի զԴաւիթ ծառայ իմ... (Սաղմ. 2Ը. 21) 135ա
Ընթերցուած ի Զաքարիայ — Եւ դարձաւ հրեշտակն որ խաւսէր... (Զաք. Դ. 1—5) 135բ—136ա
Յովնաննու առաքելոյ ի կաթողիկեաց թղթոյն — Եւ դուք աւծութիւն ունիք առ սրբոյն... (Ա. Հովհ. Բ. 20—23) 136ա
Քարոզ Եւ եւս խաղաղութեան զՏէր... Վասն առաքման շնորհաց Հոգւոյն Սրբոյ... 136ա—136բ
Եւ ասէ կաթողիկոսն զաղօթս—Տէր Աստուած որ մեծդ եւ սքանչելի... 136բ—139ա
Սարկաւագն փարոզէ—Վասն ընդունելի... 139ա—139բ
Կաթողիկոսն ասէ զաղօթս—Աստուածայր որ կոչեցեր զմեզ յանուն Միածնի 139բ—140ա
Ապա առնուն ի հնոյ իւղոյն եւ ածեն ի նորն խաչանման 140ա—140բ

¹⁸ Սույն ընթերցվածը առկա է նաեւ 185բ էջում:

Եւ ասէն շարական—Որ յառաջագոյն յօրէնս... 140բ
Եւ սարկաւագն քարոզէ—Եւ եւս խաղաղութեան...Միաբան ամենեքեան... 140բ
Կաթողիկոսն ասէ զաղալս զայս — Տէր ամենակալ Աստուած զաւրութեանց... 141ա—142ա
Եւ ապա տեառնագրէ զամենեսան եւ համբուրեն զաջ կաթողիկոսին 142ա—142բ
Սարկաւագն քարոզէ—Եւ եւս գոհացարութ... 142բ
Եւ ասէ կաթողիկոսն զաղալս զայս—Տէր Աստուած ամենակալ թագաւոր յաւիտենական... 142բ—143ա
Եւ ասէ կաթողիկոսն զայս — Գոհութիւն դարձեալ մատուցանեմք... 143ա—145ա
Աղալսք զաւրաւոր Սրբոյն Գրիգորի Նարեկացոյն: Ասացեալ է վասն սրբալոյս իւղոյ մեռոնին — Ահաւոր անուն բարձեալ անպատում... 145ա—173բ
Վասն սրբալոյս իւղոյ սուրբ մեռոնին, զոր ասացեալ Սուրբ Գրիգոր Նարեկացոյն — Քանզի մեռոնս այս արհնաբանեալ զոր մարգարէն կանխաւ... 173բ—182ա
Ընթերցուած ի Ծննդոց—Ի սկզբանէ Աստուած զերկինս եւ զերկիր... (Ծննդ. Ա. 1—5) 182ա
Ընթերցուած յԱռակաց—Իմաստութիւն շինեաց իւր տուն եւ կանգնեաց... (Առ. Թ. 1—6) 182ա—182բ
Ընթերցուած ի Գործոց առաքելոց—Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս... (Գործք Ժ. 44—47) 183ա—183բ
Աւետարան ըստ Մատթէոսի — Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս... (Մատթ. Գ. 16—Դ. 2) 183բ
Քարոզ — Եւ եւս զանձինս... 184ա

ՄՄ 5702 ձեռագրում առկա այս հավելումները 1876 եւ 1890 թթ. Վաղարշապատում տպագրված Մյուռնոնօրհնության կանոններում բացակայում են, կան միայն այն միավորները, որոնք նույնական են Անթիլիասի 9 եւ ՄՄ 4997 համարի ձեռագրերում: Քանի որ ՄՄ 5702 համարի ձեռագիրն ընդօրինակվել է Աղթամարում եւ պատվիրատուն Աղթամարի Ստեփանոս Դ. կաթողիկոսն է, մեր կարծիքով՝ առկա հավելումները կատարվել են իրենց ուրույն մյուռնոնօրհնության ծիսակարգն ունենալու համար:

Մյուռնոնօրհնության ծիսակարգը պարունակող երեք ամենահին ձեռագիր մատյանների (Անթ. Ձեռ. 9, ՄՄ ձեռ. 4997, ՄՄ ձեռ. 5702) եւ 1876 եւ 1890 թթ. Վաղարշապատում հրատարակված Մյուռնոնօրհնության կա-

նոնների ծիսական միավորների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ մեզ հասած ամենահին Մյուռոնորհություն կանոնի (Անթ. ձեռ. 9) ծիսական միավորները չնչին տարբերություններով կիրառվում են այժմյան Մյուռոնորհության ծիսակարգում: Այս մասին Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը հետևյալն է գրում. «Մայր Աթոռի մատենադարանում միւռոնորհութեան կարգը միայն 6 ձեռագիր Մաշտոցների մէջ գտանք, որոնք, գրուած լինելով ԺԳ.—ԺԸ. դարերում՝ գրեթէ բոլորովին նոյնութեամբ են առաջ բերում բոլոր խրատներն ու ընթերցուածները, ինչ որ 1876 թուին Ս. Էջմիածնում տպուած եւ ներկայումս գործածական օրինակը.... յամենայն դէպս կարելի է վստահութեամբ ասել, որ գոնէ ԺԳ. դարից այս կողմ նոյնութեամբ պահուել է այժմեան կարգը»¹⁹:

РЕЗЮМЕ

В статье «Чин освящения Святого Мира: ритуально-исторический обзор» сделана попытка обрисовать ход исторического развития обряда освящения Святого Мира, сравнивая исторические источники, особенно рукописные и печатные каноны освящения Святого Мира. В этой статье впервые рассматриваются древнейшие известные нам чины освящения святого Мира (Антелиас № 9, ММ 4997, ММ 5702), раскрывающие истоки и процесс становления нынешнего обряда. Также сравнены обряды трех вышеупомянутых древнейших патриарших ритуальных книг «Маштоц» с канонами освящения Святого Мира, напечатанными в 1876 и 1890 годах в Вагаршапате, чтобы показать ход исторического развития чина освящения Святого Мира.


SUMMARY

In the article entitled «The Blessing Ceremony of the Holy Myron: Ritual-Historical Review», I tried to outline the historical development course of the blessing ceremony of the Holy Myron by comparing historical sources, especially the handwritten and printed canons of blessing the Holy Myron. In this article, for

¹⁹ Կ. ԵՊՍ. ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ, Սուրբ Միւռոնի օրհնութիւնը, Ս. Էջմիածին, 2008, էջ 24:

the first time, the oldest rites of blessing the Holy Myron known to us (Antelias No. 9, MM 4997, MM 5702) are examined, revealing the origins and formation process of the current ceremony. I have also compared the rites of the three above-mentioned oldest Patriarchal “Mashtots” ritual books with the canons of blessing the Holy Myron printed in 1876 and 1890 in Vagharshapat to show the historical development course of the blessing ceremony of the Holy Myron.





Doi: 10.56737/2953-7843-2022.11-43

ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Պատմական եւ բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՄ

«ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ»-Ի ԺԱՄԱՆԱԿԸ, ԴԵՂԻՆԱԿԸ, ՍՏԵՂՍԱՆ ՉԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ, ԹԱՐԳԱՆԻՉ-ԽՄԲԱԳԻՐԸ

Սկիզբը՝ թիվ ԺԱ.:

* * *

Պատմական իրականությունն արտացոլող ամենահավաստի փաստը, այդ առումով, մինչեւ այժմ աննկատ է մնացել հայագետների ուշադրությունից: Այն թաքնված է Ը. Ճառում (էջ 88—89):

Ս. Հոգու վարդապետությունն առաքյալների եւ մարգարեների միջոցով մեզ՝ հայերիս է ավանդվել, որ ճանաչենք Աստծուն եւ ապրենք Նրա արդար օրենքներով: Իսկ ինչպե՞ս վարվեն այն ազգերը, որոնք չունեն եւ չգիտեն այդ օրենքները: Գրիգոր Լուսավորիչը հարցին պատասխանում է Պողոս առաքյալի օգնությամբ¹՝ դիմելով հարեւան ազգերի՝ պարսիկների եւ հույների, ապա բոլոր ազգերի օրինակին, թե ինչպե՞ս են նրանք ապրում առանց աստվածային օրենքի (= քրիստոնեական կրոնի):

«Նա եւ Պարսիկք եւ այլ խուժադուժ ազգք, որ ոչ գիտեն զօրէնս, բնութեամբ զօրինացն գործեն, ըստ Առաքելոյ բանին, եւ ի ձեռն դատաւորաց պատժեն զպիղծս եւ զանիրաւս: Եւ միշտ սպառնալիք իշխանաց եւ դատաւորաց առ անխտիրսն ի չարիս, առ սուտս եւ երգմնասուտս, նենգաւորս, գողս, սպանողս, շունս, կախարդս, դիւթս, եւ որ ի նոյնս են հոյլք մեղաց: Զորս բանդիւք եւ երկաթի կապանօք եւ պէսպէս տանջանօք խոշտանգեն եւ մահ ի վերայ ածեն, զի այլքն երկիւղ ունիցին եւ արգելցին յանխնայ, անօրէնութենէն» (տ, 263—272):

¹ Ճառ Բ., 17:

Թվում է, որ պարսիկների եւ այլ խուժադուժ ազգերի օրինակը միանգամայն իրավացի բերված կարող է լինել Ե. դարում, որովհետեւ այդ ազգերը քրիստոնեություն չէին ընդունել, բայց չշտապենք եւ շարունակենք ընթերցումը:

«Դոյն օրինակ եւ Յոյնք (= Արեւելյան Հռոմեական կայսրությունը) գրով կարգեալ ունին (ոչ թե Ս. Գրքով.— Ա. Ս.) զիրաւունս երախտաւորացն եւ մտերմից պարգեւօք եւ մեծարանօք պատուեն, իսկ անօրինացն եւ անհնազանդիցն եւ ամբարհաւաճիցն եւ անառակիցն եւ պղծոցն պատուհասիւք եւ պատժովք եւ դառն նեղութեամբք նեղեն, զի խրատեսցին ի բաց կալ ի մեղաց եւ գործել զբարիս հանապազօր, զի մի՛ վրդովեսցի աշխարհս յանիրաւաց, այլ խաղաղութիւն եւ զշինութիւն կալցի: Նոյնպէս եւ ամենայն ազգք եթէ ոչ կայցեն յիրաւունս արդար դատաստանին Աստուծոյ, զի ունին կարգիչս եւ իրաւունս դատաստանօք եւ խրատու ուղղել, զի մի՛ ամբօխ եւ մարտ յուզեսցին.... զի չիք ազգք, որոց ոչ իցեն իրաւունք ի դատաւորաց.... թէպէտ եւ ոչ ծանեան զԱստուած եւ փառաւորեցին կամ գոհացան, զի ոչ խնդրեցին զԱստուած ունել ի գիտութեան, այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց եւ խաւարեցան անմտութեամբ» (տ. 276—295):

Պարզվում է, որ ոչ միայն պարսիկ, այլեւ հույն-հռոմեացի եւ բոլոր այլ ազգերը բնական մղումով են կիրառել պատիժ եւ պարգեւ, ոչ թե Ս. Գրքի աստվածային օրենքով, քանզի չեն ճանաչել ճշմարիտ Աստծուն: Սա նշանակում է միայն մի բան, որ հեղինակն ապրել է Գ.—Դ. դարերում, երբ դեռ չէին եղել առաջին տիեզերաժողովն ու Կոնստանդիանոս կայսեր քրիստոնեհաճ բարեփոխումները: Սա նաեւ նշանակում է, որ Գրիգոր Պարթեւի աչքին Հռոմի կայսրության մեջ տարածված քրիստոնյա համայնքները դեռ չէին որոշում տվյալ ազգի ու երկրի կրոնական դեմքը, քանի դեռ պետությունը չէր ճանաչել այդ կրոնը: Հնարավոր է անգամ նկատել, որ խնդրո առարկա Ը. ճառը գրվել է հայ-հռոմեական պատերազմից առաջ՝ մինչեւ 310 կամ 311 թվերը, մինչեւ քրիստոնյաների հալածանքի ավարտը եւ Գալերիոսի էդիկտը (311 թ.)² քրիստոնյաների հանդեպ հանդուրժողական լինելու մասին:

Այժմ, երբ արդեն կասկածից վեր են «Յաճախապատում»-ի պատկանելությունը Դ. դարի առաջին քառորդին եւ Մաշտոցի՝ հայերեն

² См. А. П. Каздан, От Христа к Константину, Москва, 1965:

Թարգմանած ու խմբագրած լինելը, անհրաժեշտ է ցույց տալ, որ այն դուրս է եկել Հայոց եկեղեցապետ Գրիգոր Պարթևի օտարալեզու գրչի տակից՝ չբավարարվելով եկեղեցական ավանդույթով ամրացված հեղինակային անվամբ:

Այո՛, ամեն մի ճառ առանձին կրում է Գրիգոր Լուսավորչի անունը, բայց դա գալիս է ոչ թե Թարգմանիչ-խմբագրից, այլ օտարալեզու ժողովածուի կազմողից, որովհետեւ վերջինս այդ ճառերը հավաքել է հատ-հատ՝ իբրեւ Գրիգորի գրած թղթեր: Այսինքն՝ պետք է ենթադրել, որ կազմողը պահպանել է նույն գրքի մեջ դրված ճառերի հատ-հատ ունեցած նախկին հեղինակային նշումները: Եթե դա արած լիներ Թարգմանիչ Մաշտոցը, ինչպես ասում են ոմանք՝ կեղծ հիմնավորմամբ, թե իբր գրքի հեղինակությունը բարձրացնելու համար, ապա պետք է ասել, որ Ե. դարում ամենամեծ հեղինակությունները Սահակն ու Մաշտոցն էին, որոնք նույնպես անմիջապես մահից հետո հռչակվեցին սրբեր: Դեռ ավելին՝ ըստ է. դ. Եզնիկ Երեցի՝ Մաշտոցն էր, որ «կարգ գործոցն Գրիգորի նորոգեալ»³, ինչը բնականաբար բարձրացնում էր այդ «կարգի» հավաստիության աստիճանը: Եզնիկի խոսքից պետք է հասկանալ ոչ թե Ս. Գրիգորի ազաթանգեղյան առասպելի մշակումը, ինչպես կարծել է Ն. Մառը⁴, կամ նրա մասին եղած վարքախոսական նյութերի շարադրումը, ինչպես կարծել է Ն. Ադոնցը⁵, այլ այն, որ Մաշտոցը վեր է հանել Ս. Գրիգորի արած գործերը, հաստատած կարգերը եւ կանոնները, նրա գրական ժառանգությունը, այդ թվում եւ «Յաճախապատում»-ը, վերջապես նրա պաշտամունքի եւ հիշատակի տոների հետ կապված հարցերը: Թե չէ միայն վարքի շարադրումը չէր կոչվի գործերի կարգի նորոգում:

Իհարկե, միջնադարում եղել են կեղծ վերագրումներ այս կամ այն հեղինակավոր սրբի անունով, բայց «Յաճախապատում»-ը դրա հետ կապ չունի: Այն գործնական նպատակներով գրական թուղթ-խրատներ-րի, բարոյական հրահանգների, հուզող հարցերի մեկնաբանումների շտեմարան է: Այդ գործնական նպատակադրումը ստիպել է հեղինակին գրել երկխոսական բացատրական ոճով, որի հետքերը պահպան-

³ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ., Երեւան, 2006, էջ 184–201:

⁴ Տէս Н. МАРР, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (арабская версия), СПб, 1905, էջ 178–180:

⁵ Տէս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 342:

վել են նաեւ հայերեն թարգմանություն մեջ: Օրինակ՝ Բ. ճառում երկխոսական ոճից անգամ կարելի է կռահել, թե ինչ հարց է ուղղված եղել Գրիգոր Պարթևին:

«Այլ թե ասիցէ որք՝ որպէս ներեաց Աստուած սատանայի՝ այնքան տառածել զմոլորութիւն եւ զանօրէնութիւնս, իմացիր, — պատասխանում է Գրիգորը, — զի իշխանական կամս է հրեշտակաց եւ մարդկան՝ որ յԱստուծոյ պատուեալ, զի որ ընտիրքն իցեն ի նոսա, երեւեսցին եւ ըստ արժանեացն ընկալցին զհատուցումն» (տ. 474—478)⁶:

ԺԳ. ճառում երկխոսական ոճի միջոցով այնքան հստակ են սահմանազատվում հարցն ու պատասխանը, որ մնում է կիրառել համարժեք կետադրություն. «Եւ եթէ ասիցէ որք, եթէ զիարդ մօտ ի վախճանն զղջացեալ խոստովանի եւ ողբայ զգործեցեալ զյանցանսն եւ խոստանայ ապաշխարել եւ խնդրել զմարմին եւ զարիւն Քրիստոսի հաւատովք ի քաւութիւն, զինչ առ նոսա յոյս փրկութեան իցէ» (տող 231—235): Սրան անմիջապես հետեւում է պատասխանը. «Զի եթէ մօտ ի վախճան իցեն.... եւ օտարացեալ ի նախախնամական սիրոյն յառաջագոյն դառնայ ի վախճանի ի զղշումն եւ ի խոստովանութիւն.... եւ հայցէ զփրկական խորհուրդն.... մի՛ անյոյս լիցի» (տող 238—243): Այնքան ակնառու է հարց տալը, որ ԺԳ. ճառի գրիչը կամ կազմողը հարցը ձեւակերպելուց հետո բնագրում նշում է «Պատասխանի» բառը, որից հետո բերվում է պարզաբանումը: Բայց երկխոսական ոճը պարտադիր չէ, որ ունենա հարց ու պատասխանի ձեւ, այն կարող է արտահայտվել հենց շարադրանքի բովանդակությամբ, ինչպես դա երեւում է ԻԲ. ճառի առաջին իսկ տողից. «Որ տկարութիւն դնէ աստուածութեանն զօրութեանն, արտաքոյ ճշմարտութեան հաւատոցն է: Զի ասեն՝ երբեմն կարող եւ երբեմն ոչ: Անմիտք, եթէ Աստուած տկարանալով է որ զօրացուցանէ....» (տ. 1—4): Հետեւաբար Գրիգորը բացատրում է, որ Աստված միշտ կատարյալ, զորավոր եւ աննվազ է, անկարող է մարդկանց եւ հրեշտակների օգնության, ինքն է օգնում փոփոխուն արարածներին իրենց կարիքների մեջ, ինչպես, օրինակ, գրում է աստղերի մասին. «Այլ եւ աստեղք ըսպասաւորեն ի զիշերի նաւագնացաց եւ ըստ այլ եւս շարժմանց առ ի պէտս մարմնաւորաց, այլ ոչ ըստ հեթանոսական բարբաջմանցն, որ բախտս եւ ծնունդս ասեն» (տ. 37—40):

⁶ Տե՛ս նաեւ ճառ Ե., տող 210, 217, 239—241, 249, ճառ Թ., տ. 347—355, ճառ ԺԳ., տող 231—246, 249—251, ճառ ԺԵ., տող 106—108, 136—141, 186—191, ճառ ԺԸ., տող 30—31, 48—50, ճառ Ի., տ. 316—317 եւն:

Շատ չծավալվելով՝ ասենք, որ ճառերի երկխոսական ոճն ու բանավիճային ոգին մեզ տանում են դեպի գործնական միջավայր, որտեղ տիրում էր քրիստոնեական ուսմունքի եւ բարոյականության արմատավորման եռուզեռը, եւ որին ներկա էին թե՛ հնաբնակ քրիստոնյաներ, թե՛ նորագարձներ եւ թե՛ մանավանդ, հեթանոսներ, բայց ոչ երբեք՝ հինգերորդ դարերը: Ուրեմն ո՞վ է, ո՞վ կարող է լինել այս եռուզեռի կենտրոնում, եթե հաշվի առնենք, որ ճառերի մի զգալի մասի հասցեատեր են թեմի առաջնորդները, եկեղեցու մյուս պաշտոնյաները, հատկապես քահանաները եւ վանահայրերը, այսինքն՝ նրանք, ովքեր կոչված էին ուսուցանելու: Իսկ սրանց ուսուցիչը, քարոզիչը, մեկնիչը, բարոյախոսը պետք է որ լիներ տվյալ գործի պատասխանատուն եւ գլխավորը՝ կաթողիկոս Գրիգոր Պարթեւը, որը քարոզչության համար կոչվել է Ագաթանգեղոս (= ավետաբեր, քարոզ), դեռեւս Գ.—Դ. դարերում, իսկ երկիրը դարձի բերելու, մկրտելու եւ եկեղեցավարելու համար կոչվել է Լուսավորիչ՝ Ն. դարում: Այսինքն՝ Գրիգոր Պարթեւը խրատների միջոցով պատրաստում էր ուսուցիչներ, որպեսզի սրանք, ժողովրդի մեջ սերմանելով Ս. Գիրքը, ստեղծեն նոր ուսմունքի կենտրոններ՝ վանքեր:

Օրինաչափ հարց է ծագում. եթե «Յաճախապատում»-ի հեղինակը Գրիգոր Պարթեւն է, ապա ուրեմն հնարավոր են ինչ-ինչ աղերսներ նրա ճառերի եւ մյուս գրվածքների միջեւ, որոնք մեզ են հասել հարցմունքի եւ կանոնի ժանրերով:

Առաջինը վերնագրված է «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա»⁷, որից քաղված են Ներսես Մեծի հարցումին ի պատասխան գրված Եպիփան Միայնակյացի թուղթը⁸ եւ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի համապատասխան էջերը⁹, եւ որի վերնագրից կարելի է դատել, որ սա հերթական հարցումն է ի շարս այլ մեզ չհասածների:

Երկրորդը կոչվում է «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի յաւելումն Նիկիական»¹⁰, որի 30 կանոնները պարունակում են հրահանգներ, թե ինչ տիպի հանցանքների դեպքում ապաշխարության ինչ ժամկետներ սահմանել: Եւ ահա դրանցից 4-րդ կանոնը պահանջում է, որ «որք երթան ի

⁷ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 72–90:

⁸ Անդ, էջ 49–50:

⁹ Անդ, էջ 78–90:

¹⁰ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երեւան, 1964, էջ 594:

տունս հեթանոսաց եւ ուտեն եւ ըմպեն անխտիր, Գ. ամ արտաքո ապաշխարեն»։ Գրեթե բոլոր մեկնաբանները համակարծիք են Լ. Խաչիկյանի հետ, որը համարում է, որ տվյալ կանոնի գրության ժամանակ «կան դեռեւս մեծ թվով հեթանոսներ, որոնց նկատմամբ քրիստոնյաներից շատերը շարունակում են ունենալ բարիդրացիական հարաբերություններ»։ Բայց անհնար է թվում, որ Դ. Գ. սկզբներին Եկեղեցին արգելեր քրիստոնյաներին՝ հեթանոսների տուն այցելել, որը նոր կրոնի պետականացումից հետո քարոզչության ամենատարածված ձևերից մեկը պիտի լիներ։ Նման այցերով քրիստոնյաները պետք է առինքներին, գրավիչ դարձներին իրենց վիճակը, որպեսզի դարձի բերեին հարեւան հեթանոսներին եւս։ Եւ եթե կանոնը հրահանգում է չայցելել, նշանակում է պետք է այն կարգալ ոչ թե «ի տունս», այլ «ի տաւնս», որտեղ էլ կարող էր լինել ուտել-խմելը։ Այսինքն՝ չի կարելի մասնակցել հեթանոսների տոներին եւ ճաշակել նրանց զոհերը, դրանով քրիստոնյան ակամա դառնում է հեթանոս, որի համար էլ բավականին խիստ պատիժ է սահմանվում՝ ապաշխարել երեք տարի։ Հենց այս նոր ընթերցման շնորհիվ է կանոնը կապվում Գրիգոր Պարթեւի եւ նրա ժամանակի հետ, երբ դեռեւս գոյավարում էին հեթանոսական տոներն ու պաշտամունքները։ Ահա սրանք են, որ վերացել էին Ե. դարում, ուստի հնարավոր չէ կանոնի հեղինակ համարել Սահակ Պարթեւին կամ Մաշտոցին։ Հետեւաբար 4-րդ կանոնի օրինակով կարող ենք վստահանալ, որ Նիկիականին հավելված 30 կանոնները՝ հավանաբար որոշ լրացումներով, լիովին պատկանում են Գրիգոր Պարթեւին, ինչպես վկայում է Լ. Խաչիկյանի մեջբերած ձեռագրի կանոնախմբի (ԺԶ.—Խ.) խորագիրը. «Սահմանադրութիւն կարգաց՝ ընկալեալ ի նահատակէն տեառն Գրիգորէ, թարգմանեցաւ ի ձեռն Եզնկայ, հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին Հայոց եւ նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն Վանաց» (ՄՄ, ձեռ. հմր 659, Թ. 227բ)¹¹։

¹¹ Հմմտ. ԱՐԵՎ ՄԽԻԹԱՐԵԱՆՅՑ, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառանգաւորաց, Վաղարշապատ, 1874, էջ 25—37։ Հայտնի է նաեւ այլ տարբերակ՝ առանց Եզնիկի անվան. «Այս սահմանադրութիւն կարգաց գրեցաւ հրամանաւ երանելոյն Սահակայ մեծ հայրապետի Հայաստան աշխարհի։ Ընկալեալ ի քաջ նահատակէն ի տեառնէ Գրիգորէ, թարգմանեցաւ միայն ի Յունէ ի Հայ»։ Որից հետո ասվում է. «Արդ եթէ ոք անհնազանդեալ կանոնին՝ նորաձեւել յանդգնեացի զկարգեալ սահմանադրութիւնս, մի՛ ընկալցի մասն եւ վիճակ ժառանգութեան յարքայութեան Քրիստոսի Աստուծոյ»։ Ավարտվում է նորից Գրիգորի հիշատակմամբ. «Որ միաբանեալ կատարեսցէ՝ ընկալցի զօրհ-

Վանական կյանքին վերաբերող կանոն-հրահանգներն առնչվում են «Յաճախապատում»-ի ԻԳ. ճառի հետ, եթե չշփոթենք խմբագիր Մաշտոցի հավելումների հետ, իսկ հեթանոսական կախարդների ու դյուլների թեմայով կանոններն առնչվում են Գրիգոր Պարթևի «Հարցում»-ի հետ: Մեր խնդիրն է վեր հանել նաև «Հարցում»-ի եւ ճառերի առնչությունները, որոնք չեն կարող չլինել, եթե դրանք նույն գրչի արգասիք են: Այսինքն՝ պետք է լրարժեք ակնկալել, որ ինչպես հեղինակը տարբեր ճառերում տարբեր առիթներով կամ կրկնվող հարցերի դեպքում նույն միտքն արտահայտում է նույն կամ հոմանիշ բառերով, բայց ոչ նույն ձևակերպմամբ, կամ ինչպես նույն ճառի տարբեր մասերում նա կարող է կրկնել նույն միտքը փոքր-ինչ այլ նպատակով, այդպես էլ պետք է նույն մտքերը կրկնվեն ճառերի եւ «Հարցմունք»-ի միջեւ: Մանավանդ որ այդ «Հարցում»-ը, ինչպես երեւում է վերնագրից՝ «Դարձեալ հարցումն....», միակը չի եղել, այլ միայն մեկն է մեզ հասել: Անգամ հնարավոր եմ համարում, որ Գրիգոր Պարթևը ոչ թե հարց ու պատասխաններ է հորինել, այլ հարցերին ի պատասխան գրված թղթերը կամ ճառերը ժամանակի ուսյալները հարցմունքի ժանրի են վերածել՝ ընտրելով ամենահրատապ նյութերը եւ բաց թողնելով մյուսները:

Ասվածի հավաստիացման համար պետք է առնվազն ցույց տալ, որ «Հարցում»-ը եւս գրել են հունարեն եւ թարգմանել Ե. դ.՝ նորին Մաշտոցը կամ նրա աշակերտները: Այդ հարցում, բարեբախտաբար, մենք չենք բավարարվի թարգմանության հունարեն ոճը վկայակոչելով, այլ ընթերցողի ուշադրությանը կհանձնենք բնագրային մի նուրբ դիտարկում «Հարցում»-ի էջերից:

Բանն այն է, որ թիվ14 հարցը խորքում սխալ պատկերացումից է բխում, եւ պատասխանը կոչված է նախ այն ճշտելու, ապա բացահայտելու իրականությունը:

«14. Հարցումն. Ծնունդք են դիւաց եւ մահ, աճեն եւ պակասեն:

Պատասխանի. Նախ զայն տեսցուք, թէ գո՞ն այլ արարածք բանաւորք, քան զհրեշտակս եւ զմարդիկ եւ զգեւս....» եւ այլն: Եւ պարզաբանելուց հետո, որ այլ արարածներ չկան, բոլոր անմարմին ոգիները համարվում են թվացյալ՝ ուստի եւ անվանադրված ժողովրդի կողմից: «Թէպէտ եւ ասեն

նութին ի Տեառնէ Աստուծոյ, հաղորդելով պարգեւացն եւ անվախճան հանգստեան եւ երջանիկն Գրիգորի եւ հօր մերոյ Իսահակայ....» (տես Վ. ՀԱՅՈՐԵԱՆ, Կանոնագիրք Հայոց, Ա., էջ 402, ծան. էջ 626):

յուշկապարիկը եւ համբարուք եւ պարիկը եւ պայք, ըստ կարծեալ մտաց մարդկան ասին եւ ոչ ըստ բնութեան, զի դիւաց է կերպարանս ցուցանել, եւ մարդիկ զկերպարանս անուանադրեն... Նոյնպէս եւ գրոց զանուանս նոցա՝ առ ի նշանակելոյ զսաստկութիւն աւերածի աշխարհի, յուշկապարկաց ասեն բնակել յաւերակս, զի ի յոյն լեզուն յուշկապարիկն իշացու թարգմանի»¹²։ Որեւէ այլալեզու բնագրում, եթե այն շունի լեզվաբանական, բացատրական բառարանային բնույթ, ավելորդ կդիտվեր հունարեն զուգահեռ բառը հիշելը։ Դա իմաստ կունենար միայն այն դեպքում, եթե ճառը գրված լիներ հունարեն, եւ կարիք լիներ, հայկական ժողովրդական ոգու անունը բառացի հայերեն գրելուց բացի («յուշկապարիկ»), մոտավորապես համեմատել եւ նմանեցնել կենտավրոսին։ Այսինքն՝ Գրիգոր Լուսավորիչը «յուշկապարիկ»-ը հունարեն թարգմանել է կենտավրոս, իսկ Մաշտոցը կամ Եզնիկը, նորից հետ թարգմանելով հայերեն, ստացել են իշացու։ Կրկնում եմ. եթե բնագիրն ի սկզբանե գրվեր հայերեն, հունարեն բառին դիմելու կարիք չէր լինի։ Դա նշանակում է, որ «Հարցում»-ը գրվել է հունարեն՝ այն էլ Դ. դարի առաջին կեսին։ Ինչո՞ւ։ Որովհետեւ պարզվել է, որ Դ. դարի կեսերին Ներսէս Մեծն այդ նույն ժողովրդական ոգիների մասին հարցում է ուղղել Եպիփան Միայնակյացին, իսկ վերջինս, լինելով հույն, հայ կաթողիկոսին պատասխանել է խնդրո առարկա «Հարցում»-ի օգնությամբ՝ քաղաքելով նրանից մեր իսկ մեջբերած հատվածը թիվ 14 պատասխանից։ Ինչ վերաբերում է «Հարցում»-ի եւ Եպիփանի բնագրային տարբերություններին, ապա, ինչպես իրավամբ գրել է մեր երախտաշատ ուսուցիչ Լ. Խաչիկյանը, «Նկատվող տարբերությունների մի մասը հավանաբար առաջացել է այն ժամանակ, երբ այդ զույգ բնագրերը տարբեր անձնավորությունների կողմից հունարենից թարգմանվել են հայերեն»¹³։ Ասված է ճշգրիտ։

Արդ, եթե «Հարցում»-ից այդքան վաղ օգտվել է Եպիփանը, մյուս կողմից էլ, եթե հաջողվի ցույց տալ, որ «Հարցում»-ը «Յաճախապատում»-ի հետ ունի ընդհանուր թեմա եւ արտահայտման նման լեզվամիջոցներ, ապա կարող ենք վստահ լինել, որ «Հարցում»-ի հեղինակը եւս Գրիգոր Պարթեւն է, ինչպես պահպանվել է հայ ձեռագրային ավանդույթում։

Այսպես՝ համադրենք «Յաճախապատում»-ի եւ «Հարցում»-ի մի քանի դրվագներ։

¹² Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 84։

¹³ Անդ, էջ 50։

1. ՅՃԽ. «Զի եթէ ոչ էր ահ Տեառն ի վերայ մեր, ամենեքեան զմեզ սատակէին» (Ճառ Դ., տ. 200–201):

Հարցումն. «...թէ ոչ Աստուծոյ ահն պահէր՝ ազգի-ազգի խեղդութեամբք խեղդէին»¹⁴:

Հետաքրքիր է, որ Եզնիկ Կողբացին այս միտքը գործածել է երկու անգամ, մեկը՝ «Յաճախապատում»-ից¹⁵, մյուսը՝ «Հարցում»-ից:

Եզնիկ. «Զի եթէ ոչ սաստ արարչին նահանջէր զնոսա, մի մի ի նոցանէն բաւական էր զամենեսին սատակել» (էջ 16):

Եզնիկ. «Եթէ ոչ Աստուծոյ սաստ պահէր, ազգի ազգի խեղդութեամբք խեղէին եւ անհնարին մահուամբք սպանանէին» (էջ 83): Կարելոր է նշել, որ երկու դեպքում էլ Եզնիկը չէր կարող չգիտակցել, որ իր աղբյուրը Գրիգոր Լուսավորիչն է, որովհետեւ նա ստեղծագործել է իր ուսուցիչ Մաշտոցի անմիջական իրազեկման պայմաններում:

2. ՅՃԽ. «Սոյնպէս եւ անմարմին զօրացն է իշխանական կամօք կալ ի հրամանի... Այլ եւ զապստամբսն ի նոցանէ իսկ ասի սատանայ, եւ որք ընդ նովաւ զօրք, այսք պիղծ եւ շարասէրք անուանին» (Ճառ Դ., տ. 236–237, 240–242):

Հարց. «...զի այնու զմարդիկ յԱրարչէն ապստամբեցուցէ» (էջ 89):

3. ՅՃԽ. «...այլ յաստուածայնոցն իմացեալք ի ճշմատութեան աւանդիցն սուրբ Գրոց եւ յուղիղ հանգամանաց» (Ճառ Ի., տ. 450–451):

Հարց. «ՅԱստուածային Գրոց եւ ի բնութենէ արարածոց յայտ է» (էջ 84):

4. ՅՃԽ. «...զի Ես եմ, ասէ Տէր, որ սպանանեմ եւ կեցուցանեմ, հարկանեմ եւ բժշկեմ եւ ոչ ոք իցէ որ հանիցէ զձեզ ի ձեռաց Իմոց»¹⁶ (Ճառ Ի., տ. 444–446):

Հարց. «...զի ի ձեռս Աստուծոյ է ամենայն, որպէս ասաց մարգարէին. Եւ սպանանեմ եւ ես կեցուցանեմ» (էջ 80):

5. ՅՃԽ. «Եւ այն որ ի տղայութեան եւ ի մանկութեան առնու զվախճանն աշխարհիս, զերծեալ լինի ի փորձութեանց հոգւոց աշխարհականաց, եւ զգուշութիւն լինի» (Ճառ ԺԵ., տ. 35–37):

¹⁴ Անդ, էջ 83: Այսուհետ էջերը կնշվեն փակագծով:

¹⁵ Եզնիկի այլ քաղումներ «Յաճախապատում»-ից տե՛ս Գ. ԳԱԼԷՄՔԱՐԵԱՆ, Նորագոյն աղբերք Եզնկայ Կողբացւոյ Ընդդէմ աղանդից մատենի, Վիեննա, 1919, էջ 16–17 եւ այլ հեղինակներ:

¹⁶ Հմմտ. Բ. Օր., ԼԲ., 39:

Հարց. «Եւ տղայոցն յայն սակս պատահի այն (վախճանը.— Ա. Ս.), զի մի՛ արդարն ի բարիս գործելոյ դադարեսցէ, եւ մի՛ մեղաւորն ի մեղս յամել կարասցէ» (էջ 79):

Ավելորդ չեմ համարում անելու մի զուգադրում նաեւ «Հարցում»-ի եւ «Վարդապետութեան» միջեւ՝ նկատի ունենալով վերջինիս եւ «Յաճախապատում»-ի միջեւ եղած բնագրային կապը:

6. Հարց. «....ընդ բարբառ բանիցն նայիցիս, թէ ընդ ճշմարտութիւն իրացն» (էջ 74):

Վարդ. «Եւ զինչ իցէ որ ասէ Բանն, մի՛թէ բարբառ լոկ իցէ» (Յ424):

Իսկ վերջում «Հարցում»-ից մեջբերենք ամենատարածված հարցը (թ. 13) համայն քրիստոնյա աշխարհում, որի պատասխանը եւս շատ տարածված է:

7. «13. Հարցումն. Մեղաւորք վասն մեղաց տանջին, իսկ տղայոց անմեղաց զի՛ տիրեցեն դեւք»:

Պատասխանի. Զամենայն մարդ յորդեգրութիւն կոչէ Աստուած.... զորոց ասէ իսկ. Ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել: Արդ, զի իբրեւ յորդիս մատուցեալ է մեզ Աստուած առ երբեմն խրատել.... Ապա մինչ այսու եւս ոչ խրատիմք, ի մեզ առաքէ տանջանս պէս պէս ցաւոց.... մտանէ եւ դիւաց զտղայս մեր, զի ի միտ առցուք, թէ արդարն հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն ո՛ւր ապրի» (էջ 78—79), շարունակությունը բերված է վերը՝ թ. 2): Այս մեջբերման համար բնագրային եւ գաղափարային զուգորդումներ կարելի է գտնել նախ եւ առաջ «Յաճախապատում»-ի եւ «Վարդապետութեան» մեջ, որոնց հղումները բաց եմ թողնում ժամանակի սղության պատճառով:

8. Օրինակները սահմանափակենք եւս մի մեկբառանոց համադրումով, որը, սակայն, օժտված է հոգեբանական բնութագրական ուժով: «Յաճախապատում»-ի ճառերից մեկում հեղինակը գուցե փոքր-ինչ համառող այլախոհներին անվանում է «անմիտներ» (Ճառ. ԻԲ.): Նույն կերպ «անմիտ» է անվանում «Հարցում»-ի զրուցակցին, որ կարծում է, թե արալեզր պատերազմում զոհվածին լիզելով ողջացնում է. «Անմիտ, արդ զի՛ չբժշկեն, ո՛չ նոյն պատերազմունք եւ արդ են» (էջ 86): Այս մի հատիկ բառով արտահայտված է նույն բանավիճային կիրքը երկու բնագրերում էլ:

Այսպիսով՝ արված բնագրային համադրումներից կարելի է համոզվել, որ «Յաճախապատում»-ի եւ «Հարցում»-ի միջեւ կան ոչ միայն եւ ոչ

այնքան բառացի բնագրային համընկնումներ, որքան մտքի, մտածողության, թեմաների եւ աշխարհայցքի նույնություն: Իսկ այդ նույնության աղբյուրը, որից առատորեն ըմպել են Սահակն ու Մաշտոցը՝ իրենց աշակերտներով, Գ. դ. վերջի Ագաթանգեղոս եւ Դ. դ. առաջին քառորդի կաթողիկոս Գրիգոր Պարթեւն է:

Պատմաբանասիրական հետազոտության շղարշի տակ «Յաճախապատում»-ի երկարատեւ չարչրկման հետեւանքով այն որպէս Մաշտոցի գործ ճանաչելն ուղիղ կապ ունի գիտության մեջ եւս Գրիգոր Պարթեւի անձի առասպելականացման հետ: Պատկերացնել, թե ինչպէս կարելի է «Յաճախապատում»-ի հիման վրա բնութագրել Մաշտոցի հայացքները, դրա վառ ապացույցն է¹⁷: Գրիգոր Լուսավորիչն իր իսկ գործի հեղինակ դառնալու համար նախ պետք է վերաճանաչվեր իբրեւ պատմական հասարակական-քաղաքական գործիչ ու նոր կրոնի քարոզիչ:

Այժմ, երբ դա արված է, հարկ է արդեն «Յաճախապատում»-ի եւ մյուս գրվածքների բովանդակությունից բխեցնել հեղինակի իրական աշխարհայացքը, ճարտասանական արվեստը, վերջապէս նրա տողերի միջից առանձնավորվող այն անձը, որն առանց սրբի պսակի՝ պիտի փառավորվի հայ եւ համաշխարհային մտքի, քրիստոնեական մշակույթի պատմության մեջ իբրեւ մեծագույն բարոյաբան:

Այսինքն՝ Ագաթանգեղոսի «Պատմութեան» հերոս Գրիգորից բացի՝ ուսումնասիրել եւ վերականգնել նաեւ ագաթանգեղոս Գրիգոր Պարթեւին, որը, անկախ Եկեղեցու ընկալումից ու սրբացումից, դարձել է աշխարհում առաջին պետական Եկեղեցու կազմակերպիչը Մեծ Հայքում Դ. դարի առաջին քառորդում:

Շարունակությունը՝ հաջորդիվ



¹⁷ Նման փորձ արել են նաեւ Մատենադարանի տնօրեններ Ս. Արեւշատյանը (Григорий Просветитель, Многовещательные речи, пер. с древнеармянского, предисловие и примечания С. С. Аревшатяна, Ереван, 2011, էջ 5–14, նաեւ С. С. АРЕВШАТЯН, Формирование философской науки в древней Армении (V–VI вв.), Ереван, 1973, էջ 44–73) եւ Հր. Թամրազյանը (Ստեղծագործ անհատի եւ արվեստի տեսության խնդիրները Մեսրոպ Մաշտոցի «Հաճախապատում ճառերում», ԲՄ, Թ. 19, Երեւան, 2012, էջ 9–20):

ՀԵՐԻՖՆԱԶ ՈՐՍԿԱՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ԳԻ

ՆԵՐՔՈՂ-ՅԱՆԵԼՈՒԿ՝ ՍՐԲՈՑ ԹԱՐԳԱՆՉԱՅՆ ՈՒ ՅԱՅՈՑ զՐԵՐԻ ԱՐԱՐՄԱՆԸ¹

Նոգվածում քննվում է հայոց գրավոր առաջին հանելուկաշարը, որը նվիրված է գրին: Հ. Ղեւոնդ Ալիշանը, Մկրտիչ էմինն այն հրատարակել են ձեռագրերում առկա ընդհանրական խորագրերով՝ «Իմաստութիւն Դաւթի Քերթողի», «Դաւթի Փիլիսոփայի Իմաստութիւն»՝ ենթագրելով, որ հեղինակը Ե.—Զ. դարերում ապրած Դավիթ Անհաղթն է կամ որ նույնն է՝ Դավիթ Քերթողը²: Ուսումնասիրությունը կատարվել է Ա. Մնացականյանի կազմած բնագրի հիման վրա³, որի ձեւակառուցվածքային հատկանիշները թույլ են տալիս ամբողջական պատկերացում կազմել հանելուկի իմաստասիրական բնույթի, գաղափարական նպատակադրման մասին: Հոգվածում մեկնաբանվում է հանելուկը տող առ տող՝ այլաբանական շերտերը վեր հանելու միտումով: Ցույց է տրվում, որ հանելուկի հեղինակը, գիրը համարելով աստվածատուր պարգեւ, արժեւորում է այն՝ իբրեւ սրբագործված երեւույթի, ինչի շնորհիվ հանելուկը վերածվում է յուրօրինակ ներբողյանի, ինչպես Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը:

Հայ գրի գյուտը Ե. դարի սկզբին շրջադարձային երեւույթ դարձավ Հայաստանի համար: Սկսվեց լուսավորական լայնածավալ գործունեություն: Այն հայացրեց եկեղեցական կարգերն ու արարողությունները, հայերեն քարոզների միջոցով ամրակայեց քրիստոնեության գաղափարախոսությունը, բարձրացրեց մարդկանց գրագիտության մակարդակը: Քաղաքական իրադարձությունների պայմաններում, որոնք զարգանում էին

¹* Ստացվել է 15.11.2022, գրախոսվել է 14.12.2022:

էլ. հասցե՝ vorskanyan.heriknaz@mail.ru:

² «Բազմավէպ», Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1848, թիւ 12, էջ 192: МОИСЕЙ ХОРЕНСКИЙ, История Армении, М., 1858, էջ 369. Հանելուկների հրատարակման պատմությունը հանգամանորեն տես Ա. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ, Հայ միջնադարյան հանելուկներ (V—XVIII դդ.), Երեւան, 1980, էջ 15—34:

³ Ա. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 171—174:

ի վնաս հայոց պետականության, հնարավոր եղավ զարգացնել մշակույթն ու գիտությունը, Հայոց Եկեղեցին դարձնել ինքնուրույն ու անկախ:

Ակադ. Ա. Հովհաննիսյանը, անդրադառնալով մաշտոցյան գրերի պատմական նշանակությանը, գրի ստեղծման հանգամանքներն ու շարժառիթները բացատրում է նախ եւ առաջ քրիստոնեությունն ամրապնդելու միտումով, որպեսզի վերջինս իր հերթին միջոց լիներ Եկեղեցու գաղափարական ազդեցության տարածման համար: Գիտնականն այս եզրակացությանն է հանգում՝ հենվելով գրերի գյուտին մոտ հնագույն աղբյուրների վրա՝ Կորյուն, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի, որոնք «հայ ժողովրդի պատմության շրջադարձային այդ ձեռնարկության շարժառիթը տեսնում են Հայաստանում նոր կրոնն արմատավորելու պահանջի մեջ»⁴: Ըստ գիտնականի՝ հոգեւոր-մշակութային կրթությունն է, որ բարձրացնում է հայ ժողովրդի ազգային-քաղաքական ինքնագիտակցությունը եւ նպաստում նրա քաղաքական համախմբմանը⁵:

Ս. Արեւշատյանը գրում է, որ Մեսրոպ Մաշտոցի՝ հայոց գրերի գյուտը, թելադրված պատմական իրավիճակով, երկրի ու ժողովրդի կենսական շահերով, միանգամայն գիտակցված էր, բայց այդ արարքը, ըստ նրա, միջնորդված էր Եկեղեցու եւ կրոնի կարիքներով, որոնց միջոցով, ժամանակակիցների խոսքերով, հնարավոր եղավ ճաշակել «իսկական իմաստությունը եւ լույսը», «ճանաչել իմաստությունը եւ խրատը, հասկանալ բանական խոսքը»⁶:

Ա. Դոլուխանյանը, ներկայացնելով եւրոպացի հայագետների ուսումնասիրությունները Մեսրոպ Մաշտոցի եւ հայոց այբուբենի մասին, նկատում է, որ նրանք անվերապահորեն Մեսրոպ Մաշտոցի կատարածը համարում են գիտական խիզախում. հայոց այբուբենի ստեղծումով հայերն ունեցան այն արդյունքը, «որ անշատվեցին ընդմիշտ Արեւելքի մյուս ազգերից, դարձան զատված մի ազգ՝ ամուր քրիստոնեական հավատով»⁷:

Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթեւը եւ նրանց աշակերտները նախ եւ առաջ ձեռնամուխ եղան Եկեղեցու գաղափարական ազդեցությունն

⁴ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Մաշտոցյան գրերի պատմական նշանակությունը, «Պատմաբանասիրական հանդես», №2, Երեւան, 1962, էջ 4:

⁵ Անդ, էջ 7:

⁶ ՏԷՄ Ս. ԱՐԵՎՏԱՏՅԱՆ, Формирование философской науки в древней Армении (V—VI вв.), Ереван, 2016, էջ 39:

⁷ Ա. ԴՈԼՈՒՃԱՆՅԱՆ, Եւրոպացի հայագետները Մաշտոցի եւ հայոց այբուբենի մասին, 2005, Ս. էջմիածին, էջ 22, 90:

ու ազգի ինքնագիտակցությունը թարգմանական գրականության միջոցով բարձրացնելուն: Դրան զուգահեռ ստեղծվեց ազգային մատենագրությունը, որի առաջին գործերից մեկը՝ Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն, նվիրված էր հայոց գրերի գյուտին. Կորյունի եւ շատերի⁸ համար արդեն ընկալելի էր ամենագոր գրի նշանակությունը հայոց կյանքում, տեսանելի էր ժողովրդի մտավոր եւ հոգեւոր վերածնունդը:

Կորյունն իր առջեւ նպատակ էր դրել համառոտ ներկայացնել Մեսրոպ Մաշտոցի կենսապատումը, գրել միայն սուրբ հայրերի կատարած գործերի կարեւորագույն հանգամանքները՝ որպես քաջալերիչ օրինակներ իրենց հոգեւոր զավակներին⁹: Անհրաժեշտ էր ցույց տալ, որ գիրը հայոց «երանելի եւ ցանկալի» աշխարհին հրեշտականման առաքիլն էր կրոնավոր մարդու ձեռքով տրված երկնային պարգև էր:

«ԶԱզքանազեան Ազգին եւ զՀայաստան աշխարհին զաստուածապարգև գրոյն, եթէ երբ եւ յորում ժամանակի մատակարարեցաւ եւ որպիսի արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երեւեցաւ...»¹⁰, — այսպիսի տողերով է սկսում իր պատումը Կորյունը՝ Աստվածաշնչում հիշատակվող Ասքանազյան վերադիրով ի ցույց դնելով հայոց ազգի կազմավորման ակունքները, ապա Մեսրոպ Մաշտոցին ընծայված աստվածեղեն շնորհը՝ գրերի գյուտը, դիտարկելով իբրեւ աստվածային կամքով նախասահմանված իրողություն:

Ուսումնասիրողներից շատերը Կորյունի գիրքը գնահատել եւ արժեւորել են մասնավորապես իբրեւ գովաբանական պատում՝ անշուշտ ընդունելով նկարագրված իրադարձությունների պատմական հավաստիությունը:

Ըստ Մ. Աբեղյանի՝ Կորյունը գրել է գովաբանական կենսագրություն, որով անմահացրել է ուսուցչի կատարած մեծ գործի պատմությունը¹¹:

Կ. Մելիք-Օհանջանյանի կարծիքով՝ պատմական վավերականություն ունեցող «Վարք»-ը, ըստ էության, ներբողյան է, քանի որ գրվել է ներ-

⁸ Կորյունն իր «Վարք»-ի առաջաբանում նշում է, որ Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը գրել է նրա աշակերտների քաջալերությամբ, մասնավորապես հրամանով «առն միոյ պատուականի Յովսէփ կոչեցելոյ, աշակերտի առն այնորիկ»: Տե՛ս «Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյ սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ Թարգմանչի ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին», Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատությամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1994, հտ. Ա., էջ 83:

⁹ Անդ., իԹ., էջ 106:

¹⁰ Անդ., Ա., էջ 83:

¹¹ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ., Երեւան, 1968, էջ 171:

բողջանի՝ «Պիտոյից գրքում» սահմանված ճարտասանական կանոնների հետեւությունը, եւ նրա «կետ նպատակն է գովերգել, փառաբանել մեծ Վարդապետին ու նրա անբաղդատելի հոգեւոր սխրագործությունը»¹²:

Քն. Տեր-Դավթյանը նույնպէս համակարծիք է, որ Կորյունի նպատակն է եղել իր ուսուցչի եւ նրա գործի մասին պատմել գովաբանական ոճով: Նա վկայակոչում է Կորյունի բառերը՝ «յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել»¹³:

Ա. Ղազինյանը գրում է, որ որոշ վերապահմամբ՝ հայ առաջին ներբողագիր պետք է համարել Կորյունին: Նրա «Վարք Մաշտոցի» երկը ժանրային առումով մոտենում է ներբողին, բայց չի նույնանում¹⁴:

Կորյունին հաջորդող մատենագիրները որդեգրում են նրա ըմբռնումը աստվածապարգեւ գրերի գյուտի առնչությամբ, եւ ժանրային տարաբնույթ ստեղծագործություններում՝ պատմագրության շրջանակում, չափածոյում, ներբողական-քարոզխոսական, դավանական եւ մեկնաբանական գրականությունում, քերականական մեկնություններում, գովերգվում է հայոց գիրը՝ որպէս Աստծու տված պարգեւ, փառաբանվում են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևն ու նրանց աշակերտները¹⁵: Հեղինակից հեղինակ, դարից դար ավելի ու ավելի է շեշտվում գրի աստվածային լինելու հանգամանքը, բայց որոշակի փոխակերպումներով:

Կորյունը գրում է, որ Աստված պարգեւեց գիրը Մեսրոպ Մաշտոցին՝ վերջինիս՝ ազգին մի բարի օգնություն գտնելու համար շատ նեղություններ կրելուց, աղոթքներից ու տքնություններից, արտասովալից պաղատանքներից հետո, եւ Մեսրոպ Մաշտոցն իր սուրբ աշով ծնեց հայերեն լեզվի նշանագրերը¹⁶:

Մովսէս Խորենացին գրի արարումն ուղղակիորեն կապում է հրաշքի հետ. այն տրվել է Մեսրոպ Մաշտոցին աղոթքի մեջ՝ իբրեւ տեսիլ. հոգու աչքերին երեւացել է Աստծու Աջը քարի վրա նշանագրերը գրելիս այն-

¹² Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ, «Վարք Մաշտոցի» ժանրը եւ պատմագրական նշանակությունը, «Բանբեր Մատենադարանի», 7, Երեւան, 1964, էջ 49:

¹³ Քն. ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ, Հայկական սրբախոսություն, Վարքեր եւ վկայաբանություններ (V–XVIII դդ.), 2011, Երեւան, էջ 79:

¹⁴ «Հայ միջնադարյան գրականության ժանրեր», Երեւան, 1984, էջ 149:

¹⁵ Տէն «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», աշխ.՝ Հակոբ Քյոսեյանի եւ Վարդան Դերիկյանի, 2019, Երեւան:

¹⁶ ԿՈՐԻՒՆ, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Ը., էջ 90:

պես, որ մնացել են հետքերը, ինչպես ձյան վրա¹⁷: Աղոթքից հետո Մեսրոպ Մաշտոցն ստեղծել է տառերը՝ «հավաքելով» դրանք իր սրտի գործարանից:

ԺԱ.—ԺԲ. դարերից սկսած՝ տարածում է գտնում գրերի գյուտը Հայաստանում՝ Բալու լեռան վրա գտնվող մի այրում կատարված լինելու մասին ավանդազրույցը¹⁸, որ ձգվում է մինչև ԺԹ. դար՝ իբրեւ պահպանված թանկ մասունք տեղ գտնելով Գարեգին եպս. Սրվանձտյանցի «Ուղեգրութեան» մեջ¹⁹: Գրերի գյուտի պատմությունը ենթարկվում է ազգային-հոգեւոր վերամեկնաբանման: Այս կապակցությամբ Ս. Մարգարյանը նկատում է, որ ոչ միայն տեղայնացվում է նշանագրերի ստեղծման օրրանը, այլև Աստծու մեծագույն շնորհի վայրը ներկայացվում է իբրեւ հայրենիքի ու հայկականության խորհրդանիշ²⁰:

Վերախմբագրման է ենթարկվում նաեւ տեսիլի պատմությունը: Դա, ըստ Վ. Դեւրիկյանի, պայմանավորված է հայոց գրերի աստվածատուր լինելն առավել հստակ եւ առարկայորեն ներկայացնելու ձգտմամբ²¹: Եթե Կարապետ Սասնեցին (ԺԱ.—ԺԲ. դդ.) հետեւում է Մովսես Խորենացուն՝ գիրը տրվել է աստվածային տեսիլով, Մեսրոպ Մաշտոցը սրտի գործարանից դրոշմել է քարի վրա Բալուի այրում, ապա Վարդան Արեւելցին (ԺԳ. դ.) գրում է, որ Աստված Ինքն է Իր Աջով դրանք դրոշմել այրի վեմին²²: Վերախմբագրման է ենթարկվում նաեւ Մովսես մարգարե — Մեսրոպ Մաշտոց գուգահեռն այն շեշտագրությամբ, որ երկուսին էլ գիրը տրվել է բարձունքում՝ լեռան վրա: Նոր հայեցակետ է ձևավորվում Մեսրոպ Մաշտոցի ստեղծած տառերի քանակի շուրջ²³:

Եթե դիտարկենք հայոց գրավոր առաջին հանելուկն այս համապատկերում, ապա նրանում գրի աստվածային հայտնության վերաբերյալ մտահայեցողությունն սկիզբ է առնում ուղղակիորեն Կորյունի գրքից.

¹⁷ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քնն. բնագ. եւ ներած.՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նմանահան.), 1991, Երեւան, Գիրք երրորդ, գլ. ԾԳ., էջ 327:

¹⁸ ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ՍԱՍՆԵՅԻ, Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Ս. Վարդապետին Մեսրոբայ, հրատարակեց Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեան, Ս. էջմիածին, 1897:

¹⁹ ԳԱՐԵԳԻՆ ՎՐԳ. ՍՐՎԱՆՁՏԵԱՆՅ, Թորոս Աղբար Հայաստանի ճամփորդ, մասն Բ., Կ. Պոլիս, 1884, էջ 154—166:

²⁰ Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Գարեգին եպս. Սրվանձտյանցը եւ գրերի գյուտի՝ Բալուի ավանդությունը: Տէս «էջմիածին», 2021, ԺԲ., էջ 104:

²¹ Տէս «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», էջ 29:

²² «Բանբեր Մատենադարանի», 1964, №7, էջ 379:

²³ Տէս «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», էջ 30—34:

որեւէ վերախմբագրման հետքեր չկան: Մեր ուշագրությունից չվրիպեց այն հանգամանքը, որ եթե գրական տարբեր ժանրերում գեղարվեստորեն պատկերվել են Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի, Վռամշապուհի կերպարները, ապա Ե.—ԺԸ. դարերում ստեղծված հանելուկները պարունակած նյութի շրջանակում վերաբերում են միայն գրին ու գրքին, գրչության արվեստին:

Ա. Մնացականյանն առանձնացնում է երկու անխորագիր հանելուկ, որոնք, իր կարծիքով, նվիրված են Սահակ Պարթևին եւ Մեսրոպ Մաշտոցին²⁴: Սակայն հարգարժան գիտնականի վերագրումները դեռեւս հիմնավորման կարիք ունեն:

Մեսրոպ Մաշտոցի կերպարը գծագրված չէ նաեւ քննվող հանելուկում: Փոխարենը հանելուկի ժանրին բնորոշ այլաբանությամբ խոսում է գիրն իր անունից՝ առաջին դեմքով:

Գրի անձնավորման բանաստեղծական պատկերի հիմքում ընկած է գրի սրբագործումը: Քրիստոնեության ամրապնդման առաջնային նախադրյալներից մեկը մարդկանց համար ընկալելի եւ ընդունելի դարձնելն էր նոր ըմբռնումները, աշխարհայացքային փոփոխությունները: Քրիստոնեության պատվարը նախ եւ առաջ եկեղեցին էր, որը համարվել է աստվածային շնորհ: Եղիշեն գրում է. «Այլ եկեղեցիք ոչ են պարգեւք թագաւորաց, եւ ոչ արուեստ ճարտարութեանց, եւ ոչ գիւտք իմաստնոց, եւ ոչ աւար քաջութեան զինուորաց, եւ ոչ պատիր խաբէութիւնք դիւաց, նա եւ բնաւ իսկ ամենեւին զինչ եւ ասասցես յերկրաւորացս, կամ ի վեհից կամ ի վատթարաց, բնաւ ուրեք եկեղեցի ի նոցանէ ոչ գտցի: Այլ շնորհք են մեծին Աստուծոյ, ոչ միում ումեք ի մարդկանէ տուեալ, այլ ամենայն բանաւոր ազգաց, որք վիճակեալք են ի բնակութիւն ի ներքոյ արեգականս»²⁵:

Բայց Հայաստանում 301 թվականից իբրեւ պետական կրոն հռչակված քրիստոնեությունը դեռ դժվարին ճանապարհ էր անցնում: Պատճառները տարբեր էին: Նախ՝ քրիստոնեությունը բերում էր նոր արժեհամակարգ, որի ազդեցությունը մարդկանց վրա ամփոփ արտացոլվում է Ս. Զաքարյանի բնութագրման մեջ. «Կրոնական նոր հավատքը փոխում է մարդկանց զգացական ու մտավոր աշխարհի բովանդակությունն ու

²⁴ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 132—133:

²⁵ ԵՂԻՇԵ, Վարդանի եւ հայոց պատերազմի մասին, թարգմ. եւ ծանոթ.՝ Ե. Տեր-Մինասյանի, Երեւան, 1989, էջ 94:

ուղղվածությունը, ձեւավորվում է մի աշխարհայացք, որում երկրային, բնապաշտական արժեքների փոխարեն հիմնականում են դառնում երկնային, հոգեւոր արժեքները: Մարդու կյանքի իմաստն ու նպատակը վերաիմաստավորվում են, ժամանակը շրջապտույտայինից վերածվում է գծայինի եւ հոսում ապագայից դեպի ներկա՝ արժեւորելով ներկայի բոլոր գործողությունները»²⁶:

Ժամանակ էր անհրաժեշտ, որ աստիճանաբար ձեւավորվեին նոր մշակույթի ընկալման հոգեւոր- գաղափարական նախադրյալները:

Պատճառներից մեկն էլ այն էր, որ աստվածային խոսքը հասանելի չէր. անհասկանալի էին օտար լեզուները²⁷, եւ մարդը՝ անտարբեր՝ խոսքի ու Եկեղեցու հանդեպ: Ինչպես հավաստում է Բուզանդը, շատերը նոր կրոնը հանձն առան առանց ջերմեռանդ հավատի: Կրոնն ընդունեցին ոչ գիտակցաբար, հույսով ու հավատով, ինչպես որ հարկն էր: Միայն քչերը, որոնք փոքրիշատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտությանը, մասամբ հասկանում էին այդ կրոնը: Իսկ ժողովրդի խառնիճաղանջ բազմությունը ոչինչ չէր կարողանում մտքում պահել կամ հասկանալ²⁸:

Բուզանդն արձանագրում է, որ երկրում քարոզչական նպատակներով գործածվող օտար գրերով ազգի հոգեկերտվածքն ու մտածելակերպը փոխելը դյուրին չէր՝ քչերին հասանելի լինելու պատճառով:

Քրիստոնեական արժեքները կարող էին ընկալվել իբրեւ ազգային արժեքներ միայն հայերեն գրի, հայատառ Սուրբ Գրքի ու գրականության միջոցով, այս ճանապարհով կարող էր քրիստոնեությունն ամրապնդվել Հայաստանում²⁹: Մյուս կողմից էլ 387 թվականից Պարսկաստանն ու Բյուզանդիան Հայաստանում լեզվական գործոնի միջոցով վարում էին կրոնագաղափարական ձուլման քաղաքականություն. պաշտոնական հարաբերությունների լեզուն Արեւելյան Հայաստանում պարսկերենն ու ասորերենն էին, Արեւմտյան Հայաստանում՝ հունարենը: Ինչպես գրում է

²⁶ Ս. ԶԱՔԱՐՅԱՆ, Հայոց ինքնության հիմնահարցեր, Երեւան, 2020, էջ 15:

²⁷ Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո Հայաստանում հունարենին զուգահեռ կիրառություն է ստանում ասորերենը, 389 թ.՝ Խոսրով արքայի գահընկեցությունից հետո՝ պահլավերենը: Տէս Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ, Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր ժառանգությունը, «Պատմա-բանասիրական հանդես», №2, 2005, էջ 93:

²⁸ Տէս ՓԱԽՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1889, գլ. ԺԳ., էջ 33:

²⁹ Զ. Ֆրիդրիխը հայերի եւ վրացիների գրերի ի հայտ գալը Ե. դարում ուղղակիորեն կապում է այդ երկու ազգերի՝ քրիստոնեություն ընդունելու հետ: Տէս Ի. Фридрих, История письма, перевод с немецкого, Москва, 2001, էջ 149:

Մ. Աբեղյանը՝ «...հայոց եկեղեցին կորցնում էր իր միությունը եւ թուլանում էր»³⁰: Այս ամենի խոր գիտակցությամբ էլ հայոց գրերի գյուտից հետո ազգային այբուբենը համարվում է աստվածային շնորհ, իսկ Մեսրոպ Մաշտոցը սրբացվում է: Գիրն իրեն վերապահված գործառույթներով ապահովում է հաղորդակցությունն Աստծու եւ մարդկանց միջեւ՝ կատարելով այն առաքելությունը, որը շուտով լիարժեքորեն պիտի իրականացներ զորեղացած Հայ եկեղեցին³¹:

Հանելուկում լուծման առարկան՝ գիրը, անձնավորվելով նույնացել է Մեսրոպ Մաշտոցի հետ: Ձեւավորվել է Աստված եւ շունչ ու ոգի ունեցող գիր հարաբերությունը, որով առավել հստակորեն են դրսևորվել գրի դերն ու նշանակությունը: Ենթադրելի է, որ այս ընկալումը զորեղ ազդեցություն է ունեցել հետագա ստեղծագործողների վրա, եւ այդ է պատճառը, որ չեն հորինվել հանելուկներ գրի գյուտի հետ անմիջականորեն կապված մարդկանց մասին:

Ահա հանելուկն ամբողջությամբ՝ ըստ Ա. Մնացականյանի կազմած բնագրի.

1

Ձեռք Ամենակալին ստեղծ գիս,
Եւ Բարձրեալն ի բարձունս ընծայեաց գիս:

2

Յորժամ ծնաւ գիս մայր իմ
Ես իմաստնացուցի զնա:

3

5

Չափ ամաց իմոց յառաջն էր երկու երկոտասան,
Անեցի եւ զարգացայ, եւ այժմ եմ երեք երկոտասան:

4

Կամ յարեւելս եւ խաւսիմ յարեւմուտս,
Ի հիւսիսոյ ի հարաւ ընթանամ:

³⁰ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ., էջ 97–98:

³¹ Եկեղեցու դերի այս ըմբռնումը գեղարվեստորեն արտահայտվել է նաեւ արվեստում: Ակնեցի բժիշկ Պետրոս Թոքմաշյանի՝ 1834 թ. պատրաստած սրբանկարի կենտրոնում Ս. էջմիածինն է, որը երկնքի հետ է կապվում ուղղաձիգ վար իջնող Հայր, Սուրբ Հոգի եւ Քրիստոս Սուրբ Երրորդությունը: Ինչպես մեկնաբանում է Վ. Դեւրիկյանը. «Այստեղ Մայր Տաճարով երկիրը երկնքի հետ է կապվում՝ վերստին Բեթղեհեմյան այրի նման դառնալով երկնքի եւ երկրի հանդիպավայրը». Վ. Դեւրիկյան, Սուրբ էջմիածինը արվեստում, Երեւան, 2015, էջ 48:

- 5
Ի մեռելոց խաւսիմ
10 Եւ յանշնչոց ձայն արձակեմ:
- 6
Մեռեալ եմ
Եւ ընդ կենդանիս խաւսիմ:
- 7
Յանդնդոց ձայն արձակեմ
Եւ առ Բարձրեալն աղաղակեմ:
- 8
15 Ծնունդ իմ՝ ի ջրոյ
Եւ մահ իմ՝ ի նմանէ:
- 9
Ի հրոյ զարհուրիմ եւ ի ջրոյ սասանիմ,
Բայց նստելով ի վէմս՝ արհամարհեմ զնոսա:
- 10
20 Անուն իմ բաղկանայ երիւթ տառիւթ.
Երբեակն ի միակէ,
Երկեակն ի տասնեկէ
Եւ հնգեակն ի հազարէ³²:

981 թվականից մեզ հասած առաջին թղթյա հնագույն ձեռագրում հանելուկը կառուցվածքային բաժանումներ չունի, արձակ շարադրանք է: Նույնիսկ անգեւն աչքով երեւում է, որ կազմողը, որը ձեռագրի էջի վերջում եղած ազատ տեղում ավելացրել է հանելուկը մանր տառերով՝ ցանկանալով տեղավորել բաց մնացած հատվածում, չի պահպանել չափածո խոսքին բնորոշ ձևային հատկանիշները³³:

Տարբեր ձեռագրերում տարբեր է հանելուկի միավորների քանակը³⁴: Ա. Մնացականյանը վերականգնել է ամբողջական ծավալը՝ հենվելով ձեռագրային մի քանի տարբերակամբերի վրա: Նա հանելուկը ներ-

³² Ա. Մ. Ա. ՅԱ. ԿԱ. ՆՅԱ. Ն., նշ. աշխ., էջ 171–174:

³³ Տե՛ս «Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի, Հայերէն թղթեայ հնագոյն ձեռագիր, 981», նմանահան., 1997, էջ 154ա: Ձեռագիրն ընդօրինակում չէ պատրաստի գաղափարից, այն բովանդակել, այսինքն՝ կազմել է Դավիթ քահանան՝ ստեղծելով տարբեր նյութերից բաղկացած ժողովածու:

³⁴ Ա. Մ. Ա. ՅԱ. ԿԱ. ՆՅԱ. Ն., նշ. աշխ., էջ 38:

կայացնում է տնատված. քսաներկու տողերը ամփոփում է տասը տան մեջ՝ փաստարկելով, որ գործ ունենք հանելուկաշարի հետ, որովհետեւ առանձնացված միավորները հորինված են տարբեր տաղաչափությամբ եւ հանգավորումով³⁵: Թեեւ գիտնականն իր կատարած դասավորությունը համարում է «մասամբ պայմանական», բայց նա, ինչպես կտեսնենք ստորեւ, լուծել է հանելուկի իմաստային զարգացման ընթացքը՝ ըստ էության կոահելով հեղինակի գաղափարական նպատակադրումը եւ ընդունելով, որ հանելուկի հորինվածքային հնարանքն արված է չափազանց վարպետորեն. չնայած յուրաքանչյուր հանելուկ համաբնագրից դուրս առանձին կիրառվելու ինքնուրույնություն ունի, եւ որոշ միավորների բացակայությունը չի աղճատում հանելուկի իմաստը, բայց համաբնագրում յուրաքանչյուրն իմաստային կարեւոր օղակ է եւ նպաստում է ներքին զարգացմանը:

Ուսումնասիրողները Դավիթ Քերթոզի հանելուկի տողերը ենթարկել են տարաբնույթ մեկնությունների:

Ըստ Դեւոնդ Ալիշանի՝ Դավիթ Քերթոզին կամ Անհաղթին վերագրված այս հանելուկը «վարպետ եւ խրթին գրուածք» է, որ գրչից գրիչ անցնելով՝ փոփոխությունների է ենթարկվել ծավալի առումով: «Իսկ իմաստը,— գրում է նա,— կէս մը ընդհանուր գրի վրայ, կէս մ'ալ հայերէն գրերուն վրայ յարմարցուցած է...»³⁶: Աստծու ձեռքով տրվելը՝ «Ձեռք Ամենակալին ստեղծ զիս», Դեւոնդ Ալիշանը կապում է Մովսես խորենացու վկայակոչման հետ, թե Մեսրոպ Մաշտոցը հոգու աչքերով տեսել է տառերի՝ քարի վրա գրվելը Տիրոջ ձեռքով³⁷, իսկ երկրորդ՝ «Եւ Բարձրեալն ի բարձունս ընծայեաց զիս» տողը, ըստ Դեւոնդ Ալիշանի, հիշեցնում է Վարդան պատմիչի բերած ավանդությունը Բալու լեռան վրա գրի հայտնության մասին, թեեւ, ըստ նրա, հնարավոր է, որ ասվածը վերաբերում է նաեւ Մովսեսի «օրինաց տախտակներին»³⁸:

Ն. Ակինյանի ընկալմամբ՝ հանելուկի առաջին տողն արտացոլումն է հին ավանդության, թե «Աստուած գրած է առաջին անգամ նշանագիր գիրը», իսկ երկրորդ տողով ականարկվում են «Մովսէսի տասնաբանեայ

³⁵ Անդ, էջ 39—40:

³⁶ «Բագմավէպ», 1848, թիւ 16, էջ 247:

³⁷ «Եւ տեսանէ ոչ ի քուն երազ եւ ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջը գծին՝ կուտեալ ունէր քարն». ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, նշ. աշխ., էջ 327:

³⁸ «Բագմավէպ», 1848, թիւ 16, էջ 247:

տախտակները եւ կամ խաչի երեքլեզուեան «Սա է արքայն Հրէից (Ղուկ. ԻԳ. 38)»³⁹:

Միանշանակ չեն ընկալվել նաեւ հանելուկի հաջորդ տողերը⁴⁰:

Տասն առանձին միավորները բնութագրում են գիրը, վեր հանում նրա տարբեր հատկանիշները, նկարագրում գործառույթները: Ամբողջապես նրանք ցույց են տալիս գրի ծննդյան եւ ներքին զարգացման ընթացքը:

Հայերեն նշանագրերի ծնունդի մասին Կորյունը գրում է. «Հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ Աջովն Իւրով, նշանագիրս հայերէն լեզուին⁴¹»: Հ. Քյոսեյանը Կորյունի՝ սուրբ Աջով տառեր ծնելու վերաբերյալ խորհրդածույթյունը համարում է աստվածաբանական անդրադարձն այն մտայնության, որ կար Արեւելաքրիստոնեական եկեղեցու դավանական փորձառությունից եկող քրիստոսաբանական ընկալման մեջ. նույնացվում են Հայր Աստծու եւ մարմնացած Որդու, մտքի եւ նրա ծնունդը հանդիսացող տառի կամ խոսքի միջեւ եղած հարաբերությունները⁴²:

Այսպես՝ Աստծու կողմից արարվելու, մարմին ու շունչ ստանալու, ոգեղենանալու ընթացքի մեջ գիրն ու նրա առարկայական-կիրառական գործառույթները, Կորյունից սկսած, դիտարկվում են հոգեւոր տիրույթում: Դավիթ Քերթոզի հանելուկը հորինվել է նույն մեկնակետից, որի շնորհիվ հաջորդող դարերում մատենագիրներին՝ հայոց գրի արարման կամ այբուբենի հետ կապված վերաիմաստավորումների ականարկները⁴³ նկատելի են նաեւ այս հանելուկաշարում:

Հանելուկի՝ «Ձեռք Ամենակալին ստեղծ զիս» տողը Կորյունի՝ «սուրբ Աջովն Իւրով» տառերը ծնելու արտահայտություն հետ զուգահեռում գծագրում է վերը բերված հարաբերությունների նույն պատկերը, թեւ առաջին հանելուկում ականարկվում է ոչ թե հայերեն նշանագրերի, այլ առհասարակ գրի ծնունդի մասին:

Հանելուկի երկրորդ տողը հիշեցնում է Աստծուն՝ լեռան բարձունքում գիրը Մովսեսին տալը: Անշուշտ, եթե հանելուկը քննվեր իբրեւ շարքի հետ չառնչվող միավոր, իբրեւ ինքնուրույն ստեղծագործություն,

³⁹ «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1957, թիւ 3–7, էջ 147–150:

⁴⁰ Տե՛ս «Բազմավէպ», 1848, թիւ 16, էջ 247–250. «Հանդէս Ամսօրեայ», 1957, թիւ 3–5, էջ 148–150:

⁴¹ ԿՈՐԻՆՆ, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Ը., էջ 90:

⁴² Տե՛ս «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», էջ 9:

⁴³ Անդ, էջ 22–34:

կարելի էր ընդունել Ղեւոնդ Ալիշանի դիտարկումը, թե այն վերաբերում է հայոց գրին: Բայց այդ պարագայում կիսարիսլվեր հանելուկի գաղափարական հենքը, հանելուկը կառուցվում է հայոց գրերի աստվածատուր բնույթի ընդգծմամբ՝ այն դնելով Սինա լեռան վրա Մովսեսին տրված Տասնաբանյայի հետ զուգահեռում, որ բանաստեղծորեն պատկերագրում է նաեւ Ներսես Շնորհալին.

Բարեաց պատճառ Հայոց եղեալ,
Զիմաստութեան գանձն խնդրեալ,
Զոր աղօթից մասամբ գտեալ,
Հոգւոյն մատամբ տպաւորեալ,
Ըստ Մովսէսի արժանացեալ,
Զաստուածագիծ տառս ընկալեալ՝
Երիւմ տասամբք վեցիւմ յանգեալ,
Արեգական ելիւմ չափեալ⁴⁴:

Արված զուգահեռի հոգեւոր խորհրդի հանգամանալից լուսաբանումներից մեկը կարողում ենք Վարդան Արեւելցու «Նորին Վարդանայ վարդապետի ասացեալ Բան գովեստի պատմագրաբար վասն սրբբոյն Սահակայ եւ Մեսրոպայ եւ այլոց թարգմանչացն» գործում: Նա մեկնաբանում է, որ ամեն ազգ էլ հնարել է իր լեզվի գիրը, բայց միայն այս երկու ժողովուրդներին է գիրն ընծայել Աստված, եւ դա ոչ փոքրագույն պատիվ էր մեր ազգի համար. ինչպես որ հներից միայն Իսրայելը պատվվեց աստվածագիծ տախտակներով, այնպես նորերի մեջ միայն Հայաստանին տրվեց աստվածատուր պարգեւը: Եւ քանի որ Աստված սովոր է միջնորդի ձեռքով բարին պարգեւելու ազգի մարդկանց, ինչպես նախամարգարե Մովսեսին տվեց աստվածագիծ տախտակները, որով հասան գիտության ճշմարտությանը, այնպես Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի ձեռքով շնորհեց գիրը, որով գերծ մնացինք տգիտության խավարից եւ ճանաչեցինք ճշմարիտ աստվածգիտության լույսը⁴⁵:

Հանելուկաշարի երկրորդ հանելուկում արծարծվում է գրի միջոցով աշխարհը ճանաչելու խնդիրը. գիրը ծնող գրիչն իմաստնանում է, որովհետեւ նրա շնորհիվ ավելին է իմանում: Ասվածը հարաբերվում է «Յաճախապատում»-ի այն մտքի հետ, որ Աստված աշխարհն ստեղծել է որ-

⁴⁴ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Վիպասանութիւն, Քննական բնագիրը պատրաստեց, ծանոթագրեց եւ առաջաբանը գրեց Մանիկ Մկրտչյանը, Երեւան, 1981, էջ 95–96:

⁴⁵ «Բանբեր Մատենադարանի», 1964, թ. 7, էջ 395–396:

պես դպրոց եւ ապա հորինել դպրութեան գրերը՝ արարվածներին քննելու համար. «Զի կարգեաց Աստուած զաշխարհս որպէս դպրոց. զի ուսցին արարածք զխնամս Արարչին յառնելն եւ ի կազմելն, եւ միշտ նախախնամութեամբ նորա զարմանեալք որ երեւին եւ որ ոչն երեւին»⁴⁶:

Երրորդ հանելուկն ազգարարում է հայերեն նշանագրերի ծնունդը: Հանելուկում ասվում է, որ հայոց այբուբենի տառերը նախ 24 են եղել՝ երկու տասներկու, ապա ստեղծվել է 12-ի երրորդ եռյակը, եւ նոր դարձել է 36 գիր: Հայոց այբուբենի մշակվածութեան բարձր մակարդակը շեշտվում է «աճեցի եւ զարգացա» բառերով՝ նկատի ունենալով նաեւ թվական առավելությունը 24 գրից բաղկացած հունական այբուբենից⁴⁷:

Չորրորդ հանելուկը, ուր խոսվում է գրի՝ Արեւելքում գտնվելու եւ Արեւմուտքի հետ խոսելու, հյուսիսից հարավ ընթանալու մասին, հոգեւոր առումով՝ տարածական սահմաններում չպարփակվող գրի՝ մարդկանց մոտեցնելու եւ մարդկությանը միավորելու ուժն է ակնարկում:

Որոշ հանելուկներում ամփոփված հոգեւոր խորհուրդներին անդրադարձել է Վ. Դեւրիկյանը: 5-րդ հանելուկի մասին գրականագետն այն միտքն է արտահայտում, որ նրանում արծարծվում է գրի՝ հոգեւոր կենդանություն հաղորդելը մեռյալ նյութին⁴⁸: Մեռյալ կաշին մագաղաթն է. գիրը գրվում է մեռյալ կաշվի վրա, որով մեռյալների միջից է խոսում, եւ երբ ընթերցում են, անշունչ կաշվից ձայն է արձակում:

Հաջորդ երկու տողերը (6-րդ հանելուկ) նույն այս մտքի կրկնությունն են: Դրոշմված լինելով մեռյալ կաշվի վրա՝ գիրը ողջ եղողների հետ է խոսում:

⁴⁶ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ, Յաճախապատում ճառք լուսաւորք, յառաջ., համեմ. եւ ծանօթ.՝ Ա. Տէր-Միքէլեանի, Ս. Էջմիածին, 1894, Ճառ է., տող 23–26, էջ 68–69:

⁴⁷ 24 թվի կապակցությամբ արծարծվել են տարբեր կարծիքներ: Ղեւոնդ Ալիշանը կարծում է, որ ասվածը վերաբերում է թե՛ օտար ազգերի 24 գրերին, որոնց համեմատությամբ մեր այբուբենն ավելացավ, թե՛ հայոց՝ ենթադրելով, որ Դանիելյան գրերը 24-ն էին: Տէս «Բազմավէպ», 1848, թիւ 16, էջ 248: Ն. Ակինյանը գրում է, որ հեղինակն այս տողերով «կը յիշէ յունական ալփաբետը 24 նշանագիրներով, որ հիմք եղաւ Հայկականին»: Տէս «Հանդէս Ամսօրեայ», 1957, թիւ 3–5, էջ 149: Դանիելյան նշանագրերի խնդիրը եւ արտահայտված տեսակետները հանգամանորեն քննել է Հ. Աճառյանը. տէս Հ. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց գրերը, Երեւան, 1984: Ավելի ուշ Ա. Մուշեղյանը կարծիք է արտահայտում, որ հայոց նոր այբուբենն ստեղծելիս Մեսրոպ Մաշտոցն օգտվել է հայոց հին այբուբենից մնացած 24 նշանագրերից, որ գտել էր Դանիել Ասորին. տէս «Պատմա-բանասիրական հանդես», 2006, թ. 2, էջ 229:

⁴⁸ Տէս Վ. ԴԵՒՐԻԿՅԱՆ, Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, Մասն Ա., Վենետիկից Հռոմ (16-րդ դար), 2012, Երեւան, էջ 6:

13–14-րդ տողերը (7-րդ հանելուկ) անդունդներից Աստծուն ուղղվող մարդկային խոսքի մասին են:

5-րդ, 6-րդ եւ 7-րդ հանելուկները փոխկապակցված են արտահայտած գաղափարով. մեռյալների միջից եմ խոսում եւ անշնչացածների միջից եմ ձայն արձակում. մեռած եմ եւ ողջերի հետ եմ խոսում. անդունդից եմ ձայն արձակում եւ դեպի Բարձրյալն եմ աղաղակում, այսինքն՝ մարդ իր հոգու խորքից առ Աստված է առաքում իր խոսքը, ինչպես որ Նարեկացին է ասում. «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ»: Ուրեմն գրին վերապահված է այս եւ այն աշխարհների, երկրի եւ երկնքի, մարդու եւ Աստծու միջեւ կապ հաստատելու դեր՝ ուժն ու խորհուրդը Աստված—գիր հարաբերության:

Հաջորդ հանելուկում գիրը ներկայացնում է, որ ջրից է ծնվել, եւ իր մահը նույնպես ջրից է: Հանելուկի՝ ջրից ծնվելու եւ ջրից մեռնելու գաղափարական իմաստը, ըստ Վ. Դերիկյանի, նույնպես պայմանավորված է միջնադարյան աշխարհայեցողությամբ, այն իմաստով, «...որ ջուրն է ամենայն ինչի նախասկիզբը եւ արարվելով արարչագործությունը՝ կենդանություն պարգեւեց երկրին: Սկզբի եւ վերջի իրավահաջորդ ըմբռնմամբ՝ նաեւ ջրով եղավ ջրհեղեղը, որը միաժամանակ դարձավ թե՛ հնի վերջը եւ թե՛ սկիզբը մի նոր սկզբի, եւ շարունակական նորոգության այս ընթացքի հետ է հարաբերվում նաեւ գիրը»⁴⁹:

Գրի այս խորհրդի գիտակցումով էլ ծնվել են Մեսրոպ Մաշտոցի շուրջ հյուսված հրաշապատում ավանդությունները քարից ջուր բխեցնելու մասին՝ Մեսրոպ Մաշտոցի ազգային-լուսավորական գործունեությունը գնահատելով ջուր—կյանք—սկիզբ գաղափարական նույն մեկնակետից⁵⁰:

9-րդ հանելուկում գիրն իր մասին ասում է, որ հրից զարհուրում եւ ջրից սասանվում է, բայց երբ փորագրվում է քարին, դրանցից չի վախենում: Հանելուկը, իբրեւ նախորդի շարունակություն, գրի՝ վեմի վրա գրվելուց հետո հուրն ու ջուրն արհամարհելը մարդու ենթագիտակցական մակարդակում ստեղծում է աղերս առաքելական հիմքի՝ վեմ-հավատի վրա բարձրացած հոգեւոր կառույցի եւ նրա որմերին դրոշմված անշնչելի գրերի միջեւ՝ հուշելով, որ հեղինակի համար հայկական գրի միտումը՝ քրիստոնեությունը հայացնելու, ամրակայելու այն ժողովրդի

⁴⁹ Անդ:

⁵⁰ Տե՛ս Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ, Ավանդապատում, 1969, Երեւան, էջ 95, 235:

գիտակցության մեջ, այլևս անսասան իրողություն է եղել հանելուկը գրելու ժամանակ:

Հանելուկաշարի պատասխանը վերջին՝ 10-րդ բանաստեղծության շորս տողերում է, որոնցում ներկայացվում է «գիր» բառի թվային խորհուրդը. անունը բաղկացած է երեք տառից. առաջինի թվային համարժեքը երեքն է, երկրորդինը՝ քսանը, իսկ երրորդինը՝ հինգ հազարը:

Վ. Դեւրիկյանն այս հանելուկը համարում է «գիր» անվանման եւ հայոց միջնադարում նրա մեկնաբանման հոգեւոր խորհրդի խտացումը: Նա գրում է. «Գ.-ի թվային արժեքը երեքն է, որի համար Հայոց միջնադարում հոգեւոր մեծ խորհուրդ է հաղորդվել «գիր» բառին, թե ոչ միայն Հայոց գիրն է աստվածատուր, այլև «գիր» անվանումն իսկ: Այն թե՛ այս հանելուկում եւ թե՛ միջնադարյան մի շարք այլ բնագրերում մեկնաբանվել է հետեւյալ ձևով. «գիր» բառը կազմված է երեք տառից, որոնք մեկ իմաստ են արտահայտում, ինչպես որ Սուրբ Երրորդությունն է կազմված երեք անձից՝ Հայր, Որդի ու Սուրբ Հոգի, եւ միաժամանակ միասնական ու անբաժանելի մի ամբողջություն է՝ որպես մեկ միություն: Երեք գրերով՝ երրորդությամբ մի ամբողջություն կազմելն առավել է ընդգծվում նաեւ այն հանգամանքով, որ ոչ միայն «գիր» բառն է կազմված Սուրբ Երրորդությունը խորհրդանշող երեք տառերով, այլև այս բառի առաջին տառի՝ Գ.-ի թվային համարժեքն է երեքը, որի համար այս հանելուկում ասվում է. « Երեքակն ի միակէ⁵¹»:

Հանելուկը, այսպիսով, փառաբանություն է Ամենակալին. Նրա ձեռքով արարված «գիր» բառն անգամ խորհրդանշում է Սուրբ Երրորդությունը, ավելին՝ կրկնակիորեն է արտահայտում Երրորդության գաղափարը:

Ա. Մնացականյանի կարծիքով՝ հանելուկաշարի որոշ հանելուկներ շոր են եւ զուսպ, բայց մյուսները գրքի ու գրի կախարդական ուժը փառաբանող դրվատանքներ են, հանելուկ-գովքեր⁵²: Ակնհայտ է, սակայն, որ ամբողջ հանելուկաշարն է գրված ներբողական ոգով: Նույնիսկ դիպաշարային առումով այն որոշակիորեն պահպանել է ներբողի ժանրի տիպաբանորեն կայուն հատկանիշները՝ նախաբան՝ առաջադիր նյութի ներբողման հիմնավորմամբ, բուն նյութ՝ առանձին մասերի դրվատմամբ, եւ վերջաբան՝ խնդրվածքներով, մաղթանքներով⁵³, որովհետեւ, ինչպես

⁵¹ Վ. ԴԵՐԻԿՅԱՆ, Հայ գիրքը աշխարհի..., էջ 8:

⁵² ՏԵՆ Ա. ՄՆԱԳԱԿԱՆՅԱՆ, նշ. աշխ. էջ 47:

⁵³ ՏԵՆ «Հայ միջնադարյան գրականության ժանրեր», էջ 139, 148:

ստեղծագործության քննությունից տեսանելի դարձավ, առանձին հանելուկներ իմաստային առումով ներքին խմբավորումներ են կազմում: Հանելուկն իբրեւ ամբողջական համաբնագիր ընկալված լինելու պատճառներից մեկն էլ հավանաբար սա է:

Առաջին հանելուկը՝ իբրեւ նախաբան, վսեմ ոճով ազդարարում է աստվածային բնույթ ունեցող գրի ծնունդը հենց իր՝ գրի կողմից, 2-րդ հանելուկով մատնանշվում է գրի՝ իրեն ծնողին՝ գրչին, իմաստնացնել կարողանալու գործառույթը, որով արտահայտվում է հանելուկը հորինողի վերաբերմունքը գրի դերին ու նշանակությանը: Բուն նյութը նախ 3-րդ եւ 4-րդ հանելուկների միջոցով ներկայացնում է գրի արտաքին հատկանիշները՝ 36 տառից բաղկացած լինելը, ժամանակի ու տարածության մեջ անարգել շարժվելու կարողությունը՝ իբրեւ հաղորդակցության գործիք, ապա մյուս հանելուկներով բացահայտում գրի ներքին հատկանիշները՝ հոգեւոր վերածնության (5-րդ, 6-րդ եւ 7-րդ հանելուկներ), հոգեւոր ամրության, անսասանության խորհուրդները (8-րդ, 9-րդ հանելուկներ): Ապա հաջորդում է փառատրական վերջաբանը (10-րդ հանելուկը)՝ իբրեւ օրհնաբանություն ներբողվող գրի:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Խորապես գնահատելով հայոց գրի դերը քրիստոնեության տարածման, մասնավորապես մարդկանց գիտակցության մեջ նոր գաղափարախոսության ամրակայման գործում՝ Դավիթ Քերթոզը հանելուկաշարում շեշտում է հայոց այբուբենի աստվածատուր լինելը՝ նրա ծնունդը գիտարկելով հինկտակարանային պատումի հետ զուգահեռում (Տասնաբանյա աստվածաշունչ պատվիրանների տրվելը Մովսեսին)՝ իբրեւ նույն աստվածային գրից ծագած իրողություն: Եթե Կորյունը գրում է ներբողյան վարք՝ Մեսրոպ Մաշտոցի եւ հայոց գրի գյուտի մասին, ապա Դավիթ Քերթոզը հյուսում է տասն առանձին միավորներից բաղկացած, բայց իմաստային առումով փոխկապակցված ներբողյան հանելուկ՝ նվիրված հայոց գրին: Ներբող-հանելուկում նախ բացահայտվում են գրի գործառույթներն ուղիղ, առարկայական իմաստով, ապա այդ հիմքի վրա, արժեւորելով գրի գյուտն իբրեւ Աստծու շնորհ, այլաբանորեն գծագրվում է գրի հոգեւոր խորհուրդը: Մարմնավորվում է գիրը եւ կատարելով իրեն վերապահված դերը՝ իր հզոր ներուժով մարդկանց մոտեցնում է Աստծուն:


РЕЗЮМЕ

В V веке с изобретением армянской письменности было положено начало масштабной просветительской деятельности, в результате которой развились культура и наука, Армянская церковь стала самостоятельной и независимой. Параллельно с переводной литературой было создано одно из первых произведений отечественной агиографии — «Житие Маштоца» Корюна, как хвалебное жизнеописание, ода. Летописцы, вслед за Корюном, перенимают его понимание изобретения письменности одаренной Богом. Начиная с 5 века, история изобретения письменности подвергается национально-духовному переосмыслению. Первая письменная серия армянских загадок (V—VI века) также посвящена национальному письму. Размышления о божественном появлении письменности в серии загадок свое начало берут непосредственно из книги Корюна: письменность и ее предметно-прикладные функции рассматриваются в духовной сфере, с осознанием роли армянской письменности в деле распространения христианства и утверждения новой идеологии в сознании людей. Каждая загадка является важным смысловым звеном в тексте и способствует внутреннему развитию произведения, даже отдельные загадки образуют внутренние группировки по смыслу. Как целостный текст серия загадок в какой-то степени сохранила типологически устойчивые черты жанра оды. Серия загадок — одическое произведение, посвященное письмам.

SUMMARY

In the 5th century, with the creation of the Armenian alphabet, a large-scale educational activity was launched, which resulted in the development of culture and science; the Armenian Church became independent and autonomous. In parallel with the translated literature, one of the first works of native hagiography, the «Life of Mashtots» by Koryun, was created as a laudatory biography, an ode. The chroniclers following Koryun adopted his comprehension of the creation of the God-given writing. From the 5th century onwards, the history of the creation of writing has undergone a national-spiritual reinterpretation. The first written Armenian riddle series (5th – 6th centuries) is also dedicated to the writing. Reflections on the divine origin of the writing in the riddle series are derived directly from the book of Koryun:

writing and its subject-applied functions are considered in the spiritual sphere, with an awareness of the role of the Armenian writing in the spread of Christianity and the establishment of a new ideology in the minds of people. Each riddle is an important semantic link in the text and contributes to the internal development of the work; even individual riddles form internal groupings in terms of meaning. As a coherent text, the riddle series have, to some extent, retained the typologically stable features of the ode genre. The riddle series is odic, dedicated to the writing and expresses the idea of the Holy Trinity: the Armenian word for the writing is made up of three letters symbolizing the Holy Trinity.



ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

ԱԿԱՆԱՎՈՐ ԶՈՐԱՎԱՐԸ, ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ-ՊԱՏՄԱԲԱՆՆ ՈՒ ՅԱՅՐԵՆԱՍԵՐ ՅԱՅՈՐԴԻՆ

(Նովհաննես Քրիստափորի Բաղրամյան. 125)¹

Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանի 125-ամյա հոբելյանի նշումը հարգանքի տուրք է ականավոր զորավարի, ռազմական գործի անզուգադրելի կազմակերպչի, տաղանդավոր ռազմական պատմաբանի ու նվիրյալ մեծ հայրենասերի հիշատակին:

Հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ եւ հատկապես հայրենական մեծ պատերազմի տարեգրության էջերում արձանագրված տաղանդավոր զորահրամանատարների, մարշալների շարքում իր ուրույն ու պատվավոր տեղն ունի անստեղծ ռազմական գործիչ ու զորավար, տաղանդավոր ռազմավար ու պատմաբան Հովհաննես Քրիստափորի (Իվան Խաչատուրի) Բաղրամյանը:

Հովհաննես Բաղրամյանն անցել է կյանքի դժվարին փորձություններով լի, հայրենիքին անմնացորդ ծառայելու պատվարժան ուղի: Իր առաջին լուրջ ռազմական մկրտությունը ստանալով հայ ժողովրդի համար ճակատագրական ու բախտորոշ Սարգարապատի ճակատամարտում, այնուհետեւ իր ռազմավարական ներուժն ու զորավարական տաղանդը լայնորեն դրսևորեց 1941–1945 թթ. հայրենական մեծ պատերազմի տարիներին, գլխավորելով բանակ ու ռազմաճակատ, աչքի ընկնելով իր ռազմավարական գիտելիքներով ու հմտություններով այն դրսևորելով մի շարք ռազմական գործողությունների մշակման ու իրականացման գործում, շարքային զինվորից հասնելով մարշալի աստիճանի, պատերազմի վերջում իր պատվավոր տեղն ապահովելով Խորհրդային միության ականավոր զորավարների համաստեղության մեջ: Նրա ռազ-

¹* Ստացվել է՝ 3.02.2022, գրախոսվել է՝ 13.02.2022: Էլ. հասցե՝ eminasyan@ysu.am:

մագիտական հարուստ ժառանգության եւ կյանքի փորձի ու մարդկային նկարագրի ուսումնասիրությունը հնարավորություն կտան հայկական բանակի զինվորներին ու սպաներին ընդօրինակել նրան, նպաստելով մատաղ սերնդին ու երիտասարդությանը հայրենական ոգով դաստիարակելու գործին:

Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանը ծնվել է 1897 թ. դեկտեմբերի 2-ին Ռուսական Կայսրության Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլ (Գանձակ) քաղաքի երկաթուղային կայարանի բանվորական ավանում: Նույն նահանգի Չարդախլու² գյուղից էին սերում ապագա մարշալի հայրը՝ Խաչատուր Բաղրամյանը, եւ մայրը՝ Մարիամ Մարտիրոսյանը: Բայց կարիքն ստիպել էր Խաչատուրին տեղափոխվել Ելիզավետպոլ եւ աշխատանքի անցնել երկաթուղում: Նախնական կրթությունը Հ. Բաղրամյանն ստացել է Գանձակի երկրասյա դպրոցում, ապա 1907–1912 թթ. սովորել եւ գերազանցությամբ ավարտել է հիշյալ քաղաքի երկաթուղային ուսումնարանը: Բայց ինչպես դպրոցական, այնպես եւ ուսումնարանի արձակուրդները նա անցկացնում էր գյուղում: Ահա ինչ է գրում նա այդ մասին. «Չարդախլուում եղած ժամանակ եւս մեծ ուշադրությամբ ուսումնասիրում ու յուրացնում էի գյուղական սովորույթները, ժողովրդական տարբեր ավանդություններ, ըստ որոնց իմ հասակակիցների մեջ ձեւավորվում էին խիզախության ու պատվի, ազնվության, հավատարմության ու նվիրվածության վերաբերյալ պատկերացումները: Հարկ է նշել, որ մեր գյուղի բնակիչները միշտ բարձր էին գնահատում այդ մարդկային հատկությունները, եւ դա մեծ դեր էր խաղում գյուղական երիտասարդության դաստիարակության գործում³:

Ընտանիքում տիրողը նահապետական բարքերն էին. ընտանիքը միասնական էր, նրա յուրաքանչյուր անդամի վաստակը բոլորի սեփականությունն էր, եւ երբեք նյութականի շուրջ վեճեր չէին լինում, եւ համերաշխությունն էր տիրում: Եւ դա այն դեպքում, երբ ընտանիքը ոչ այնքան բարվոք նյութական պայմաններում էր ապրում: Հիմնական կերակրողը հայրն էր՝ Խաչատուրը (այս անունը հետագայում Հովհաննես Բաղ-

² Սկզբից եւ եթ հիշենք, որ Չարդախլուն բացառիկ գյուղ է, եւ որոշակի առումով կարելի է խոսել իր անզուգականության մասին: Այն մի փոքրիկ բնակավայր է, որը տվել է 2 մարշալ, 9 գեներալ, Հայրենական մեծ պատերազմի 1250 մասնակից, որոնցից 200-ից ավելին՝ սպաներ, այդ թվում նաեւ 6 կին սպա. Տէս Դ. Ա. МАРТИРОСЯН, Мои телеграммы Горбачеву о трагедии легендарного села Чардахлы, Нагорного Карабаха, Геташена..., Рязань, 1995, էջ 183:

³ Տէս Ի. Խ. БАГРАМЯН, Мои воспоминания, Ереван, 1979, էջ 8:

րամյանի հայրանվան մեջ դարձավ Քրիստափոր): Նա երկաթուղային վարպետ էր եւ ստանում էր ամսական 30 ռուբլի ոսկով աշխատավարձ, մի փոքր գումար, որը հնարավորություն չտվեց Հովհաննեսին ուսումը շարունակելու գիմնագրից, որտեղ ամսական 10 ռուբլի վարձ էր պահանջվում: Տան տնտեսության կառավարման հոգսը մոր՝ Մարիամի (Մարան) ուսերին էր ընկած, գիմնակուն մի կին, որն ապրեց շուրջ 95 տարի:

Վարպետ Խաչատուրը անբասիր աշխատանքի համար անձամբ Նիկոլայ Երկրորդից ստացել էր արծաթե ժամացույց, երբ ցարը 1914 թ. նոյեմբերին եկել էր Անդրկովկաս⁴:

Երկրի կարեւոր ու խոշորագույն քաղաքներում ապրելով հանդերձ՝ Բաղրամյանն իրեն մշտապես համարում էր Չարդախլուի զավակ: «Իմ հուշերը» գրքում հարազատ այդ օրրանը նա հիշում է որպես բացառիկ գեղեցիկ բնություն մե ջինջ ու մաքուր մաքուր օդով օժտված դրախտային մի վայր, ուր անհիշելի ժամանակներից ծաղկել է գյուղատնտեսությունը: Գյուղը հատկապես հայտնի է եղել ձիաբուծներով, որոնց բեռնաքարշներն ու ռահվարները բարձր էին գնահատվում: Մեծ էր նաեւ արագընթաց ու գիմնակուն, մարտական նժույգների պահանջարկը, որ նույնպես շատ էին գյուղում, եւ այս տեսանկյունից զարմանալի չէ, որ Հովհ. Բաղրամյանն սկզբից եւ եթ ընտրեց հեծելազորային ծառայությունը⁵:

1912 թ. նա ընդունվում է Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարան, որն ավարտում է 1915 թվականի մայիսին, դարձյալ գերազանցությամբ, եւ որպես երկաթագծի տեխնիկ աշխատանքի նշանակվում Անդրկովկասյան երկաթուղու Ելիզավետպոլի 9-րդ գծամասում: Սակայն առաջին համաշխարհային պատերազմի իրադարձությունները եւ թուրքերի իրականացրած հայոց ցեղասպանությունը դրդեցին, որ 18-ամյա Հովհաննես Բաղրամյանը կամավոր մեկնի ռազմաճակատ՝ չնայած որպես երկաթուղու աշխատող զինծառայությունից ազատվելու իրավունք ուներ: Այդ մասին հետագայում իր հուշերում Հ. Բաղրամյանը գրել է:

«Ես այլեւս չէի կարող հեռու կանգնել իմ հարազատ ժողովրդի ատելի թշնամու դեմ պայքարից: Ես արդեն համարյա 18 տարեկան էի եւ բավա-

⁴ Հ. Ա. ԲԱՂՐԱՄՅԱՆ, Չարդախլուի ֆենոմենը, «Հայկական բանակ», հ. 4, 1997, էջ 80–81:

⁵ Տե՛ս անդ:

կանին պարզ հասկանում էի Կովկասյան ռազմաճակատում ստեղծված իրավիճակի, ռազմական գործողությունների եւ Թուրքիայում արյունալի իրադարձությունների էությունը... Դրա հետ մեկտեղ լավ էի հասկանում, որ միայն ռուս զինվորի հետ՝ ուս ուսի իմ ուժերը կպատերին մարտնչելու Թուրք դահիճների դեմ: Այդ զգացմունքներից մղված, հաղթահարելով ծնողներիս դիմադրությունը, 1915 թ. հոկտեմբերի 9-ին ես կամավոր ծառայության անցա ռուսական բանակում»⁶:

Ախալցխայի 116-րդ պահեստային գումարտակում որոշ ժամանակ զինվորական պատրաստություն ստանալուց հետո նույն թվականի դեկտեմբերի վերջին Բաղրամյանը մեկնում է ռազմաճակատ եւ Պարսկաստանի տարածքում գտնվող գեներալ Բարաթովի (Expeditionary) կորպուսի 2-րդ կովկասյան գնդի կազմում, որպես 4-րդ գումարտակի 15-րդ հարյուրյակի շարքային զինվոր մասնակցում է մարտերին: Կասրի-Շիրինի գրավման մարտերում դրսևորած քաջության համար հրամանատարությունը նրան ուղարկում է Թիֆլիս՝ ենթասպայական դպրոցում սովորելու⁷: Այն ավարտում է 1917 թ. եւ շարունակում ծառայությունը 3-րդ հայկական հրաձգային գնդում:

Այսպես սկսվում է Բաղրամյանի զինվորական ծառայությունը, որը տևում է 67 տարի:

1917 թ. աշնանը ենթասպա Բաղրամյանը Թուրքերի դեմ մարտնչում է Ուրմիա լճի շրջանում Հայկական 3-րդ գումարտակի կազմում որպես 8-րդ վաշտի դասակի հրամանատար⁸:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասն անջատվեց Խորհրդային Ռուսաստանից, ինչն աղետալի հետեւանքներ ունեցավ հատկապես հայերի համար: Օգտվելով նրանից, որ ռուսական զորքերը զանգվածաբար լքում էին Կովկասյան ռազմաճակատը, Թուրքերը հարձակման անցան եւ կարճ ժամանակամիջոցում գրավեցին Արեւմտյան Հայաստանի այն տարածքները, որոնք ազատագրվել էին ռուսական զորքերի օգնությամբ:

Շուտով Թուրքերի արշավանքը կանգնեցնելու համար ստեղծվեց Հայկական կորպուսը՝ գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանի գլխա-

⁶ И. Х. БАГРАМЯН, Мои воспоминания, с. 25—26.

⁷ Տէս Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆ, Մարշալ Հովհաննէս Բաղրամյան, «Հայկական բանակ», հ. 1, 1997, էջ 14:

⁸ Անդ:

վորություններ: Այդ կորպուսի հատուկ կամավորական դիվիզիայի շարքերում, որպես հեծյալ դասակի հրամանատար, մարտնչում էր ենթասպա Հովհ. Բաղրամյանը: Դիվիզիայի հրամանատարը ժողովրդական հերոս Անդրանիկն էր: Հետագայում Փարիզում մարշալ Բաղրամյանը այցելել է Պեր-Լաշեզի գերեզմանոցը եւ ժողովրդական հերոսի հուշարձանին դրել ծաղկեպսակ հետեւյալ մակագրությամբ. «Հավերժ հիշատակ Հայաստանի լեգենդար հերոս Անդրանիկին, որի զինվորը լինելու բախտն եմ ունեցել Հայրենիքի համար ծանրագույն 1918 թվականին»⁹:

Ձնայած հայկական զորքերի հերոսական դիմադրությանը՝ թուրքական 60-հազարանոց զորքը շարունակում է առաջխաղացումը եւ, գրավելով Կարսն ու Ալեքսանդրապոլը, շարժվում է Ղարաբաղի սահմաններում: Արեւմտյան Հայաստանի ազատագրության համար 1918 թ. կռիվներին որպես հայկական 1-ին հատուկ հեծելազորային գնդի դասակի հրամանատար, թուրքական զորքերի դեմ Քերմանշահի, Սարիղամիշի եւ Կարսի շրջաններում, մարտնչել է Հովհաննես Բաղրամյանը:

Հայ ժողովրդի համար այդ օրհասական օրերին հայկական կորպուսի զորամասերը եւ նրանց օգնության հասած աշխարհազորայիները կարողացան Բաշ Ապարանում եւ Սարգարապատում ոչ միայն կանգնեցնել թուրքերին, այլեւ նրանց հետ շարտել գրաված դիրքերից: 1918 թ. մայիսի 22–26-ին Սարգարապատի ճակատամարտին սկզբից մինչեւ վերջ անձնվեր կերպով մասնակցեց առաջին հատուկ հայկական հեծյալ գնդի դասակի հրամանատար Հովհ. Բաղրամյանը: Հետագայում, անդրադառնալով այդ օրերին, Բաղրամյանն իր հուշերում գրել է «Սարգարապատի ճակատամարտի շնորհիվ Արարատյան դաշտավայրը փրկվեց թուրք զավթիչների նոր ջարդերից, եւ այդ տարածքում էր, որ հայ ժողովուրդը վերականգնեց իր պետականությունը»¹⁰:

Եւ հիրավի, Սարգարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաբաղի սահմանների ճակատամարտերը բախտորոշ նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար: 1918 թ. մայիսի 28-ին, շուրջ հինգուկես դար ընդմիջումից հետո վերականգնվեց հայկական պետականությունը:

Այնուհետեւ Հովհաննես Բաղրամյանը ծառայության անցավ Հայաստանի անկախ հանրապետության զինված ուժերում, որպես հեծյալ

⁹ Տէն Ա. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ, Մարշալ Բաղրամյան, Երևան, 1978, էջ 26:

¹⁰ И. Х. БАГРАМЯН. Мои воспоминания, с. 94.

գնդի հեծելավաշտի հրամանատար, մասնակցեց 1920 թ. սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմին:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, Բաղրամյանը շարունակել է ծառայությունը հայկական Կարմիր բանակի հեծյալ գնդում՝ որպես հեծելավաշտի (squadron) հրամանատար:

1921 թ. փետրվարի 18–22-ը նա մասնակցել է վրաց մենշևիկյան զորքերից Լոռու ազատագրմանը, ապա նշանակվել է խորհրդային Վրաստանում խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչության զինվորական կցորդ՝ Անդրեաս Մելիք-Շահնազարյանի¹¹ օգնական:

Հենց այդ այդ օրերին Բաղրամյանը Թիֆլիսում հանդիպել է Հովհաննես Թումանյանին եւ օգնել նրան Երեւան մեկնելու անցաթուղթ ձեռք բերելու հարցում¹²:

Բաղրամյանը Երեւան է վերադարձել մայիսի սկզբներին եւ նշանակվել խորհրդային Հայաստանի ռազմական ժողկոմատի շտաբում որպես պետի օգնական օպերատիվ հարցերի գծով: Հայկական Կարմիր բանակի վերակազմավորման հետեւանքով 1922 թ. սեպտեմբերի 5-ին ստեղծվեց Հայկական հրաձգային դիվիզիան՝ Անդրեաս Մելիք-Շահնազարյանի հրամանատարությունամբ: Բաղրամյանը նշանակվեց դիվիզիայի հեծյալ գնդի գնդացրային հեծելավաշտի (1922–1923 թթ.) ապա գնդի հրամանատար: 1921–1923 թվականներին խորհրդային Հայաստանի ռազմական ժողովրդական կոմիսարիատը գլխավորում էին Ալեքսանդր Մյասնիկյանը, ապա՝ Հայկ Բժշկյանը՝ Գայը, որոնց ենթակայության տակ ծառայությունը բարերար ազդեցություն գործեց ապագա մարշալի վրա: 1924 թվականի աշնանը դիվիզիայի հրամանատարությունը նրան գործուղեց սովորելու Լենինգրադի բարձրագույն հեծելազորային դպրոցում¹³. Այստեղ հրամանատարական անհրաժեշտ առաջին գիտելիքների ձեռքբերման հետ մեկտեղ Բաղրամյանը մտերմիկ հարաբերություններ հաստատեց իր համակուրսեցիների հետ, որոնք Հայրենական մեծ պատերազմի տարիներին դարձան ճանաչված զորապետեր: Նրանց թվում էին ապա-

¹¹ Անդրեաս Մելիք-Շահնազարյան Օտարալեզու զրագրության մեջ նաեւ (Անդրել). (24 հուլիս 1887, Շուշի–31 հոկտեմբեր 1937, Մինսկ), հայ ռազմական գործիչ, դիվիզիայի հրամանատար. տես Հայկական համառոտ հանրագիտարան, հատ. 3, Երեւան, 1999, էջ 650:

¹² Տէս Կ. Խ. БАГРАМЯН, նշ. աշխ., էջ 113–114:

¹³ «Հայկական բանակ», հ. 4, 1997, էջ 16:

գա մարշալներ Գ. Կ. Ժուկովը, Կ. Կ. Ռոկոսսովսկին, Ա. Ի. Երյոմենկոն եւ այլք¹⁴:

1931 թ. Հովհ. Բաղրամյանն ավարտել է բարձրագույն հրամկազմի դասընթացները, այնուհետեւ փայլուն առաջադիմությամբ սովորել եւ ավարտել է Մ. Ֆրունզեի անվան (1934 թ.) ռազմական ակադեմիան Մոսկվայում:

Նա 1934 թ. ամռանը նշանակվել է ուկրաինական Ժիտոմիր քաղաքում հաստատված 5-րդ հեծյալ դիվիզիայի շտաբի պետ: Այստեղ Բաղրամյանը ծառայել է երկուսուկես տարի՝ գործնական աշխատանքում ավելի խորացնելով իր գիտելիքները: 1936 թ. աշնանը Բաղրամյանն ընդունվել է գլխավոր շտաբի նոր բացված ակադեմիան: Ակադեմիայի առաջին ունկնդիրների թվում էին ապագա մարշալներ Ալեքսանդր Վասիլևսկին, Մատվեյ Զախարովը, Լեոնիդ Գովորովը, հետագայում բանակի գեներալներ Ալեքսեյ Անտոնովը, Նիկոլայ Վատուտինը եւ ուրիշներ, որոնք Հայրենական մեծ պատերազմի տարիներին գլխավորեցին ռազմաճակատներ, բանակներ, շտաբներ, վարեցին այլ եւ այլ պատասխանատու պաշտոններ¹⁵: Գլխավոր շտաբի ակադեմիան Բաղրամյանն ավարտել է 1938 թ. եւ մինչեւ 1940 թ. աշուն աշխատել է նույն ակադեմիայում որպես ընդհանուր մարտավարության ամբիոնի ավագ դասախոս: Այդ մասին Հովհաննես Բաղրամյանը գրում է «Գնդի հրամանատար լինելուց, Ֆրունզեի անվան ակադեմիայում սովորելուց եւ Բլինովի անվան 5-րդ հեծյալ դիվիզիայի շտաբի պետի պաշտոնում աշխատելուց հետո ինձ ուղարկեցին գլխավոր շտաբի ակադեմիա, որն ավարտելուց հետո ինձ պահեցին ակադեմիայում, որպես ավագ դասախոս»¹⁶:

Այդ տարիներին կոփվեց Բաղրամյանի զինվորական տաղանդը: Նա ձեռք բերեց գիտելիքների այն տեսական պաշարը եւ օպերատիվ մտքի հասունությունը, որոնց շնորհիվ հետագայում դրսևւորեց իր անկրկնելի ձեռագիրը ֆաշիզմի դեմ տարած մեծ հաղթանակի պատմության մեջ: Կրկին զորք վերադառնալու Հ. Բաղրամյանի ցանկությունը իրականացավ միայն 1940 թվականի աշնանը վաղեմի ընկերոջ՝ այդ ժամանակ ար-

¹⁴ Անդ, էջ 17:

¹⁵ Անդ:

¹⁶ «Маршалы, генералы и адмиралы армянского происхождения в Санкт-Петербурге». Биографический справочник, составил Армен Меружанян, Санкт-Петербург, 2013, стр. 76.

դեն Կիելի հատուկ զինվորական շրջանի հրամանատար, բանակի, գեներալ Գ. Ժուկովի միջնորդությամբ¹⁷: ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1940 թ. սեպտեմբերի 2-ի հրամանով գնդապետ Բաղրամյանը նշանակվում է «Կիելի հատուկ ռազմական օկրուգի 12-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ: Ահա թե ինչ է այդ մասին գրել Բաղրամյանը. «Անսալով Կիելից ժամանած ընկերոջս՝ գեներալ-մայոր Ռուբցովի խորհրդին՝ նամակով դիմեցի իմ դասընկեր Գեորգի Ժուկովին, հետևյալ բովանդակությամբ, որ բանակային ամբողջ ծառայությունս անցել է զորքերում, բուռն ցանկություն ունեմ վերադառնալու գործող բանակ: Համաձայն իմ ամեն մի պաշտոնի: Երբ հուլյս կորցրել էի, հեռագիր եկավ Գ. Ժուկովից, որ հայտնում էր, թե իր միջնորդությամբ, ժողկոմը ինձ նշանակել է Կիելի հատուկ զինվորական օկրուգի զորքերի 12-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ: Ինձ կարգադրվում էր անհապաղ մեկնել Կիել»¹⁸: 1941 թվականի նոր տարին գնդապետ Բաղրամյանը դիմավորեց է Կիելում, նոր պաշտոնում՝ օկրուգի շտաբի պետի տեղակալ - շտաբի օպերատիվ բաժնի պետ¹⁹:

Հունիսի 22-ին՝ պատերազմի առաջին օրը, Բաղրամյանին վստահվեց Կիելի ռազմական օկրուգի վերակազմման հետևանքով ստեղծված Հարավ-արեւմտյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ-օպերատիվ բաժնի պետ պաշտոնը²⁰: Պատերազմի առաջին օրվանից ստեղծված ծայրահեղ բարդ եւ անբարենպաստ պայմաններում զբաղեցնելով այս բարդ պաշտոնը՝ նա երբեք խուճապի չէր մատնվում եւ ամենաճգնաժամային պայմաններում անգամ պահպանում էր ինքնատիրապետումն ու մարտական ոգին՝ ամբողջ ուժերը նվիրելով թշնամուն արժանի հակահարված տալու գործի կազմակերպմանը: Այդ մասին մարշալ Գ. Ժուկովն իր հիշողություններում գրել է «Այդ պաշտոնում գնդապետ Պ. Ռուբցովին շուտով փոխարինեց Հովհաննես Բաղրամյանը: Բաղրամյանին ես ճանաչում էի որպես հույժ լրջախոհ, հանգիստ, աշխատասեր, օպերատիվ, գրագետ աշխատողի»²¹:

¹⁷ Ի. Մեծ ժողովրդի զավակները: [Հուշեր ականավոր զորավարների մասին] / Ի.Ք. Բաղրամյան, Թարգմ.՝ Լ. Տ. Մելիքսեթյան, Երեւան, 1987, էջ 14:

¹⁸ Անդ, էջ 15:

¹⁹ Անդ, էջ 23:

²⁰ Գ. Կ. Ժուկով, հիշողություններ եւ խորհրդածություններ, հտ. 1, երկրորդ հրատ., Երեւան, 1987, էջ 246:

²¹ Տէս անդ:

Գնդապետ Բաղրամյանն անմիջական մասնակցություն էր ունենում մարտերի կազմակերպմանն ու ղեկավարմանը, վտանգի ենթարկելով կյանքը՝ լինում էր առաջին գծում, մարտնչող հրասայլային ու մեքենայացված զորամասերում, ի մոտո ծանոթանում իրավիճակին: Բարդ պայմաններում տեղի ունեցող ռազմաճակատի ռազմական խորհրդի նիստերի ժամանակ նա օպերատիվ-մարտավարական տեսակետից ճիշտ զեկուցումներ էր տալիս, որոնք հավանություն էին արժանանում ոչ միայն ռազմաճակատի հրամանատարության, այլ նաեւ Կարմիր բանակի գլխավոր շտաբի պետ Գ. Ժուկովի գնահատանքին. վերջինս հունիսյան այդ ծանր օրերին գտնվում էր Հարավ-արեւմտյան ռազմաճակատում: Հետագայում, վերհիշելով 1941 թ. հունիսի վերջերի այդ ծանր մարտերը, Ժուկովը բարձր է գնահատել Բաղրամյանի անձնվեր աշխատանքը, նրա «ծայրահեղ կենտրոնացած ու սեւեռուն միտքն ու կազմակերպչական սքանչելի ընդունակությունները, որոնք ցուցաբերվեցին այդ խիստ բարդ իրադրության մեջ՝ պատերազմի առաջին իսկ օրվանից»²²:

Այնուհետեւ գնդապետ Բաղրամյանը գործունե կերպով մասնակցել է Կիեւի պաշտպանությանը, որը շարունակվեց 1941 թ. հուլիսի 7-ից մինչեւ սեպտեմբերի 26-ը: Կառավարությունը բարձր է գնահատել գնդապետ Բաղրամյանի զինվորական ծառայությունը: ԽՍՀՄ Ժողկոմխորհրդի նախագահի 1941 թ. օգոստոսի 12-ի որոշմամբ նրան շնորհվել է գեներալ-մայորի կոչում²³:

1941 թ. սեպտեմբերի կեսերին ռազմական գործողությունների հետագա զարգացումն ընթանում էր ի վնաս Կիեւի պաշտպանների: Ռազմակայանի թույլ տված սխալների հետեւանքով Հարավ-արեւմտյան ռազմաճակատի ավելի քան կես միլիոնանոց զորքերը հայտնվում են շրջապատման մեջ:

Շրջապատման օղակից մարտերով դուրս եկողների մեջ էր գեներալ-մայոր Բաղրամյանը: Նա իր շուրջն էր համախմբել ռազմաճակատի շտաբի ողջ մնացած անձնակազմը, պահակային ջոկատները, շրջապատման մեջ հայտնված սպաներին ու զինվորներին, ստեղծել էր ավելի քան 1000 հոգուց բաղկացած մի զորաջոկատ, մարտերով նրանց հմտորեն առաջնորդել դեպի արեւելք, դուրս բերել ծուղակից, ողջ ու առողջ

²² Անդ, էջ 338:

²³ «Հայկական բանակ», հ. 4, 1997, էջ 17:

հասցրել Հարավ-արեւմտյան ուղղութիւնի հրամանատարութեան շտաբ²⁴: Այդ սխրանքի համար Բաղրամյանը պարգեւատրվել է Կարմիր դրոշի շքանշանով, որը նրա առաջին մարտական պարգեն էր Հայրենական մեծ պատերազմում:

Զնայած Կիւեւի պաշտպանութեան գործողութիւնն ավարտվեց Հարավ-արեւմտյան ռազմաճակատի զորքերի ծանր պարտութեամբ, այնուամենայնիվ այն կարեւոր դեր խաղաց «կայծակնային պատերազմի» գերմանաֆաշիստական ծրագրերի ձախողման գործում, թույլ չտվեց, որ հակառակորդը «ընթացքից» գրավի Կիւեւը, եւ դժվարացրեց նրա հարձակումը Մոսկվայի ուղղութեամբ:

Կիւեւի պաշտպանական գործողութեան ավարտից հետո գեներալ-մայոր Բաղրամյանը նշանակվեց նոր կազմավորված Հարավ-արեւմտյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ-օպերատիվ բաժնի պետ եւ այդ պաշտոնում մասնակցեց Ռոստովյան գործողութեան մշակմանն ու իրականացմանը: Այն տեղի ունեցավ 1941 թ. նոյեմբերի 5-ից մինչեւ դեկտեմբերի 2-ը²⁵: Դրա հետեւանքով նոյեմբերի 29-ին թշնամուց ազատագրվեց Կովկասի դարպասը հանդիսացող Դոնի Ռոստով քաղաքը: Ռոստովյան գործողութեան հետեւանքով ոչ միայն խոշոր պարտութեան մատնվեցին գերմանական առաջին տանկային բանակը եւ «Հարավ» բանակախմբի մյուս զորքերը (որոնք կորցրին իրենց անձնակազմի շուրջ մեկ երրորդը), այլեւ Դոնի Ռոստովի մոտ կաշկանդվեցին հակառակորդի «Հարավ» բանակախմբի գրեթե բոլոր ուժերը եւ հնարավորութիւն չտրվեց գերմանական հրամանատարութեանը այդ բանակախմբի հաշվին ուժեղացնելու Մոսկվայի ուղղութեամբ գործող իր ուժերը: Այստեղ տարած հաղթանակը մեծ չափով նպաստեց Մոսկվայի ճակատամարտում Կարմիր բանակի տարած հաղթանակին:

Ռոստովյան գործողութեան ժամանակ գեներալ-մայոր Բաղրամյանի դրսեւորած զորավարական հմտութիւնը հաշվի առնելով՝ Հարավ-արեւմտյան ուղղութիւնի գլխավոր հրամանատար Խորհրդային Միութեան մարշալ Տիմոշենկոն նրան ժամանակավորապէս նշանակում է ռազմաճակատի՝ Ելեցի ուղղութիւնում գործող օպերատիվ զորախմբի շտաբի պետ²⁶: Այստեղ եւս Հովհ. Բաղրամյանը մշակեց եւ փայլուն կերպով իրականաց-

²⁴ «Հայկական բանակ», հ. 4, էջ 17:

²⁵ Անդ:

²⁶ «Маршалы, генералы...», стр. 76.

րեց բանակային վերախմբավորումը, Ելեցի շրջանում: Դրա շնորհիվ դեկտեմբերին հաջողվեց հակահարձակմամբ Հարավ-արեւմտյան ռազմաճակատի աջ թեւում ճեղքել թշնամու շրջանը եւ անցնելով 80-ից 100 կմ, օգնել մյուս ռազմաճակատներին՝ նպաստելով Մոսկվայի մերձակայքում սկիզբ առած հակահարձակմանը²⁷:

Ուստի զարմանալի չէ, որ Հայրենիքը բարձր է գնահատել գեներալ-մայոր Բաղրամյանի զգալի ավանդը «Ռոստովյան» եւ «Ելեցյան» գործողությունների մշակման եւ իրականացման գործում: ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի 1941 թ. դեկտեմբերի 27-ի որոշմամբ նրան շնորհվում է գեներալ-լեյտենանտի կոչում: Հենց այդ ժամանակ էլ նա նշանակվում է Հարավ-արեւմտյան ուղղության զորքերի շտաբի օպերատիվ վարչության պետի պատասխանատու պաշտոնին: Հարավ-արեւմտյան ուղղության մեջ էին մտնում Բրյանսկի, Հարավ-արեւմտյան եւ Հարավային ռազմաճակատների զորքերը: Այդ պաշտոնում Բաղրամյանը 1942 թ. հունվարի 18-ից մինչեւ 31-ը մասնակցում է «Բարվենկովո-Լոզովայա» գործողության մշակմանն ու իրագործմանը, որի հետեւանքով Խարկովից հարավ ճեղքվեց թշնամու խիստ ամրացված պաշտպանությունը եւ ազատագրվեցին՝ Բարվենկովո (հունվարի 23) եւ Լոզովայա (հունվարի 26) քաղաքները, որոնք հակառակորդի թիկունքային խոշոր բազաներ ու կարեւորագույն երկաթուղային հանգույցներ էին:

Երկու ռազմաճակատների զորքերը ձմռան սաստիկ սառնամանիքի պայմաններում առաջ շարժվեցին 90–100 կիլոմետր, դրա արդյունքում վտանգի տակ դրվեցին հակառակորդի Դոնբասյան խմբավորման հաղորդակցության ուղիները: Կտրվեց գերմանական առաջին բանակի մատակարարման գլխավոր ճանապարհը, եւ տեղում կաշկանդեցին զգալի ուժեր, որոնք գերմանական հրամանատարությունը հնարավորություն չունեցավ փոխադրելու այլ ուղղություններ:

1942 թ. գարունը եւ ամառը անհաջողությունների շրջան եղան խորհրդային զորքերի համար:

1942 թ. գարնանը Բաղրամյանը «Խարկովյան» հարձակողական գործողությունների հիմնական մշակողների կազմում էր: Գիտենք, որ այն ավարտվեց անհաջողությամբ: Չնայած մարտական գործողությունների ընթացքում բոլոր որոշումներ ընդունելու եւ կայացնելու իրավասություն-

²⁷ Անդ, էջ 77:

նը մարշալ Ս. Տիմոշենկոյինն ու Ն. Խրուշչովինն էր, Ստալինը որոշել էր ձախողման գերագույն մեղավոր ճանաչել Հ. Բաղրամյանին: Ռազմական դատարանից (tribunal) հին ընկերոջը փրկեց Գ. Ժուկովը, որ բացատրեց Ստալինին. գործողության անհաջողությունը մասամբ գերագույն գլխավոր հրամանատարության մասամբ գլխավոր շտաբի մեղքով է²⁸:

Այդ օրերին թշնամին սրընթաց շարժվում էր դեպի Ստալինգրադ: Հունիսի 21-ին ռազմակայանը լուծարում է Հարավ-արեւմտյան ուղղությունը. իսկ դրանից մի քանի օր հետո՝ հունիսի 28-ին, գեներալ-լեյտենանտ Բաղրամյանը նշանակվում է Արեւմտյան ռազմաճակատի 61-րդ բանակի հրամանատարի տեղակալ: Հուլիսի 15-ին ստացվում է նոր հրաման՝ Բաղրամյանին Արեւմտյան ռազմաճակատի 16-րդ բանակի հրամանատար նշանակելու մասին: Այս պաշտոնում Բաղրամյանը ծառայում է մինչեւ 1943 թ. նոյեմբերի 17-ը²⁹: Հենց այդ ընթացքում է, որ փայլում է գեներալի զորավարական տաղանդը եւ նրա անունը հայտնի է դառնում երկրով մեկ: Հատկապես տպավորիչ էր 1942 թ. օգոստոս ամսին նրա բանակի հաջողությունը Սուխինիչի-Ժիզդերա ուղղությամբ, որտեղ կասեցվեց հակառակորդի խոշոր զորախմբի հարձակումը եւ նրան հասցվեց կենդանի ուժի ու տեխնիկայի զգալի վնաս, թշնամին կորցրեց 10 հազար սպանված զինվոր ու սպա, ավելի քան 200 հրասայլ, մեծ քանակությամբ այլ տեխնիկա³⁰: Փաստորեն 1942 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կասեցվեց հակառակորդի խոշոր խմբավորման (400–500 հրասայլ) առաջընթացը՝ ձախողելով գերմանա-ֆաշիստական հրամանատարության մշակած «Կրեմլ» գործողությունը: Դրանով նախատեսվում էր Մոսկվայի մատուցյններում խոշոր հարձակման տպավորություն ստեղծել, թյուրիմացության մեջ գցել խորհրդային բարձրագույն հրամանատարությանը եւ Կարմիր բանակի պահեստային միավորումները գամված պահել մայրաքաղաքի մերձակայքում, դրանով իսկ հեշտացնելով Ստալինգրադի եւ Կովկասի ուղղություններում հարձակվող գերմանական զորքերի գործը: Բայց ստացվեց հակառակը: Ծավալված կատաղի ճակատամարտի հետեւանքով, գերմանական հրամանատարությունը ոչ միայն ի վիճակի չեղավ «Կենտրոն» բանակախմբից թեկուզեւ մեկ դիվիզիա նետել հարավ՝ Ստալինգրադ, այլեւ ստիպված եղավ խորհրդա-


²⁸ Տէս «Маршалы...», էջ 77:

²⁹ Տէս «Հայկական բանակ», հ. 4, 1997, էջ 19:

³⁰ Անդ:

գերմանական ռազմաճակատի տարբեր հատվածներից լրացուցիչ ուժեր պահանջել՝ նետելով մոսկովյան ուղղություն՝ կասեցնելու համար Կարմիր բանակի հակահարվածը Ժիզդրայի հենակետը պահպանելու համար: Հետագայում, անձամբ Հիտլերը խոստովանել է, «Կրեմլի» ձախողումը եւ ընդհանրապես սխալ համարել այդ ձեռնարկը:

Շարունակությունը՝ հաջորդիվ



ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԱԱ

ՀԱՎԱԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ 1920–1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ¹

ՆԱԽԱԲԱՆ

1920 թ. Խորհրդային կարգերի հաստատումով Հայաստանում իշխող դիրք գրավեց հաղթանակած կոմկուսի բուլշեւիկյան գաղափարախոսությունը, որն սկսեց անհաշտ պայքար մղել անխտիր մյուս բոլոր գաղափարախոսությունների դեմ: Նոր իշխանությունները կրոնը դիտարկում էին որպես գաղափարախոսության ոլորտում իրենց մենաշնորհային դիրքի հաստատման ճանապարհին ծառացած մի անհաղթահարելի խոչընդոտ: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու (այսուհետ՝ ՀԱԵ) գաղափարախոսությունը (հաշվի չառնելով զուտ կրոնա-դավանանքային դրույթները) դարեր շարունակ եղել էր հայության գաղափարական հենասյուներից մեկը, եւ միայն այդ պատճառով ոչ միայն քաղաքականապես մերժելի էր կոմկուսի գաղափարական տեսանկյունից, այլեւ՝ վտանգավոր:

Համակարգային ճգնաժամն զգալիորեն ազդել էր կրոնի ու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դեմ նոր իշխանությունների պայքարում սոցիալ-հանրային հիմքի ձեւավորման վրա: Այսպես՝ զանգվածների սնահավատ անաստվածությունը, Եկեղեցուց քաղաքականացված երիտասարդության ստվար հատվածի ինչ-որ չափով օտարացումը, տարիներ շարունակ հասարակական-քաղաքական միավորների կողմից աթեիստական գաղափարների քարոզումը հասարակության հատկապես ընկերային վատթար վիճակում գտնվող խավերի շրջանում (իսկ Խորհրդային Հայաստանի բնակչության գերակշիռ մասը գերազանցապես մանրգյուղացիական ու կրթական ցածր աստիճան ունեցող կամ հիմնականում անգրագետ խավն էր) ձեւավորել ու արմատավորել էին

¹* Ստացվել է՝ 3.02.2022, գրախոսվել է՝ 13.02.2022:

էլ. հասցէ՝ avag.harutyunyan@yandex.com:

սոցիալիստական-կոմունիստական հավասարեցնող գրավիչ գրույթների վրա հիմնված զանգվածային մտայնություն: Հենց լյուծակենացված այդ սոցիալական խավերի վրա էլ հիմնվեցին նոր իշխանությունները կրոնի դեմ գաղափարա-գործնական պայքարում:

ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Հակակրոնական պայքարի ճակատում համեմատական անդորրի ժամանակներն ավարտվեցին նոր տնտեսական քաղաքականության հետ միաժամանակ, եւ 1927-ից աշխուժացավ պայքարը: Արդեն 1928 թ. ապրիլին ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինը կուլակների դեմ պայքարը անմիջականորեն կապեց «զանգվածների շրջանում ամենամարտական հակակրոնական աշխատանքների» իրականացման անհրաժեշտության հետ²:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի «Հակակրոնական պայքարի ուժեղացման միջոցառումների մասին» հրահանգով 1929 թ. հունվարի 24-ին հատուկ հրահանգվեց ԽՍՀՄ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատին (ՆԳԺԿ) եւ Միացյալ Պետական քաղաքական վարչությանը (ՄՊՔՎ) խստացնել պայքարը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «կրոնական կազմակերպությունները միակ լեզու գործող հակահեղափոխական կազմակերպություններն են, որ զանգվածների վրա ազդեցություն ունեն»։ Հակակրոնական աշխատանքների իրականացումը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Քարտուղարությունը 1926 թ. մայիսի 28-ին հավասարեցրեց կարեւորագույն կուսակցական հանձնարարություններին: ՌՍՖՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի (ԿԳԿ) եւ ժողովրդական կոմիսարների խորհրդի (ԺԿԽ) 1929 թ. ապրիլի 8-ի «Կրոնական միավորումների մասին» որոշմամբ (կոնկրետացված ՆԳԺԿ 1929 թ. հոկտեմբերի 1-ի «Կրոնական միավորումների իրավունքների եւ պարտավորությունների մասին» հրահանգով) կրոնական համայնքների կյանքը եւ կենցաղը դրվեցին պետական մարմինների բացարձակ վերահսկողության տակ: «Պայքարը կրոնի դեմ — պայքար է սոցիալիզմի համար» լոզունգը դեռ 1922 թ. ձեւակերպել էր Լ. Տրոցկին «Հանրապետության գրությունը եւ բանվորական երիտասարդության խնդիրները» հոդվածում³:

² Стен И. Сталин, Сочинения, т. 11, Москва, 1949, էջ 50:

³ Стен Ю. Н. Макаров, Новый курс религиозной политики в СССР (конец 1920-х-начало 1930-х гг.), Вестник СГУТКО, 2010, №4, էջ 172—176:

Հակակրոնական պայքարի ոլորտում պետանվտանգության մարմինների գործունեության համար ուղենշային քաղաքական դերակատարություն ունեցավ ԽՍՀՄ ՄՊՔՎ «Եկեղեցական շարժման վիճակի հեռանկարների ու ՄՊՔՎ մարմինների հետագա խնդիրների մասին» 1930 թ. մարտի շրջաբերականը⁴։ Այդտեղ մասնավորապես նշվում էր. «Պաշտամունքի այն սպասավորների նկատմամբ, որոնք լրտուներ են եւ ապրում են համընդհանուր կոլեկտիվացման շրջաններում, հարկավոր է հատուկ գիծ բռնել։ Անհրաժեշտ է արժեքավոր լրտուներին պահպանել այնտեղ՝ հետագա աշխատանքների համար։ Ավելի անարժան լրտուները, որոնք կարող են վտարվել համատարած կոլեկտիվացման շրջաններից, չպետք է կորցնեն կապը ՄՊՔՎ մարմինների հետ։ Նրանց հարկավոր է որպես լրտուներ օգտագործել բնակության նոր վայրերում նույնպես՝ հայտնելով նրանց վերաբնակեցման մասին ՄՊՔՎ համապատասխան մարմիններին։ Ինչ վերաբերում է այն լրտուներին, որոնք պաշտամունքի սպասավորներ են, բայց բացարձակորեն անպետք են անաշխատունակության եւ արժեքի իմաստով, նրանց հետ պետք է խզել կապը՝ վերցնելով հաշվառման։ Այն եկեղեցական լրտուները, որոնք, պարզվել է, որ երկերեսանի են՝ անհրաժեշտ է խիստ բռնաճնշման ենթարկել։ Անհրաժեշտ է այնուամենայնիվ նկատի ունենալ, որ նորարարների⁵ կողմից կոչումներից հրաժարումը պետք է իրականացվի ամենավերջին հերթին։ Կոչումից հրաժարումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե այդ գործողությունը կարող է մեծ դրական քաղաքական դեր խաղալ Եկեղեցու վարկաբեկման եւ փլուզման գործում, կամ այն դեպքում, երբ մեր գործընկերները տապալվում են, կամ եկեղեցականների հետ աշխատանքում կորցրել են իրենց արժեքը։ Մեր եկեղեցական քաղաքականությունը, որի հիմնական խնդիրն է ամեն կերպ Եկեղեցու քայքայումը եկեղեցու պառակտմանը խթանելու միջոցով, պետք է սրանից հետո եւս կատարվի նույն հետեւողականությամբ եւ հաստատակամությամբ, ինչպես առաջ, որովհետեւ այս քաղաքականությունը մեզ պետք կգա ինչպես մեր ցանկացած ուղղությամբ այստեղ ԽՍՀՄ տարածքում եկեղեցու վրա ազդելու, այնպես էլ՝ արտասահմանում ուղղափառ եկեղեցու հետ կապված մի շարք հարցեր լուծելու հա-

⁴ Տե՛ս Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգեւորականները 1930—1938 թթ. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), Երեւան, 1997, էջ 28—42։

⁵ Նկատի ունեն «նոր» հոգեւորականներին։

մար»⁶։ «Մեր վերաբերմունքը եկեղեցականների նոր մարտավարության նկատմամբ սահմանելիս, մենք ստիպված էինք հաշվի առնել, որ գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը եւ անգամ աղքատների մի մասը վարակված են կրոնական նախապաշարմունքներով։ Բացի այդ, եկեղեցին գյուղում ուներ ամուր ծխական-կենցաղային արմատներ։ Բնականաբար, մենք չէինք կարող այդ պայմաններում լիկվիդացնել եկեղեցին, ուր մտնում է բազմամիլիոն գյուղացիությունը»⁷։

Որպես այս ամենի հետեւանք՝ հանրային կյանքի բոլոր ոլորտներում կոմկուսի գաղափարական պայքարի ուժգնացումը հանգեցրեց պետական իշխանության ու եկեղեցու հակամարտության սրմանը եւ ուժեղացմանը, ինչում հասկանալիորեն որպես վարչա-քաղաքական թույլ կողմ եկեղեցին պետք է պարտվեր՝ հատկապես հաշվի առնելով նրա դեմ ուղղված պայքարում ՄՊՔՎ-ի պատժիչ գործելակերպը։

ՀԱՆ վերացման կամ առնվազն գաղափարապես ու ընկերային առումով կատարյալ չեզոքացման՝ կոմկուսի որդեգրած քաղաքական ուղեգիծն ընթանում էր եկեղեցական արժեքների բռնագրավման (իրականում՝ թալանի), ներեկեղեցական պառակտման, հոգեւորականների բռնաճնշումների (դատով եւ առանց դատաստանի, սակայն իրականում՝ ապօրինի) համատարած կիրառմամբ։

ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

ՎԱՐՁԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

1920–1930-ական թվականներին եկեղեցու քայքայման եւ ընդհանրապես հակակրոնական աշխատանքների կազմակերպման անմիջական իրականացնողը ԽՍՀՄ ՄՊՔՎ էր, որը համակարգվում էր նրա Գաղտնի բաժնի 6-րդ բաժանմունքի կողմից⁸։ Հենց այս մարմինն էր գործնականում մշակում եկեղեցու քայքայման եղանակներն ու մեթոդները, սպառնալիքի կամ նյութական շահագրգռման միջոցով հոգեւորականության

⁶ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգեւորականները 1930–1938 թթ., էջ 39–41։

⁷ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920–1953 թթ., Երեւան, 1999, էջ 117։

⁸ Մանրամասն տե՛ս Н. А. Кривошаев, Власть и Церковь в 1922–1925 гг. Политбюро и ГПУ в борьбе за церковные ценности и политическое подчинение духовенства. М., 1997. Ю. Н. Макарова, Советская государственная религиозная политика и органы ВЧК-ГПУ-ОГПУ-НКВД СССР (октябрь 1917-конец 1930-х годов). СПб, 2007։

շրջանում տեղեկատու-գործակալների ցանցի ստեղծումը, «անհնազանդ» հոգեւորականների նկատմամբ բռնաճնշումների իրականացումը: Մյուս կողմից, ԽՍՀՄ-ում բարենորոգչական պառակտման անմիջական ղեկավարն ու իրականացնողը եւս նշյալ բաժանմունքն էր՝ հին չեկիստ Ե. Տուչկովի գլխավորությամբ: Այս բաժանմունքի հրահանգներով էր գործում ՀԽՍՀ Պետական քաղաքական վարչությունը (ՊՔՎ)⁹:

Օգտագործելով պետական անվտանգության մարմինների ողջ ներուժը՝ կոմկուսը ձեռնարկեց նաեւ հակակրոնական քաղաքական պայքարի նոր եղանակ՝ ՀԱՅ պառակտել ներսից: «Բաժանիր եւ տիրիր» պատմականորեն փորձարկված քաղաքական մեթոդն սկսվեց լայնորեն կիրառվել հենց ներեկեղեցական խլրտումներ, հոգեւորականների շրջանում «բարենորոգչական» մտայնություն ձեւավորելու ուղղությամբ: Ամեն գնով՝ հատկապես վարչա-հրամայական ու պատժիչ գործիքակազմի համակողմանի կիրառմամբ, ՊՔՎ արհեստականորեն ավելի խորացրեց ՀԱՅ ներսում առարկայաբար գոյություն ունեցող թույլ արտահայտվող տարածայնությունները կամ դժգոհությունները:

Առաջ եկած նոր շարժումներն անգամ սաղմնային վիճակում ինչ-որ գրավիչ բարենորոգչական գաղափարներ էին պարունակում, որոնք իրենց թեպետ թույլ, սակայն որոշ դերակատարումն էին ունենում հավատի կամ կրթա-քաղաքական պատրաստվածության առումով անպատրաստ, հեղափոխական նոր հովերով տարված սոցիալական խավերի շրջանում: Պետական անվտանգության մարմիններն այս տեսանկյունից շատ էին օգտագործում նաեւ Եկեղեցու բարձրագույն ղեկավարության նկատմամբ միջին ու ստորին հոգեւորական աստիճանակարգի շրջաններում առկա որոշ անբավարարվածությունը՝ քարոզելով անգամ կենցաղային փաստարկներ:

ՊՔՎ մարմինները քաջ գիտակցում էին, որ հակակրոնական քաղաքական պայքարում հարվածի հիմնական ալիքն ու շեշտադրումներն ուղղորդելով բարձրաստիճան հոգեւորականների դեմ՝ դրանով իսկ խարխուլում էին հենց բուն եկեղեցակրոնական համակարգը, բնակչության հոգեւոր հավատքը: Պետական համակարգը օգտագործելով նոր բարեփո-

⁹ ՀԽՍՀ ՊՔՎ գործունեությունը հետազոտած եզակի հեղինակներից Ն. Ապիյանը հակակրոնական պայքարի թեմային, ցավոք, ուշագրություն չի դարձրել: Տե՛ս Н. А. Апи-ян, Из истории НКВД Советской Армении (1920—1946 гг.). Е., 1986. Органы государственной безопасности Советской Армении в период строительства социализма 1920—1934 гг. Е., 1980:

խիչ հովերով տարված հոգեւորականներին՝ ամենեւին նպատակ չունեն հին Եկեղեցին փոխարինել նորով, առավել եւս՝ իբր թե ձեւավորվելիք «նոր Եկեղեցուն» կյանքի մշտական ուղեգիր տալ: «Նոր» հոգեւորականների անվերապահ գործակցությունը պետության հետ իրականում շեղում եւ ի չիք էր դարձնում նրանց իսկ ծրագրերի իրականացումը՝ նրանց դարձնելով իշխանությունների ձեռքին պարզապէս հլու-հնազանդ սոսկական գործիքներ՝ եկեղեցին ներսից քայքայելու նպատակով: «Բարեփոխիչ հոգեւորականների» օգտագործումը ՊԲՎ-ին հնարավորություն էր տալիս ավելի արդյունավետ աշխատել ՀԱՆ դեմ: Սակայն, հավաքագրված կամ այլ դրդապատճառներից ելնելով, ՀԱՆ ղեկավարության դեմ հանդես եկող սակավաթիվ հոգեւորականների գերակշիռ մասի հիմնական շարժառիթները կենցաղային կամ անձնական բնույթի էին՝ զուրկ հոգեւոր-գաղափարական լուրջ հիմնավորումներից:

ՀԽՍՀ ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային համակարգում հակակրոնական պայքարը ղեկավարում էր ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի տեղական մարմինը՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմը, ԽՍՀՄ ՄՊՔՎ հանրապետական մարմին ՊՔՎ աշխույժ մասնակցությամբ, թեպետ դրանց գործունեությունը շղարշվում էր ՀԽՍՀ ԿԳԿ-ի եւ համապատասխան այլ ժողկոմատների (օրինակ՝ Լուսավորության, ներքին գործերի, արդարադատության) միջոցով:

Բերենք մի քանի օրինակ ՊՔՎ մարմինների՝ ՀԱՆ դեմ պայքարի տարաբնույթ դրսեւորումների վերաբերյալ: ՀԱՆ նկատմամբ պետանվտանգության մարմինների դիրքորոշման, գործնական-քաղաքական կեցվածքի տեսանկյունից բնութագրական են դրանց համապատասխան զեկուցագրերը, որոնք կրում էին «հույժ գաղտնի» նշագրում: Դիտարկենք մի քանիսը: Այսպէս՝ դեռ 1923 թ. օգոստոսի 10-ի ՀԽՍՀ Արտակարգ հանձնաժողովի «Հայ-լուսավորչական հոգեւորականների գործունեությունը ներկայումս» զեկուցագրում խնդիրը դիտարկելով միջազգային հարաբերությունների տեսանկյունից՝ մասնավորապէս շեշտվում էր. «Հայ-լուսավորչական հոգեւորականությունը ինչպէս անցյալում, նույնպէս եւ ներկայումս առանձնահատուկ հպարտությամբ շարունակում է իր հին ուղին, այն է՝ միջազգային իմպերիալիզմի հետ ամուր կապի պահպանու-

մը, հանձինս առանձին ազգայնական կուսակցությունների: Ընդգծելով հոգեւորականների մասնակցության փաստը իմպերիալիստական պատերազմի նախօրեին, որ իր հոգեւոր-հայրենասիրական կոչերով բնաջնջեց հայ-թուրքական բնակչությանը, կարելի է որոշակի ասել, թե որքան վնասակար դասակարգ է այն խորհրդային Հայաստանի համար: Դրանով է բացատրվում, որ հայ հոգեւորականության կենտրոնը՝ էջմիածինը, իսկապես ապաստարան եւ հանգրվան է այն սուրբ հոգեւորականների, ովքեր հայտնի են իրենց հակախորհրդային եւ հակակոմունիստական գործողություններով եւ ովքեր ամեն կերպ ձգտում էին կործանել ողջ ներկայիս հասարակարգը եւ հնարավորություն տալ Անտանտային հովանավորել Հայաստանին»¹⁰:

Անդրադառնալով ՀԱԵ-ի վիճակին՝ այն առարկայաբար գնահատվում էր հետեւյալ կերպ. «Ինչպես ցույց են տալիս եղած տեղեկությունները, համարյա բոլոր հայկական եկեղեցիները ներկայումս աննախանձելի վիճակում են: Հատկապես խոշոր միջոցներ բացի հատ ու կենտ նվիրատվություններից նրանք չունեն: Եկեղեցիների մեծ մասը կարիք ունեն հիմնավոր վերանորոգման, իսկ շատ տեղերում դրանք համարյա քանդվում են: Բնակչությունն այդ երեւույթներին անտարբեր է վերաբերվում: Այս պահին հաշվվում է ընդամենը 850 եկեղեցի եւ 1115 քահանա, որից Հայաստանում փակվել է ընդամենը 20 եկեղեցի: Եկեղեցիների հետագա փակումը Հայաստանում կասեցված է: Որեւէ էքսցես եկեղեցիների փակման ժամանակ Հայաստանում չի եղել»¹¹:

Կարեւորելով Աբել եւ Բենիկ նախկին վարդապետներին աջակցելու փաստը, առանձնակի ուշադրություն էր դարձվում հոգեւորականության ու հավատացյալների դեմ պայքարին՝ այն ներկայացնելով բավականին մանրամասն ու քաղաքականապես հաշվարկված: Մասնավորապես, այդ պայքարի նախագծում նշվում էին հետեւյալ կետերը. «1. Ոչ մի դեպքում եւ ոչ մի ձեւով կրոնական թեմաներով բանավեճերի տեղիք չտալ հոգեւորականության ներկայացուցիչների հետ՝ հայ բնակչության մեջ: 2. Դոգմատիկ դրույթների քննարկումն ու քննադատությունը պարտադիր չհամարել: 3. Սիստեմատիկ աշխատանք տանել ամեն տեսակի սրբությունների, սրբապատկերների երկրպագումը տարհամոզելու ուղղությամբ,

¹⁰ ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՅ (Տավուշեցի), Երեւան, 1997, էջ 201–207: ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թթ. 32–35:

¹¹ Անդ:

գիտականորեն ապացուցելով դրանց անհիմն լինելը գիտական առումով: 4. Հակակրոնական պրոպագանդայի լավագույն մեթոդ համարել համակարգված եւ պլանավորված ձեռով բնական-գիտական գիտելիքների տարածումը այդ բառի լայն իմաստով եւ տեխնիկայի նվաճումների օգտագործումը պրակտիկայում, դրա համար օգտագործելով գյուղական ուսուցչին, բժշկին, գյուղատնտեսին: 5. Լայնորեն տարածել հակակրոնական գրականություն գյուղացիության համար մատչելի բովանդակությամբ, օգտագործել քաղաքական սատիրան՝ հոգեւորականության տարբեր ներկայացուցիչներին նմանակելով, ստեղծել քարոզչական ընկերության հատուկ կադր՝ հակակրոնական քարոզչության տարածման համար: 6. Հայ-լուսավորչական հոգեւորականության մեջ պառակտում գցելու համար ռեֆորմիստների խումբ ստեղծել, տերտերներից եւ սեւ¹² հոգեւորականությունից լրտեսներ հավաքագրել, անցկացնել բոլոր քահանաների եւ հոգեւորականների երկու խմբի լրիվ եւ ճիշտ հաշվառում: 7. Մամուլի համար օգտագործել բոլոր եղած նամակները եւ այլ նյութերը հոգեւորականության եւ նրա գործողությունները վարկաբեկելու նպատակով»¹³:

1924 թ. փետրվարի 29-ի զեկուցագրում հատուկ շեշտադրվում էր ՀԱԵ պառակտման կարեւորությունը. «Ներկայումս գերագույն խնդիր է հայ հոգեւորականության մեջ պառակտում եւ քայքայում մտցնելը, որի համար պետք է օգտագործել գերագույն թեմի¹⁴ դեմ տրամադրված եւ նրա գործունեությունից հիասթափված որոշակի խմբերի: Այժմ նման տարրերի մեջ լրտեսների հավաքագրում է կատարվում, նման աշխատանքը լավ արդյունքներ է տալիս, եւ այդ լրտեսների հավաքագրումը կատարվում է հանրապետական մասշտաբով»¹⁵: ՀԽՍՀ ՆԳԺ-ն Գերագույն հոգեւոր խորհրդին (ԳՀԽ) երկու անգամ՝ 1927 թ. դեկտեմբերի 20-ին եւ 1928 թ. մարտի 30-ին հորդորեց այլ թեմեր (ԽՍՀՄ հանրապետություններ կամ արտասահման) փոխայցելությունների, գործողումների տեղեկացման ու նախօրոք համաձայնություն ստանալու անհրաժեշտության մասին¹⁶:

¹² Նկատի ունեն կուսակրոն:

¹³ Անդ:

¹⁴ Նկատի ունեն Մայր Աթոռ:

¹⁵ ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՅ (Տափուշեցի), էջ 235—239: ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թթ. 7—8:

¹⁶ Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության (1921—1938), Երեւան, 1994, էջ 123—124: ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 640, թ. 7—8:

Այդ առթիվ ցայտուն օրինակ է Անդրկովկասի ՊՔՎ 1930 թ. սեպտեմբերի 7-ի զեկուցագիրը ՀԿ(բ)Կ Կենտկոմին Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության մասին¹⁷։ Այդտեղ մասնավորապես փաստվում էր. «Կաթողիկոսի ընտրության հարցը մեզ համար մեծ լրջություն է ներկայացնում նաեւ նրանով, որ մինչ այժմ մեր բոլոր փորձերը վերցնել էջմիածինը մեր լիակատար ազդեցության տակ եւ իրականացնել մեր գիծը ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ՝ հատկապես արտասահմանում, դրական արդյունքներ չեն տվել։ էջմիածինն իր հեղինակությամբ հսկայական աջակցություն է ցուցաբերել դաշնականներին, եւ քողարկված հակախորհրդային աշխատանք տարել։ Չնայած ակնհայտ թշնամական գործունեությանը՝ էջմիածինը նախընտրել է բացահայտ չպայքարել խորհրդային իշխանության դեմ, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ ձգտել է ցույց տալ իր «լոյալությունը» եւ մեզ ծառայելու պատրաստակամությունը»¹⁸։ Սրանով հանդերձ՝ շեշտադրվում էր ՀԱՅ կարեւորությունը ու ՊՔՎ ազդեցության շրջանակում ընդգրկելու անհրաժեշտությունը. «Հայ-գրիգորյան եկեղեցին՝ չնայած ԽՍՀՄ-ում նրա գործունեությունը մեծապես թուլացնելու մեր աշխատանքին, այնուամենայնիվ ցուցաբերում է նշանակալից աշխուժություն եւ քողարկվելով բարձր հավատարմությամբ, շարունակում է քողարկված հակախորհրդային աշխատանք վարել։ Մեզ անհրաժեշտ է ինչ էլ լինի՝ վերջնականապես մեր ազդեցության տակ վերցնել էջմիածինը»¹⁹։

Պետանվտանգության մարմինների՝ հատկապես արտասահմանում, հակակրոնական գործունեության մասին ուշագրավ տվյալներ է հաղորդում ՄՊՔՎ նախկին աշխատակից հայազգի Գ. Աղաբեկովը։ Ըստ նրա՝ ԽՍՀՄ ՄՊՔՎ Արտասահմանյան հետախուզության բաժնի Արեւելյան բաժանմունքը հետախուզական նպատակներով զբաղվում էր հայ հոգեւորականներով, հիշատակում է ՄՊՔՎ հետ համագործակցողներին²⁰։ Հատկանշական է, որ նշյալ հոգեւորականների մասին Աղաբեկովի կարծիքը բացասական էր։

Հոգեւորականության շրջանում հավաքագրման աշխատանք իրականացնում էր նաեւ ՀԽՍՀ ՊՔՎ, ինչը նրա կարեւոր, սակայն հիմնական

¹⁷ Տե՛ս Ա. Ս. Вирабян, Документы о выборах католико́са армянской церкви (1930—1932 гг.), Вестник общественных наук, 1996, №1, էջ 137—150։

¹⁸ Անդ, էջ 138—140։

¹⁹ Անդ, էջ 146—147։

²⁰ Տե՛ս Գ. Ս. Агабеков, ГПУ (Записки чекиста). Берлин, 1930, էջ 166։

գործառույթը չէր: Ինչպես արդեն նշեցինք, ՊԲՎ գլխավոր պատժիչ գործառույթը ՀԱՆ եւ հոգեւորականների, կառույցների դեմ համապարփակ ու բազմակողմանի քայքայիչ գործունեությունն էր: Այդ գործելակերպի առանձնահատուկ երեւացող կողմը, ողբերգական հետեւանքներով, հայ հոգեւորականների զանգվածային բռնաճնշումներն էին:

Մի քանի թվական տվյալներ ներկայացնենք: 1930—1936 թթ. բռնադատված 116 հոգեւորականից 111-ը ներկայացնում էին ՀԱՆ-ն, 4-ը Հայ Կաթոլիկ եւ 1-ը Հայ Ավետարանական Եկեղեցուց էին: Նրանք մեղադրվել էին Հ. Յ. Դ. ընդհատակյա գործունեության, հակախորհրդային աշխատանքի մեջ: «Բանդիտական» գործունեության մեջ մեղադրվել եւ գնդակահարվել էր 3 հոգեւորական, 29 հոգի դատապարտվել էր 5 տարի, 22-ը՝ 3 տարի, 16-ը՝ 2 տարի, 12-ը՝ 1—1,5 տարի, 4-ը՝ 10 տարի աքսորի: Սպանվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբեկյանը, գնդակահարվեցին երկու եղբայրները: Եթե 1930—1936 թթ. բռնադատվում էին հիմնականում գյուղական քահանաները, ապա 1937—1938 թթ. ձերբակալվեցին 1 արքեպիսկոպոս, 3 եպիսկոպոս, 3 վարդապետ, Արտակ արք. Սմբատյանը²¹ գնդակահարվեց, Իսահակ եպս. Տեր-Միքայելյանն²² աքսորվեց: 1936 թ. օգոստոսին ձերբակալվեց Թադեւոս եպս. Հարությունյանը եւ 1937 թ. գնդակահարվեց, 1938 թ.՝ Բագրատ արք. Վարդազարյանը: 1937—1938 թթ. բռնադատվեցին 79 քահանա, 2 սարկավազ, 1 աբեղա: 1930—1940 թթ. բռնադատվեց 161 հոգեւորական, որից 149-ը՝ ՀԱՆ անդամ, գնդակահարվեց 91 հոգեւորական, 15-ը դատապարտվեց 10, 15-ը՝ 5 տարվա աքսորի: 1940—1953 թթ. դատապարտվել է 12 հոգեւորական²³:

²¹ Առտակ եպիսկոպոս Սմբատյանց: Ծնվել է 1876 թ. մարտի 19-ին Տավուշ գյուղում: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Գետրգյան ճեմարանը: 1903 թ. ձեռնադրվել է վարդապետ: 1920—1921 թթ., 1928—1930 թթ. եղել է Շիրակի, 1922—1927 թթ.՝ Սյունիքի թեմի առաջնորդ: 1932—1935 թթ. պաշտոնավարել է Մայր Աթոռում, 1935 թ. սկզբին նշանակվել Երեւանի թեմի հայրապետական լիազոր ներկայացուցիչ: 1937 թ. ապրիլի 13-ին ձերբակալվել է, օգոստոսի 31-ին ՆԳժԿ եղյակի նիստում դատապարտվել գնդակահարության, որն ի կատար է ածվել սեպտեմբերի 2-ի՝ լույս 3-ի գիշերվա ժամը 2-ին: 1957 թ. նոյեմբերի 5-ին ՀԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի կոլեգիան որոշումը հայտարարել է չեղյալ:

²² Իսահակ եպիսկոպոս Տեր-Միքայելյան: Ծնվել է 1868 թ. Հյուսիսային Արցախի Բանանց գյուղում: 1924—1928 թթ. եղել է Շիրակի թեմի առաջնորդ: Ձերբակալվել է 1936 թ.: 1937 թ. հուլիսի 21-ին ՆԳժԿ եղյակի որոշմամբ դատապարտվել է 5 տարվա աքսորի: Մահացել է 1938 թ. մարտի 1-ին աքսորավայրում:

²³ Տես Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգեւորականները 1930—1938 թթ., Երեւան, 1997, էջ 43—272:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Անտարակույս, ՀԱԵ-ի ներսում պառակտման ձեւավորման եւ գործունեության գլխավոր պատճառը կոմկուսի եւ խորհրդային պետության քաղաքականությունն էր, որն ըստ ամենայնի աջակցում եւ նպաստում էր դրա ծավալմանը եւ արդյունքում՝ ՀԱԵ փայփայմանն ու վերջնական վերացմանը: Պառակտման փաղափականություն վարելու գործընթացում ՀԱԵ հավասարեցվում է հակախորհրդային մյուս կառույցներին, նույնացվում էր դրանց հետ, եւ նրա նկատմամբ իրականացվում էր ընդհանուր առմամբ այն նույն վարչա-փաղափական բռնաճնշիչ գիծը, ինչը որ հակախորհրդային կուսակցությունների նկատմամբ էր իրականացվում:

Զնայած պետությունից եկեղեցու անջատման մասին դրույթին սահմանադրական կարգավիճակ տալու հանգամանքին՝ խորհրդային պետական համակարգը ի սկզբանե մշտապես միջամտում էր ՀԱԵ ներքին գործերին, ինչպես ցանկացած այլախոհության դրսեւորման դեպքերում, ճնշումներ էր իրականացնում նաեւ կրոնաեկեղեցական ոլորտում: Արդյունքում ՀԱԵ զրկվել էր հասարակական կյանքում որեւէ դերակատարություն ունենալու իր առաքելությունից, իսկ հոգեւոր կյանքն ամբողջությամբ փոխարինվել էր «սոցիալիստական բարոյականությամբ», Աստծու հանդեպ հավատը՝ սոցիալիզմի կառուցմանը նվիրվածությամբ: Այսինքն՝ վարչա-հրամայական եղանակներով, քաղաքականապես ու վերջնականորեն պետություն—եկեղեցի հարաբերակցությունը հավասարեցվել էր զրոյի, ՀԱԵ-ն՝ որպես հակաժողովրդական հետադիմական-հակահեղափոխական կառույց, վերածվել էր ՊԲՎ մշտական բռնաճնշումներին ենթակա մարմնի:

Իր հերթին ՀԱԵ ստիպված էր պարզապես պայքարել նվազագույն անհրաժեշտ կազմակերպչական կառույցի ու միասնության պահպանման եւ ընդհանրապես եկեղեցական ինստիտուտի գոյատեւման համար: Իսկ արդեն պետությունը, չկարողանալով վերջնականապես լուծարել վերացնել ՀԱԵ, «եկեղեցական քաղաքականության» այլընտրանքային ուղիներ էր որոնում՝ իհարկե մինչեւ 1930-ական թվականների վերջը հույս ունենալով վերջնականապես վերացնել գաղափարադասակարգային հակառակորդին: Խղճի լիակատար ազատության հաստատման մասին կոմկուսի աթեիստական քաղաքականությունը բացառապես ձեւական բնույթ էր կրում:

Չնայած վարչահրամայական բազմատեսակ միջոցներին, այնուամենայնիվ, ՀԱՆ ներկայացուցիչների գերակշիռ մասը մինչև վերջ հավատարիմ մնաց մայր Եկեղեցուն, իսկ անասելի նյութական զրկանքների պարտադրմամբ հրաժարական տված ծխական քահանաներն²⁴ այդպես էլ չմասնակցեցին այդ շարժմանը:

Մայր Աթոռի վեհարանում 1928 թ. նոյեմբերի 11-ին ընդունելով ՆԳԺԿ ժողովոմ Ս. Մելիք-Հովսեփյանին՝ Գեորգ Ե.-ն հստակ ներկայացրեց ՀԱՆ շուրջ ձեռնվորված իրավիճակը. «1. Խղճի եւ կրոնի ազատությունը վարչական կարգադրություններով ենթարկվում է զգալի սահմանափակումի, 2. տոմարագրված եկեղեցի չկա, 3. հալածանքներ հոգեւորականների դեմ, 4. Օրացույցի խնդիր, 5. Բնակարանների հարց, 6. եկեղեցիների փակում»: Նա շեշտեց ՀԱՆ քաղաքական դիրքորոշումը. «էջմիածինը զբաղվում է բացառապես եկեղեցու խնդիրներով եւ ոչ մի կապ եւ առնչություն չունի քաղաքական կամ կուսակցական խնդիրների վերաբերյալ: էջմիածինը հայության կենտրոնն է: Կառավարության բռնած դիրքը էջմիածնի հանդեպ սխալ է: Պետք է վերջ տալ հարձակումներին եւ հալածանքներին: էջմիածինը դեռ մնում է որպես հայության կենտրոն եւ ամենաուժեղ հայությանը կապող օղակ: Դրսի հայությունը անպայման

²⁴ Ներկայացնենք հրաժարականի օրինակներ: «Ուսուցիչ էի, լսելով մամուլի ձայնին եւ հասարակության ցանկությանը՝ քահանա դարձա, հույս ունեի, որ ավելի լայն շափով կծառայեմ ժողովրդին, այն ժողովրդին, որին պարտական եմ իմ ստացած կրթությամբ: Այդ պարտքը մինչև օրս կատարեցի դպրոցում: Քահանայությունը ներկայումս կորցրել է իր ոտքի տակի հողը, եւ քահանան լոկ ծխակատար է. դատարկ ծխակատարությունը բավարարություն չի տալիս իմ մտքին եւ հոգուն: Իմ հարազատ միջավայրը եղել է դպրոցը, միակ մխիթարության աղբյուրը, որտեղ անցել են իմ լավ ու վատ օրերը: Թողնում եմ քահանայությունս, ցանկանալով ապրել հալալ աշխատանքով: Այլեւս քահանա չեմ, այլ աշխարհական: Ն. Նիկողոսյան (նախկին Ներսես քահանա Նիկողոսյան, նախկին Ալեքսանդրի նախկին ծխատեր)», Հրաժարիմք տերտերությունից: Նամակ խմբագրության. Քահանայի դեկլարացիան, «Խորհրդային Հայաստան», Երեւան, 1924, ապրիլի 9: «Եւ Դսեղի քահանա եւ նույն գյուղի բնակիչ Արիստակես Եգանյան, քահանայի պաշտոն վարելով 26 տարի եւ երկար ժամանակ ապրելով կեղծ եւ ստոր արարմունքներով, այսօր խորհրդային իշխանության օրոք, երբ բացվեցին ամբողջ հոգեւորականության կեղծիքները եւ նրա ստոր կողմերը, գիտակցելով այդ սխալ քաղաքականությունը, պարտք համարեցի այսօրվանից թողնել քահանայի պաշտոնը եւ անցնել աշխատավորների շարքը հալալ քրտինքով աշխատելու եւ ապրելու: Երկարատեւ քահանայությանս ընթացքում տանջել է ինձ այն միտքը, որ իմ բոլոր ստոր արարքները ուղղված են եղել չքավոր մասսայի դեմ, ծծել են նրա վերջին արյունը: Հայտնելով այս մասին, կոչ եմ անում բոլոր հոգեւորականությանը թողնել այդ ստոր եւ կեղտոտ ճանապարհը եւ միանալ աշխատավոր ռանչպարի հետ, քրտինք թափելու եւ որպես մարդ, խորհրդային հաստատ կարգում նրա իրավունքները վայելելու: Նախկին քահանա Արիստակես Եգանյան, Դսեղ», Հայտարարություն, «Խորհրդային Հայաստան», Երեւան, 1924, դեկտեմբերի 5:

խոշոր նշանակություն է տալիս կառավարության հանդեպ էջմիածնի բռնած վերաբերմունքին»²⁵։

Խորեն արք. Մուրադբեկյանը 1928–1929 թթ. քանիցս դիմեց ՆԳԺԿ ղեկավարությանը՝ եկեղեցիները ծանր հարկերից ազատելու, բռնաճնշումները դադարեցնելու խնդրանքով²⁶։ 1935–1937 թթ., արդեն որպես Ամենայն հայոց կաթողիկոս, բազմիցս բողոքեց ՆԳԺԿ ղեկավարներին Վիրահայոց եկեղեցիների եւ հոգեւորականության ծանր վիճակի, եկեղեցիների բացման, քահանաների եւ հավատացյալների բանտից ազատման, հարկերի թեթեւացման-ազատման առթիվ²⁷։

ՀԽՍՀ-ում, ի տարբերություն Ռուսաստանի, «ընդհատակյա» եկեղեցական գործունեություն զանգվածային առումով (օրինակ՝ ծխական համայնքներ) չձեւավորվեց։ Մեր իրականության մեջ չենք ունեցել, այսպես կոչված, «ընդհատակյա եկեղեցիներ» կամ «ընդհատակյա հոգեւորականներ», որոնք գործեին գաղտնի, առանց պետական որեւէ գրանցման²⁸։ Մշտապես գոյություն ունեւ եկեղեցու օրինականացման խնդիր, մինչեւ անգամ՝ ՀԱԵ եւ հոգեւորականության վերջնական լուծարման կամ վերացման իրական սպառնալիք։ Ի տարբերություն Ռուս Ուղղափառ եկեղեցու պատրիարք Տիրխոնի, որը ձերբակալվեց ՄՊՔՎ ներքին բանտում²⁹, որին «նոր եկեղեցականները» իրենց ժողովում նույնիսկ դատել եւ հոգեւոր կոշումից զրկել էին, ՀԱԵ առաջնորդ ծերունազարդ Գեւորգ Ե. Հայրապետը չդատվեց (հետագայում՝ 1938 թ., ՊՔՎ մարմինների կազմակերպած Խորեն Ա. Մուրադբեկյանի սպանությունը այլ հարթությունում է դիտարկելի)։ ՀԽՍՀ տարածքի փոքրության, հոգեւորականների

²⁵ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), Երեւան, 1994, էջ 159–165։

²⁶ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), էջ 124–129, 154–158, 182–184, 189–192։ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 643, թ. 7–10, գ. 656, թ. 14, գ. 661, թ. 5, գ. 667, թ. 1–4, գ. 671, թ. 1։ Այս գրությունների եւ հանդիպումների մասին նա մանրամասն տեղեկացնում էր Գեւորգ Ե.-ին. տես Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), էջ 143–146, 193–196։ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 643, թ. 4–5, գ. 656, թ. 12–13։

²⁷ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), էջ 280–282, 293, 312–325։

²⁸ Տես А. Л. БЕГЛОВ, Церковное подполье в 1920–1940-х годов в СССР в контексте государственно-церковных отношений. Автореферат диссертации кандидата исторических наук. М., 2003։

²⁹ Մանրամասն տես Следственное дело Патриарха Тихона. Сборник документов по материалам ЦА ФСБ РФ. М., 2000. В. В. ЛОБАНОВ, Патриарх Тихон и советская власть (1917–1925). М., 2008. Д. В. САФОНОВ, Патриарх Тихон и советская власть. К проблеме государственно-церковных отношений в 1922–1925 гг. Автореферат диссертации кандидата исторических наук. М., 2004. Մինչ այժմ, դեռեւս չեն հրատարակվել ՀԱԵ-ի բռնադատված հոգեւորականների քննչական-դատական գործերը։

սակավություն, ՊՔՎ կողմից գյուղական ծխական համայնքների նկատմամբ ամբողջական ու համատարած հսկողության պայմաններում նման գործառույթ բացառվում էր, ընդհատակյա անօրինական ծխական համայնքների կամ չգրանցված հոգեւորականների գոյության դեպքեր հետազոտության ընթացքում մեր կողմից չեն հայտնաբերվել:

ՀԱՆ Խորհրդայնացման իրողության նկատմամբ ընդհանուր առմամբ չեզոքություն պահպանեց եւ, չնայած առկա համակարգային տարածայնություններին, պատրաստակամություն դրսեւորեց նոր իշխանությունների հետ ձեւավորելու կառուցողական հարաբերություններ՝ զիջումների դիմաց գաղափարա-գավառական քայլին գործունեության մեջ որոշ ազատություններ ստանալու ակնկալիքով: Հայաստանում, ի տարբերություն Ռուսաստանի, ակնհայտ հակաբոլշեւիկյան ընդվզումներ՝ այդ թվում նաեւ զինված, հոգեւորականության ու հավատացյալների կողմից տեղի չունեցան: Սակայն, չնայելով հոգեւորականության նման դիրքորոշմանը, կոմկուսը ՀԱՆ դիտարկեց որպէս դասակարգային թշնամի, անմիջապէս ձեռնարկեց հասարակական գիտակցությունից կրոնական գաղափարախոսությունն արմատախիլ անելուն միտված քայլեր՝ Եկեղեցին որպէս համակարգային կառույց քայքայելու նպատակադրումով:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ

ՀԽՍՀ պետանվտանգության մարմինները (անշուշտ ԽՍՀՄ ՄՊՔՎ հսկողությամբ եւ ցուցումներով) հակակրոնական պայքարում իրենց քաղաքական ազդեցության ներքո էին ձգտում պահել Սփյուռքի եկեղեցական գործիչներին: Նրանց «անհանգստացնում» էր Ամերիկայի թեմի առաջնորդ Տիրայր արքեպիսկոպոսի³⁰ ու Եւրոպայում հայրապետական նվիրակ Գրիգորիս եպս. Պալաքյանի³¹ դիրքորոշումը:

³⁰ Տիրայր արքեպիսկոպոսը 1926 թ. ապրիլի 1-ին Գեւորգ Ե.-ին հղած նամակով հերքեց Ա. Երզնկյանի կողմից իրեն հակահայաստանյան քաղաքականություն վարելու մեղադրանքը: Տէն Վալերազրեր Հայ Եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), էջ 78–80: ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3416, թթ. 3–5: Նաեւ տէն ԱնՅՈՐԴ, էջմիածինը, Տիրայր եպիսկոպոսը եւ Դաշնակցությունը, «Խորհրդային Հայաստան», 1925 սեպտեմբերի 30:

³¹ Գրիգորիս եպիսկոպոսը Գեւորգ Ե.-ին 1927 թ. հունիսի 16-ին հայտնեց իրեն անտեղի զրպարտելու եւ ՀԽՍՀ կառավարության հանդեպ վերաբերմունքի մասին: Տէն Վալերազրեր Հայ Եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), էջ 110–112:

Խորհրդային ղեկավար գործիչ Ա. Կարինյանը մեղադրում էր Գեւորգ Ե.-ին այն բանի համար, որ նրա բոլոր ներկայացուցիչներն արտասահմանում վարում են «հակասովետական պրոպագանդա եւ ղեկավարվում են բացառապես Հ. Յ. Դ. հրահանգներով»: Քննադատելով «ծպտյալ սեւազգեստ մաուզերականներին»՝ նա փորձում էր իբր համոզել, որ այդ մասին է վկայում ՀԱԵ սերտ կապը բուրժուազիայի եւ հակահեղափոխության հետ, որոնց քաղաքականության պատճառով «քանդվել է ողջ Տաճկահայաստանը»³²:

Սակայն պետանվտանգության համար առանձնակի «վտանգ» էր ներկայացնում Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արք. Մելիք-Թանգյանը: Խորհրդայնացման սկզբից իշխանությունները Գեւորգ Ե.-ից պահանջեցին կարգալուծ անել եւ առաջնորդի պաշտոնից հեռացնել նրան: Այդ առթիվ հայրապետական դիվանը 1921 թ. հունիսի 27-ին նրան տեղեկացրեց. «Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի պատասխանատու ներկայացուցիչները թէ՛ անցեալում ու թէ՛ ներկայումս դէպի հայ քաղաքական կուսակցությունները եղել են միշտ լույս, անկախ վերջինիս քաղաքական այս կամ այն կուսակցութեան պատկանելուց. միշտ աշխատելով պաշտպանել ու բարձր դասել հանուր ազգի շահն ու օգուտը ու քարոզելով բոլորին խաղաղութիւն ու եղբայրութիւն: Այս ոգին են ունեցել այն բոլոր հրահանգներն ու պատերները, որ ազգիս Վեհափառ Հայրապետը միշտ ներշնչել եւ տւել է իր հոգեւոր ներկայացուցիչներին: Այս տեսակէտից Ս. Էջմիածնի հոգեւոր ներկայացուցիչները, յատկապէս առաջնորդները, առաւել եւս հեռատես ու զգոյշ պէտք է գտնեն այժմեան հանգամանքներում, նպաստելով ընդհանուր խաղաղութեան եւ կրքերի հանդարտման, քարոզելով հայ բազմատանջ ժողովրդին հեռու մնալ եղբայրասպան աղէտաբեր ընթացքից»³³:

Էջմիածնի կոմիսար Գ. Վարդանյանը, 1922 թ. փետրվարի 14-ին Գեւորգ Ե.-ին մատնացույց անելով Ներսես արքեպիսկոպոսի քաղաքական սխալները («զարմանալի յանդգնութեամբ միջամուխ է եղել ու շարունակում է լինել քաղաքական գործերի մէջ, ամեն կերպ նիւթապէս թէ մթերքներով օժանդակել է նժդեհին ու իր բանդաներին, որոնք ուրեմն

³² Լինջ, Հայ հոգեւորականությունն արտասահմանում, «Խորհրդային Հայաստան», Երեւան, 1925 սեպտեմբերի 11:

³³ Գէորգ Ե. Սուրենեանց կաթողիկոս Ամենայն Հայոց, Երեւան, 2005, էջ 540–541: ՀԱԱ, ֆ. 57, ց. 36, գ. 266, թ. 1:

հնարաւորութիւն ստացան աւելի երկար դիմագրելու»), հուլյս էր տածում, որ կաթողիկոսը «բոլոր պարտ ու պատշաճ միջոցները ձեռք կառնեն անմիջապէս մի անգամ ընդմիշտ դադարեցնել տալու նրա շափազանց վտանգաւոր խաղերը քաղաքական մթնոլորտում, փութանակի կամ հետ կոչել էջմիածին եւ կամ հակառակ պարագային փոխադրել նրան մի ուրիշ քաղաքականապէս աւելի անվտանգ ու չէզոք վայր»³⁴։ Այս եւ «Խորհրդային Հայաստան» թերթի 1922 թ. ապրիլի 6-ի հոդվածի մասին դիվանը տեղեկացնում է Ներսէս արքեպիսկոպոսին՝ նրանից բացատրություն ստանալու համար³⁵։

Ատրպատականի թեմական պատգամավորական ժողովի ատենապետը 1922 թ. մայիսի 2-ին³⁶ եւ Ներսէս արքեպիսկոպոսը մայիսի 3-ին³⁷ Գեւորգ Ե.-ին հղած նամակներում հիմնավորապէս հերքում են բոլոր մեղադրանքները։ Այս ամենից հետո դիվանը, ՀՍԽՀ Արտաքին գործերի ժողովում Ա. Մուսվանին 1922 թ. մայիսի 19-ին ուղարկելով հարցի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը, նշում է. «Նորին Սրբազնութիւնը հաւատում է Ներսէս արքեպիսկոպոսի անկեղծութեանը եւ ազնուութեանը։ Վեհափառ Հայրապետի կողմից Ներսէս արքեպիսկոպոսի դէմ յայտնած բողոքը փակուած է համարում»³⁸։

ՀԽՍՀ Արտակարգ հանձնաժողովի 1923 թ. օգոստոսի 10-ի հուլիս գաղտնի զեկուցագրում էլ հատուկ քննադատվում էր Պարսկաստանում Հ. Յ. Դ. հետ գործակցող Ներսէս արքեպիսկոպոսի հակահեղափոխական գործունեությունը³⁹։

Նշյալ հարցերի շուրջ Խորեն արք. Մուրադբեկյանը 1927 թ. հուլիսի 18-ին հանդիպում է ՊԲՎ նախագահ Ս. Մելիք-Հովսեփյանին, ներկայացնում ՀԱԵ դիրքորոշումը։ Մելիք-Հովսեփյանը մասնավորապէս ընդգծում է, որ էջմիածինը եւ էջմիածնի ներկայացուցիչները չպետք է զբաղվեն քաղաքական գործերով, մեղադրանք հնչեցնում, որ էջմիածինն այդպես էլ չցանկացավ ընդառաջ գնալ կառավարության ցանկությանը եւ չհեռացրեց Ներսէս արքեպիսկոպոսին, որ էջմիածինը պատճառ դարձավ

³⁴ Անդ, էջ 544–545։ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 266, թ. 3–4։

³⁵ Անդ, էջ 545։ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 266, թ. 5։

³⁶ Անդ, էջ 546։ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 266, թ. 6–7։

³⁷ Անդ, էջ 547–548։ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 266, թ. 8–9։

³⁸ Անդ, էջ 548։ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 266, թ. 10։

³⁹ ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԵԱՏՅԱՆՅ (Տավուշեցի), էջ 201–207։ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թթ. 32–35։

փոխադարձ հարաբերությունների վատթարացմանը, քանզի «իրենց հակառակորդ դաշնակցականների հետ է»⁴⁰:

Վերջում մեջբերենք խորհրդային բարձրաստիճան հետախույզ հայազգի Գ. Աղաբեկովի հուշերից դիպուկ մի հատված. «խորհրդային կառավարությունը եւ ՊԲՎ առանձնահատուկ ատելություն էր ցուցաբերում Թավրիզում Ներսես արքեպիսկոպոսի նկատմամբ, որ օգնում էր դաշնակներին: Արքեպիսկոպոսը վտանգավոր էր նաեւ նրանով, որ օգտվելով հայ բնակչության եւ հոգեւորականության շրջանում մեծ հեղինակությամբ, կարող էր ամենայն հայոց կաթողիկոսի մահից հետո ընտրվել նրա տեղը: Այդ դեպքում, կաթողիկոսի նստավայրը խորհրդային Հայաստանից կտեղափոխվեր այլ երկիր, եւ խորհրդային կառավարությունը կգրկվեր հայկական եկեղեցու, նրա միջոցով եւ հայ ժողովրդի նկատմամբ ազդեցությունից: Այդ պատճառների արդյունքում որոշվեց ինչ էլ որ լինի հեռացնել Ներսես արքեպիսկոպոսին եւ նրան փոխարինել խորհրդային իշխանության նկատմամբ լոյալ մարդով»⁴¹:

Խորհրդային մամուլը լեցուն է Ներսես արքեպիսկոպոսի անձը եւ գործունեությունը խարազանող նյութերով, որոնք հրահանգում էր կոմկուսի կենտկոմը եւ պարտադիր կարգով խրախուսվում պետանվտանգության մարմինների կողմից: ՀԽՍՀ պաշտոնական խոսսափողը նրան համարում էր «չափից դուրս լրբացած կղերական», որը հայտնի է որպես «Նժդեհին զենքեր մատակարարող եւ դաշնակցական մաուզերականներին ամեն կերպ խրախուսող, Թավրիզում դաշնակցական հակահեղափոխությունը սնվում եւ կազմակերպվում է բացառապես նրա ջանքերով»⁴²:

Հակակեղեցական մոլագարությամբ աչքի ընկած Արշարունին «մարդասպան, ավազակ, ավանտյուրիստ, աֆերիստ, ապստամբ եկեղեցու բարձրագույն իշխանության, խռովարար, երկպառակտիչ» Ներսես արքեպիսկոպոսին համարում էր «Ատրպատականի դժբախտ հայության վզին դամոկլյան սրի նման նստած դաշնակցության վեղարավոր շեֆ ու ինկվիզիտոր», հայաբնակ գավառներն «արյան բաղնիքների վերածող, բարդուղիմեոսյան գիշերներ ստեղծող եւ այդ բուրաստան գավառներն

⁴⁰ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), էջ 114–116:

⁴¹ Տես Գ. Ս. АГАБЕКОВ, ГПУ (записки чекиста), էջ 186:

⁴² Հոգեւորականությունը եւ խորհրդային Հանրապետությունը, «խորհրդային Հայաստան», 1923 օգոստոսի 19:

անմարդաբնակ մոխրակույտ դարձնող»⁴³։ Մեկ այլ հեղինակ արդեն ներկայանում էր սպառնալից հոխորտանքներով. «Եթե էջմիածնի ձեռքերը կարճ են եւ անզոր զսպելու Թավրիզի խալիֆային, սակայն Խորհրդային Հայաստանի կառավարությունը աչքաբաց հետեւում է Թավրիզյան այդ խրտվիլակի եւ նրա համհարզների գործերին։ Եւ եթե նրանք հանդգնեն իրենց արյունոտ թաթերը ուղղելու մեր աշխատավորության հանգիստը, կարմիր սրերի մի հարվածով մենք կկտրենք հակահեղափոխության այդ ճարպոտ թաթերը»⁴⁴։

Ամփոփելով հիշատակենք մեկ կարեւոր հանգամանք։ Ներսես արք., Մելիք-Թանգյանը 1927 թ. մարտի 21-ին Գեւորգ Ե.-ին տեղեկացնում էր, որ ինքը եւ Ատրպատականի թեմական պատգամավորական ժողովը դատապարտում են «ազատ եկեղեցական» պառակտումը եւ պաշտպանում ՀԱԵ միասնությունը եւ Վեհափառին⁴⁵։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական Եկեղեցուն հոգեւոր, քաղաքական, ընկերային-տնտեսական եւ կազմակերպչական հիմքերից զրկելու նպատակով իշխանությունները եւ առաջին հերթին ՊԲՎ մարմինները ոչ մի միջոցի առջեւ չէին ընկրկում՝ եկեղեցական գույքի բռնագրավումից, ներեկեղեցական պառակտումից մինչեւ հոգեւորականության նկատմամբ համատարած ֆիզիկական-դատավարական ահաբեկչություն։ Այդ գործընթացի իրական գործնական համակարգողները պետանվտանգության մարմիններն էին։

Հայ Առաքելական Եկեղեցուն միանգամայն անհիմն կերպով պարբերաբար մեղադրելով պետությունից Եկեղեցու անջատման մասին որոշմանն ընդդիմանալու մեջ՝ իշխանությունները՝ ի դեմս պետանվտանգության եւ դատա-իրավապահ մարմինների, մշտապես կոպիտ խախտում էին այդ որոշումը՝ ապօրինի ու բռնի ճանապարհներով խառնվելով ՀԱԵ ներքին կյանքին եւ ձգտելով գաղափարաքաղաքական հաշվեհարդար

⁴³ ԱՐՇԱՐՈՒՆԻ, Թավրիզի առաջնորդ Մելիք-Թանգյանի քաջագործություններից, «Խորհրդային Հայաստան», 1925 հոկտեմբերի 15, 18, 25, 1926 հունվարի 6։

⁴⁴ Ա. ՄԱՆՍՈՒՐՅԱՆ, Վեղարավոր դաշնակցականը, «Խորհրդային Հայաստան», 1922, ապրիլ 6։

⁴⁵ Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), էջ 102–103։

տեսնել: Այդ նպատակով օգտվելով տեղեկատվական ու քարոզչական գործիքակազմի մենաշնորհ դիրքից՝ իշխանությունները հանրային ընկալման մեջ ըստ ամենայնի ձեւավորում ու խորացնում էին «եկեղեցական հակահեղափոխականություն» մասին կեղծ մտայնությունը: Մյուս կողմից, փոխզիջման վարկածը, որին իբր թե հակված էին իշխանությունները, պարզապես առասպելաբանություն էր, քանզի գաղափարաքաղաքական հակառակորդ եկեղեցու հետ կոմկուսը երբեք ոչ մի փոխզիջման չէր գնա:

Հետագարձ հայացք ձգելով 1920–1930-ական թվականների հակակրոնական պայքարի ժամանակահատվածին՝ հարկավոր է փաստագրել, որ շնայած բռնի քաղաքական ու վարչահրամայական միջոցներին, եկեղեցական գույքի բռնագրավումներին, եկեղեցիների համատարած քանդմանն ու փակմանը, հոգեւորականների հանդեպ ֆիզիկական բռնաճնշումներին, քարոզչա-տեղեկատվական լայնածավալ գործունեությունը, պետական անվտանգության մարմինների ամենակուլ եւ գորավոր արշավանքին՝ այդպես էլ կոմկուսը պետական տարատեսակ գործիքակազմով (առաջին հերթին եւ գլխավորապես պետանվտանգության մարմինների) ի գորու չեղավ վերջնականապես ոչնչացնելու ՀԱԵ ու բնակչության լայն խավերի շրջանում քաղաքականապես արմատավորելու անաստվածությունը կամ աստվածամերժումը:

Ավելին՝ Խորհրդային Հայաստանում միայն ՀԱԵ էր, որ անգամ պետանվտանգության մարմինների հետապնդման պայմաններում շարունակեց մնալ միակ մեծ եւ օրինական կառույցը, որի գաղափարախոսությունը քաղաքականապես չէր համընկնում խորհրդային կոմունիստական իշխող գաղափարախոսության հետ:

РЕЗЮМЕ


В статье рассмотрены идеология и методы воздействия органов государственной безопасности в антирелигиозной борьбе в Советской Армении. Представлены административно-политическая борьба, практическая роль органов государственной безопасности Армянской ССР, позиция Армянской Апостольской Церкви и политическая позиция архиепископа Нерсеса Мелик-Танкя-

на. Особо отмечено, что несмотря на репрессии со стороны органов государственной безопасности, Армянская Апостольская Церковь сопротивлялась и оставалась единственной легальной и многолюдной некоммунистической организацией.

SUMMARY

The article presents the ideology of the state security bodies in the anti-religious struggle in Soviet Armenia, the administrative and political struggle, the practical role of the state security bodies of the Armenian SSR, the position of the Armenian Apostolic Church, the political factor of Archbishop Nerses Melik-Tankian.

Despite the repression by the state security bodies, the Armenian Apostolic Church resisted and remained the only popular, legal, non-communist organization.





ՅՈՒՆԱԿԱՆ ԹՈՒԻՑԻԿՆԵՐ

Յեղասպանությունների եւ ընդհանրապես մարդկության դեմ ուղղած հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կարենորագույն ֆայլերից են դրանց ճանաչումն ու դատապարտումը: Իսկ որպես այս ասպարեզի առաջնային գործողություն, թերեւս, պետք է դիտել ցեղասպանությունների վերաբերյալ տեղեկատվության տարածումը, որի շնորհիվ այն հասու կդառնա իրենց ֆաղափակիրք համարող եւ իրականում իբրեւ այդպիսին հանդես եկողներին: Այստեղ վստահաբար պետք է կիրառվեն բոլոր հասանելի միջոցները՝ սկսյալ համացանցից, շարժանկարներից մինչեւ բացիկ կամ թուցիկ: Այս վերջինը հատկապես շատ է կիրառվում Հունաստանում: Զբոսաշրջիկների անհատնում հոսքեր ընդունող երկրում սահմանից իսկ մուտք գործողին տրամադրում են թուցիկներ եւ բացիկներ: Վերջիններիս մի երեսին լինում են, ասեմք, համաշխարհային ճանաչում ունեցող հուշարձանների նկարներ, իսկ մյուսին կարն եւ հատու տողեր ցեղասպանության մասին: Ստորեւ թարգամանաբար ներկայացնում ենք հունաստանյան թուցիկի մի նմուշ, ուր հիշատակվում է նաեւ Հայոց Ցեղասպանությունը:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հատված Մերձավոր Արեւելքում ԱՄՆ գլխավոր հյուպատոս (1926 թ.)
Ջորջ Հորթոնի The Blight of Asia «Ասիական խորշակ» գրքից:

«1916 թվականի հունվարին սկսվեց հույների տեղահանությունը Սեւ ծովյա շրջաններից: Բյուրավոր հույներն անցնում էին Մարզվան¹ ֆաղափ մերձակայքով՝ եռօրյա ճանապարհի մեծ մասը ֆայլելով մերթ սառնամած ձյան, մերթ ցեխի ու ձնհալի միջով: Հազարավորները հոգնատանջ ընկան մահվան ճամփեին, ֆշերը՝ հիսուն, հարյուր, հինգ հարյուր հոգանոց խմբերով թուրք ժանդարմների նշանառության ներքո հասան Մարզվան: Հաջորդ առավոտյան այս թշվառ փախստականներին դարձյալ ճանապարհ հանեցին, եւ այս խոշտանգման արդյունքը պակաս գործուն չէր, քան հետեւողական սպանողը, որին մինչ այդ ենթարկվել էին հայերը» (էջ 194):

Հատված Թուրքիայում ԱՄՆ դեսպան (1913–1916 թթ.) Հենրի Մորգենթաուի Պատմությունից, (1918 թ.)

«Հայերը Թուրքիայում միակ հպատակ ժողովուրդը չեն, որ տուժել են Թուրքիան բացառապես թուրքերի երկիր դարձնելու այս ֆաղափականությունից: Այն պատմությունը, որը պատմել եմ հայերի մասին, կարող եմ որոշ փոփոխություններով ներկայացնել նաեւ հույների ու ասորիների կապակցությամբ: Իրապես հույներն էին այս ազգայնական գաղափարի առաջին զոհերը»:

Հարրի Ջ. Փսոմիադեսի «The Journal of Modern Hellenism» (Արդի հելլենիզմ) ամսագիրը ներկայացնում է մի քանի պատմություն: Դրանցից երկուսը՝ հրապարակված 1922 թվականի մայիսին, ներկայացված են ստորեւ (19–20 համարներ, էջ 139):

ՕՄԱ (Օգնություն Մերձավոր Արեւելքին) հիմնադրամի աշխատակից դոկտոր Ուորդը վրդովեցրեց քեմալականներին՝ զեկուցելով քրիստոնյաների դեմ կատարված վայրագությունների մասին.

¹ Փոքր Հայոց Սեբաստիա նահանգի Ամասիա գավառի այս քաղաքը օտար հորջորջմամբ կոչվել է նաեւ Թեոդոսուպոլիս, Մարսովան, Մարսվան, Մերզիփուն (Մերզիֆուն), Մեզիֆուն, Մերսիվուն՝ գրեթե երեք չկորցնելով հայկական բառահիմքն ու արմատները:

«...եւ հարյուրավոր հույն տարագիրների մահը սովից, ծարավից, ցրտից, հոգնածությունից եւ անմարդկային վերաբերմունքից»:

Իսկ ՕՄՄ աշխատակցուհի միսս Վուդն իր օրագրում գրել է այն, ինչ տեսել է դեպի ծովափ իր երկշաբաթյա ճամփորդության ընթացքում.

«...տեղահանվածների խմբեր, հիմնականում կանայք եւ երեխաներ, բոլորը սովահար, եւ մեծ թվով դիակներ ճանապարհի երկայնքով... իսկ մնացած ողջ բնակչությունն արտաքինում էր առանց սննդի եւ հագուստի... Պայմանները Մալաթիայում, որտեղ օրական բառասուն կամ հիսուն տեղահանվածներ էին մահանում, շատ ավելի վատն էին, քան հարբերդում»:

Հետեւյալ հատվածը վերցված է Գ. Վ. Ռենդելի պաշտոնական հուշագրից: Գ.Վ. Ռենդելը թուրքական կոտորածների եւ փոքրամասնությունների հալածանքների հարցով ԱԳՆ աշխատակիցն էր Զինադադարից հետո (մայիսի 20, 1922 թ.):

«Մարդիկ շրջանում մոտ 30.000 քրիստոնյաների կրած ծանր հալածանքների մասին հաղորդում է նաեւ սրբ. Փ. Քոֆսը: Բայց ամենասարսափելի վայրագություններն անկասկած տեղի են ունեցել Պոնտոսի շրջանում՝ ծովափնյա քաղաքների հույն բնակչության նկատմամբ»:

«Օսմանյան կայսրության հույների ցեղասպանության համառոտ պատմությունը» հրատարակել են Փոքր Ասիայի եւ Պոնտոսի հունական հետազոտական կենտրոնը (ՓԱՊՀՀ), (www.hellenicresearchcenter.org) եւ Զիկագոյի Պոնտական հունական ընկերությունը (www.pontiangreeks.org). © 2013 Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Փոքր Ասիան, որը նաեւ կոչվում է Անատոլիա (հունարենից՝ «արեւածագ»), աշխարհագրական եւ պատմական եզրույթ է, որով անվանում են Ասիայի ամենաարեւմտյան մասը: Ք.ա. Թ. դարից մինչեւ Ք.հ. ԺԵ. դարը ընկած շրջանում Փոքր Ասիան մեծ դեր է խաղացել արեւմտյան քաղաքակրթության զարգացման գործում: 1923 թվականից Փոքր Ասիան կազմում է Թուրքիայի Հանրապետության տարածքի մեծ մասը:


Փոքր Ասիայում հունական բնակավայրեր եղել են դեռեւս Ք.ա. ԺԱ. դարում, երբ հույները սկսեցին գաղթեցին մայրցամաքային Հունաստանից: Նրանք հիմնեցին այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են Մելիտոսը, Եփեսոսը, Զմյուռնիան, Սինոպը, Տրապիզոնը եւ Բյուզանդիոնը (հետագայում դարձավ Բյուզանդական կայսրության մայրաքաղաքը՝ վերանվանվելով Կոստանդնուպոլիս): Այս քաղաքներում մշակութային եւ տնտեսական կյանքը բուռն ծաղկում էր ապրում: Մելիտոսը նախասով-

րատյան արեւմտյան փրկասփայլության եւ անտիկ աշխարհի առաջին մեծ մտածողներ Թալեսի, Անաքսիմանդրի եւ Անաքսիմենեսի ծննդավայրն է: Լինելով հունական աշխարհի գիտական ու գործնական մայրաքաղաքը Աթենքից դեռ մեկ դար առաջ՝ Մելիտոսը իրավամբ համարվում է ժամանակակից աշխարհի բնօրրանը:

Ք. ա. Ձ. դարից Փոքր Ասիան հաջորդաբար նվաճվել եւ կառավարվել է պարսիկների, Ալեքսանդր Մակեդոնացու եւ հռոմեացիների կողմից: Ք. հ. Դ դարում Փոքր Ասիան մաս կազմեց Արեւելյան Հռոմեական կայսրության, որը հետագայում կոչվեց Բյուզանդական կայսրություն, իսկ հունարենը դարձավ պաշտոնական լեզու: Հունարենը լայն տարածում եւ մեծ ազդեցություն ուներ կայսրության ողջ տարածքում: Սկսած Ք. հ. Դ. դարից մինչեւ Կոստանդնուպոլսի անկումը (1453 թվական), կայսրությունը կարեւոր դերակատարություն է ունեցել քրիստոնեության տարածման գործում: Կայսրությունը անառիկ է պահել Եւրոպան՝ դիմագրավելով Արեւելքի կողմից մայրցամաք ներխուժելու մահմեդականների մի շարք փորձերին:

Օսմանյան տիրապետության հաջորդ երկու հարյուրամյակների ընթացքում՝ ԺԶ. եւ ԺԷ. դարերում, Փոքր Ասիայի հունական համայնքները դիմադրում էին մահմեդականացման նպատակով իրականացվող մշտական ճնշումներին: Շատերին հաջողվեց պահպանել իրենց կրոնը, ազգային ավանդույթները եւ մշակույթը: Նույն շրջանում, սակայն, հազարավոր հույներ, որոնց թվում՝ 250 000 պոնտացի հույներ, ստիպված եղան հավատափոխ լինել: Բազմահազար հույներ, հատկապես ԺԹ. դարում ռուս-թուրքական բազմաթիվ պատերազմներից հետո, փախստական եղան քրիստոնյա Ռուսաստան՝ խուսափելով թուրքական հալածանքներից:

ԺԹ. դարում ներմուծված օսմանյան նոր օրենքներով փորձ էր արվում կայսրությունն արդիականացնել եւ համաշխարհային տնտեսության միասնական դաշտ բերել: Օսմանահպատակների, այդ թվում՝ քրիստոնյա փոքրամասնությունների կյանքը ժամանակավորապես բարելավվել էր: Ցավոք դրա արդյունքում քրիստոնեական համայնքների սոցիալական, կրոնական եւ տնտեսական վերածնունդը ավարտվեց Ի. դարասկզբին:



Նկար 1. Հայերի և հույների համակենտրոնացման ճամբարները Թուրքիայում մինչև 1910 թվականը (աղբյուր՝ Պատմական ուսումնասիրությունների ինստիտուտ, Աթենք, Հունաստան)

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՅՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1908 թվականին երիտթուրքերի բարեփոխիչ շարժումն ապստամբություն բարձրացրեց սուլթանի դեմ եւ վերականգնեց 1876 թվականի սահմանադրությունը: Բալկանյան երկու իրարահաջորդ պատերազմներում (1912—1913 թթ.) Օսմանյան կայսրությունը պարտություն կրեց, ինչի արդյունքում կորցրեց իր տարածքի գրեթե ողջ եւրոպական մասը: «Միություն եւ առաջադիմությունը» (հետայսու՝ ՄԱ)՝ երիտթուրքերի ծայրահեղ ազգայնական կուսակցությունը, իր վերահսկողության տակ վերցրեց կառավարությունը: ՄԱ-ի նպատակն էր հասնել բազմազգ կայսրության «թուրքացմանը»՝ ոչնչացնելով քրիստոնյա փոքրամասնություններին, այդ թվում՝ հայերին, ասորիներին եւ հույներին:

1914 թվականի գարնանը, մինչեւ Առաջին աշխարհամարտի սկիզբը, ՄԱ-ն սկսեց ահաբեկչության արշավը՝ հարյուր հազարավոր հույների արտաքսելով Արեւելյան Թրակիայից եւ Արեւմտյան Փոքր Ասիայից: Ներքին անվտանգության եւ ազգային միասնության պատրվակով կազմակերպվող այս տեղահանությունները մահմեդական թուրքերից կազմված միատարր ազգային պետություն ստեղծելուն միտված ծրագրի մի մասն էին: Ծրագրով նախատեսված էր քրիստոնյա փոքրամասնությունների զտումը: Բացի այդ, ՄԱ-ն համընդհանուր զորահավաքի կոչ արեց: Քրիստոնյա տղամարդկանց մեծ մասն ուղարկվեց ծառայության աշխատանքային գումարտակներ՝ Անատոլիայի ծայրամասերում ռազմական նշանակության ճանապարհներ կառուցելու:

Երկու ամսվա ընթացքում այս «մահվան գումարտակներում» ծառայողների գերակշիռ մասը հյուծող աշխատանքից, սովից ու եղանակային դաժան պայմաններից մահացավ լեռներում ու կիրճերում: Ողջ մնացածներից ոմանք փախուստի դիմեցին եւ միացան լեռներում թաքնվող հույներին, որոնք զենք էին վերցրել՝ իրենց եւ իրենց ընտանիքները պաշտպանելու համար:


Հույների նկատմամբ վայրագություններն ու նրանց տեղահանությունները վերսկսվեցին 1916 թվականին: Տղամարդկանց զգալի մասին աշխատանքային գումարտակներում ծառայելու ժամանակ ոչնչացնելուց հետո ՄԱ-ն, իսկ հետո նաեւ Մուստաֆա Քեմալի ազգայնականները շարունակեցին հույն բնակչության ցեղասպանությունը: Տեղահանու-

Թյունների եւ վայրագությունների եւս մեկ ալիք սկսվեց 1919 թվականին: Դրանք զանգվածային բնույթ էին կրում հատկապես Պոնտոսում: Հազարավոր հույն կանայք, երեխաներ եւ տարեցներ մահացան դեպի Անատոլիայի ներքին շրջաններ, Քուրդիստան եւ նույնիսկ հեռավոր Սիրիա տանող ճանապարհներին: Նույն Պոնտոսի շրջանում թուրքերը կրակի ճարակ դարձրին հարյուրավոր գյուղեր, սպանեցին հազարավոր հույների: 1921 թվականի սեպտեմբերին ահաբեկչության եւ բնաջնջման այս արշավը հանգեցրեց բազմաթիվ նշանավոր պոետացի հույների ձերբակալության եւ մահապատժի՝ դավաճանության շինծու մեղադրանքներով:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, հաղթանակած դաշնակիցների կողմից տրված մանդատի արդյունքում, 1919 թվականի մայիսին հունական զորքերն իջան Զմյուռնիա՝ պաշտպանելու հույն փոքրամասնությանը թուրքական վայրագություններից: 1922 թվականի օգոստոսին ռազմաքաղաքական ոչ բարենպաստ պայմանները պատճառ դարձան հունական բանակի ջախջախիչ պարտության: Առաջ խաղացող թուրքական ազգայնական բանակը եւ ռազմականացված ուժերը ստիպեցին հարյուր հազարավոր հույների լքել հայրենի քաղաքներն ու գյուղերը եւ ներքին շրջաններից փախչել դեպի Զմյուռնիա կամ արեւմտյան Փոքր Ասիայի այլ նավահանգիստներ: Թուրքերի վայրագությունները փախչող հույների եւ Զմյուռնիայի քրիստոնյա բնակչության հանդեպ կտրուկ աճեցին, երբ թուրքական զորքերը հասան Զմյուռնիա: Մեծ հրդեհին զոհ դարձան հազարավոր հույն եւ հայ փախստականներ, որոնք քաղաքի նավամատուցում սպասում էին, որպեսզի նավ բարձրանան՝ մեկնելու Հունաստան կամ այլ երկրներ: Պատմաբանների մեծ մասը համակարծիք է, որ հրդեհը պատահական չէր. քաղաքի հունական եւ հայկական թաղամասերը հրդեհելով՝ թուրքական բանակը ցանկանում էր ստիպել քրիստոնյաներին լքել բնակավայրը:

Փաստաթղթային ապացույցներ առ այն, որ թուրք պաշտոնյաները վայրագություններ կատարելու հրամաններ են տվել: Թարգմանված. ընթեռնելի է մասամբ (նկ. 2).

«Կենտրոնական բրիգադի հրամանատարին. «Ձեր ուշադրությունն եմ հրավիրում հետեւյալի վրա. «Պատվագուրկ հույների համար մահից բացի ոչինչ չկա: Հենց որ ձեզ ամենափոքր նշանը տրվի, անմիջապես ոչնչացրե՛ք ձեր շուրջը գտնվող ամեն բան: Ինչ վերաբերում է կանանց, մի՛ կանգնե՛ք ոչնչի առաջ: Երբ վրեժխնդրության պահը գա, հաշվի մի՛ առե՛ք ո՛չ պատիվ, ո՛չ բարեկամություն»: «Բրիգադի հրամանատար Մեհմեթ Ազի»:



Նկար 2. Փաստաթղթային ապացույց էդվարդ Հեյլ Բիրշտադտի «Մեծ դավաճանություն» աշխատությունից

Մինչև 1923 թվականը, Առաջին աշխարհամարտի սկզբում Փոքր Ասիայում ապրող շուրջ 2 միլիոն հույներից ավելի քան 700 000-ը բնաջնջվել էր, իսկ 1,1 միլիոնից ավելի հույներ զոհ են գնացել Հունաստանի եւ Թուրքիայի միջև բնակչության բռնի փոխանակումից առաջ եւ այդ գործողության ընթացքում: «Թուրքիան թուրքերի համար» միտումնավոր եւ համակարգված քաղաքականության արդյունքում շուրջ 2,5 միլիոն հայեր, ասորիներ եւ հույներ սպանվեցին կամ դարձան «Սպիտակ մահվան» զոհ: Վերջին եզրը օգտագործվում էր սննդամթերքի պակասության, հիվանդությունների, տեղահանությունների եւ մահվան երթերի ճանապարհներին բնության տարերքների ներգործության պատճառով վրա հասած մահերը նկարագրելիս: Թուրքիայի նախկին եւ ներկա կառավարությունները կտրականապես հերքում են հույների, հայերի եւ ասորիների ցեղասպանությունը: Նրանք պնդում են, որ Թուրքիայի քրիստոնյա համայնքների անդամների սպանություններն ու տեղահանությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցած անկարգությունների հետեւանք են:

2007 թվականի դեկտեմբերին Ցեղասպանագետների միջազգային ընկերակցությունը, որն առաջատար ցեղասպանագետների համաշխարհային կազմակերպություն է, պաշտոնապես ճանաչեց Օսմանյան կայսրության հույների ցեղասպանությունը:

Խոսք թարգմանչի

Ալեքսանդր Սերգեյի Ռիբինը ծնվել է 1983 թվականին ՌԴ Կալինինի շրջանի Կիմրի քաղաքում: Ավարտել է Տվերի համալսարանի բանասիրական բաժինը: Ազատ լրագրող է: Առաջին հոդվածը հրապարակել է «День и ночь» («Օր ու գիշեր») ամսագրում 2008 թվականին: Նույն թվականին ընդգրկվել է «Реформат», Իվան Բունինի եւ Վիկտոր Աստաֆեւի մրցանակաբաշխությունների ընդլայնված ցանկում: 2012 թվականին ընդգրկվել է «Дебют» մրցանակի ընդլայնված ցանկում՝ «Современный кочевник» (Ժամանակակից ֆոշվոր) պատմվածքով: Լուգանսկի ժողովրդական Հանրապետություն մեկնելուց առաջ ապրել է Վլադիվոստոկում: Տպագրվել է տարբեր գրական պարբերականներում:

Ներկայացվող հոդվածը վերցրել ենք «Нева» հանդեսի 2018 թվականի առաջին համարից¹:

Թարգմ.՝

ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

¹ АЛЕКСАНДР РЫБИН, Ниневийские христиане, «Нева», №1, 2018, էջ 121—157:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԻԲԻՆ

ՆԻՆՎԵԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ

ՄԱՍ 1. ՊԱՏԵՐԱԶՄ

2017-ի մարտին Մոսկվա քաղաք (երբ քաղաքը «Իսլամական պետություն» գրոհայիններից ազատագրելու լայնածավալ գործողություն էր իրականացվում) ուղեւորությունից ստացած ամենաուժեղ տպավորություններս մահապարտների պայթյուններից, տների բալկոնում ընկած դիակներից, մահացող քաղաքից եւ նույնիսկ տասնյակ հազարավոր փախստականներից չէին: Ամենից շատ հիշողությանս մեջ տպավորվեց քրիստոնեական քաղաք Բահդիդան՝ այդ ուրվական քաղաքը: Ես երկու անգամ եղա այնտեղ: Երկրորդ անգամ՝ մայրամուտին. արեւն արդեն մայր էր մտել, եւ նրա դեղնակապտագույն լույսը մարում էր: Ժամանակն էր միացնել տների եւ շենքերի լուսավորությունը: Իրաքյան բանակի անցակետերում լույսերն արդեն վառվում էին: Բահդիդան թաղված էր մեռյալ խավարում: Պարզորոշ ուրվագծվում էին շենքերը, տները, եկեղեցիները («ռուսական կոնստրուկտիվիզմի» ճարտարապետական՝ ժամանակակից ոճով), եւ ոչ մի վառվող լույս: Հարյուրավոր տներ, տասնյակ փողոցներ, բոլորովին դատարկ ժամանակակից քաղաք: Լուսավորված էին միայն Իրաքի բանակի եւ դաշնային ոստիկանության մի քանի անցակետեր քաղաքի հյուսիսային մասում: Բահդիդան գտնվում է Մոսկվից 15 կմ հարավ-արեւելք: 2016-ի հոկտեմբերին, երբ սկսվեց Մոսկվի ազատագրման գործողությունը, այդ քաղաքն առաջիններից էր հետ գրավվել գրոհայիններից: Սակայն նույնիսկ հինգ ամիս անց քրիստոնյաները դեռ վախենում են վերադառնալ իրենց տները: Բահդիդայից 20 կիլոմետր հյուսիս գտնվում է Բարտելլա քաղաքը, դրանից եւս 10 կիլոմետր հյուսիս՝ Բաշիկա քաղաքը: Սրանք բոլորը քրիստոնեական վայրեր են: Դրանք էլ Բահդիդայի նման ուրվականներ են: Իրաքի քրիստոնյաները շարունակում են ապրել փախստականների ճամբարներում, ոմանք տեղա-

փոխվել են Իրաքյան Քուրդիստանի քաղաքներ: Զգալի մասն ընդմիշտ մեկնել է Եւրոպա եւ Ավստրալիա (Ավստրալիայի կառավարությունն առանձնահատուկ եռանդով օգնում է Իրաքի քրիստոնյա փախստականներին): 2003-ի ամերիկյան զավթման պատճառով սկիզբ առած քրիստոնյաների արտագաղթը Իրաքից շարունակվում է:

Քրիստոնյաները եւ սուննիները

Քաղաքական կաթոլիկ եկեղեցու հետեւորդ Աբրահամը եղբորորդու հետ իր մեքենայով Բարտեղայից վերադառնում է Այնքավա քաղաքը: Իրաքի բանակի եւ քրդական փեշմարգայի² անցակետերում, ցույց տալով անձը հաստատող փաստաթուղթ, նա պարտադիր ավելացնում է՝ «մասիհ» (արաբերեն՝ «քրիստոնյա»): Քրիստոնյան Բաղդադի եւ Իրաքյան Քուրդիստանի պաշտոնական իշխանությունների նկատմամբ բարեհակության գրավական է: Քրիստոնյաները, ինչպես եւ եզդիները, ամենաշատը տուժել են Իրաքում «Խսկական պետության»³ իշխանությունից: Ուստի պաշտոնական իշխանությունների համար նրանք հիմա բնական դաշնակիցներ են:

Ճիշտ է, իշխանությունները չեն շտապում օգնել իրենց դաշնակիցներին:

Բարտեղյում Աբրահամը սեփական տուն ունի: Նա պարբերաբար այցելում է իր ակուլթը: Հարկավ, այնտեղ ոչ մի նոր բան տեղի չի ունենում: Ամեն ինչ թալանվել է կա՛մ ԻՊ-ի երկամյա իշխանության օրոք, կա՛մ 2016-ի հոկտեմբերին Իրաքյան բանակի եւ քրդական փեշմարգայի զինյալ կազմավորումների հարձակման ժամանակ: Մի քուրդ, որը եւս տուն

² Փեշմերգա կամ փեշմարգա, փաշմերգե (քրդ.՝ Pêşmarge, քրդ.՝ پێشمەرگه, թարգ.՝ «դեպի մահ գնացողներ», «մահի երեսին նայողներ»), Իրաքյան Քուրդիստանի քրդական զինյալ զորամիավորումների ամբողջական անվանումը: Փեշմերգան առաջացել է քրդական անկախության շարժման սկսման հետ զուգահեռ 1890-ականներին: Կազմավորումները մեծ թափ են առել 1920-ականներին՝ Օսմանյան կայսրության փլուզումից հետո: «Փեշմերգա» անվանումը առաջին անգամ գործածել է քուրդ գրող, բանաստեղծ եւ քաղաքական գործիչ Իբրահիմ Ահմեդը որպես արաբական ծագում ունեցող եւ որոշ ժողովուրդների, այդ թվում նաեւ հայերի, մոտ տարածված «ֆիդայի» անվանման համանմանը: Համաձայն որոշ մասնագետների, փեշմերգան տարածաշրջանի ամենամարտունակ զորամիավորումներից մեկն է https://hy.wikipedia.org/wiki/Փեշմերգա#cite_note-phqնեսիսայդեր-1:

³ ԻՊ՝ «Խսկական պետություն» (ահաբեկչական կազմակերպություն, որն արգելված է աշխարհի բազմաթիվ երկրներում):

ունի Բարտեղայում, պատմեց ինձ, որ ալան-թալանի առումով կառավարական եւ քուրդ զինվորները ոչ պակաս ջանասեր են, քան ահաբեկչական կազմակերպության զինյալները: Փոխարենը տունը կանգուն է. պատերը, տանիքը, քարե ցանկապատը չեն տուժել ազատարարների օգուժի եւ հրետանու հարվածներից: Իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաք էրբիլի քրիստոնեական արվարձանում՝ Այնքավայում, Աբրահամն ապրում է ազգականների տանը: Թե որքան կշարունակվի դա, նա չգիտի: Բայց «դեռ վաղ է» վերադառնալ Բարտեղ: Սպառնալիքը դեռ առկա է: Քրիստոնյաների մեծ մասը, ում հետ ես շփվել եմ, համոզված է, որ ահաբեկիչները կարող են կրկին հարձակվել քաղաքի վրա:

Եւ միանգամայն հակառակ պատկերն է Մոսուլի սուննիական արվարձաններում եւ շրջաններում, որոնք ԻՊ-ի տիրապետության տակ էին երկու-երեք շաբաթ, նույնիսկ մի քանի օր առաջ: Այնտեղ բնակիչները փութեռանդորեն խաղաղ կյանք են հաստատում նոր իշխանության ներկայությամբ: Երբ 2014-ին ԻՊ-ը լայնածավալ հարձակման էր անցել Իրաքի հյուսիսում, սուննիական շրջաններից փախուստի դիմած քաղաքացիական անձանց թիվը այնքան էլ մեծ չէր: Փախչողները հիմնականում իսլամի ոչ սուննի հոսանքների պատկանող արաբներ էին, այլ կրոնների ներկայացուցիչներ եւ քրդեր: Ուստի գրոհից առաջ հենց միայն Մոսուլն ուներ 800 հազարից մինչեւ 1 միլիոն քաղաքացիական բնակչություն (տարբեր աղբյուրներ տարբեր տվյալներ են նշում, բայց ամեն դեպքում Իրաքի՝ բնակչության թվով երկրորդ քաղաքը շարունակում էր մնալ երկրորդը նույնիսկ ԻՊ-ի օրոք): 2004 թվականի տվյալներով՝ նրա բնակիչների թիվը գնահատվում էր 1,8 միլիոն մարդ:

Մարտի առաջին օրերին սկսվեց Արեւմտյան Մոսուլի (քաղաքի այն մասը, որը գտնվում է Տիգրիսի աջ ափին) ազատագրման հերթական փուլը: Ես օտարերկրացի այլ լրագրողների հետ մեկնեցի քաղաքի հարավարեւմտյան մասում գտնվող Զոսեթ թաղամաս:

Ջոսեֆ

Օդուժի անդադար գվիոց երկնքում. պողոտայի քարե ցանկապատի հետեւում բացազատվում է «Աբրամս» հրասայլը. նրա մոտերքում խոնված են «Համվի» զրահամեքենաները, սեւ ծուխ է բարձրանում այն

թաղամասից, որտեղ տեղակայվել են ԻՊ-ի զինյալները: Այսպիսին է Զոսեքի համայնապատկերը:

Մտնում եմ այն տունը, որը Իրաքի դաշնային ոստիկանությունը բառացիորեն մեկուկես ժամ առաջ է գրավել: Տանիքին տեղավորված ոստիկանները կրակում են այն ուղղությամբ, որտեղ ենթադրաբար դիրքավորվել է հակառակորդի դիպուկահարը: Երկրորդ հարկի միջանցքում՝ հենց հատակին պառկել եւ հանգստանում են արագ արձագանքման խմբի ոստիկանները. ոմանք քնած են, ոմանք բջջային հեռախոսներով հաղորդագրություններ են ուղարկում ընկերներին եւ հարազատներին (Մոսուլում ինտերնետն ու հեռախոսակապը գերազանց են աշխատում): Առաջին հարկի հյուրասենյակում սպաները ծխում են՝ քննարկելով առաջ շարժվելու ծրագրերը: Շինության նկուղում տանտերերն են՝ հինգհոգանոց ընտանիքը. ընտանիքի հայրը, կինը, նրանց որդին եւ մետաղյա մահճակալներին գամված ծանր հիվանդ տատիկն ու պապիկը: Նրանք սունիներ են: Չէին լքել քաղաքը, երբ այն անցել էր ԻՊ-ի իշխանությանը: Նրանք ԻՊ-ի մասին ոչ վատ խոսք են ասում, ոչ էլ՝ լավ: Ասում են. «Ուրախ ենք, որ իրաքյան բանակը եկել է»: Ընտանիքի հայրը՝ Աբդուլլահը, նշում է, որ ինքը նկարիչ է (նա իսկապես ստեղծագործող մարդու արտահայտիչ դեմք ունի) եւ ԻՊ-ի օրոք աշխատել է մասնագիտությամբ: Նա մանրամասներին չի տրվում: Զոսեքը սուննիական շրջան է: Այստեղ թալանի հետքեր չկան: Տեղի բնակիչներից մեկը՝ Համադը, որը ԻՊ-ի օրոք փախել էր Բաղդադ, պատմում է, որ երկու տարվա ընթացքում իր տանը ոչնչի ձեռք չեն տվել: «Նույնիսկ մեքենան նույն ձեռով կանգնած էր տան բակում, ինչպես թողել էինք», — ասում է Համադը:

Մոսուլի սուննիական շրջաններում եւ սուննիական արվարձաններում ազատագրումից մի քանի օր անց արդեն փոքր խանութները բացվեցին, մեկ շաբաթից շուկաներն սկսեցին գործել այնպես, ասես այստեղ պատերազմական գործողություններ չեն եղել: Շուկան մերձավորաբերեցյան ցանկացած քաղաքի սիրտն է: Եթե այն նորից գործում է, ապա շրջակայքը եւս կենդանանում է: Նույնիսկ Մոսուլից հարավ գտնվող Համամ Ալի քաղաքում, որը կառավարությունը համարում է ԻՊ-ից հետ գրավածներից ամենաանհուսալին (այնտեղ ահաբեկիչները վայելում էին տեղի բնակիչների առանձնահատուկ բարեհաճությունը, ուստի հիմա փողոցները լի են զինված պարեկներով եւ ամրացված անցակետերով), վաղ առավոտից մինչեւ մայրամուտ շուկայում եռուզեռ է:

Իսկ ահա ազատագրված քրիստոնեական քաղաքներում շուկաները չեն վերաբացվում: Դա պայմանավորված է այն բանով, որ մահապարտի ինքնապայթեցումն ավելի հավանական է մարդկանց զանգվածային կուտակման վայրերում՝ շուկայում, եկեղեցում աղոթքի ժամին, հարսանիքի կամ դպրոցում դասերի ժամանակ:

Երբ ամերիկացիները եկան

Քրիստոնյաները, ինչպես եւ եզդիները, խոսում են այն մասին, որ ԻՊ-ն իրենց նկատմամբ ցեղասպանություն է իրագործել (եւ շարունակում է դա ահաբեկչական գործողությունների միջոցով): Սակայն միջազգային մակարդակով, նույնիսկ Իրաքի կառավարության մակարդակով, այն մինչ օրս չի ճանաչվել: «Ցեղասպանություն եղել է, թե՛ չի եղել, կամ՝ ի՞նչ էր դա», նմանաբնույթ հարցերը հետաձգվել են մինչեւ Մոսկուլում ռազմական գործողության ավարտը: Անշուշտ, քաղաքն ազատագրվելուն պես, եւ դա հասկանում է Իրաքի վիճակից թեկուզ փոքր-ինչ գլուխ հանող յուրաքանչյուր ոք, կսրվեն հակասությունները քրդերի եւ արաբների, սուննի արաբների եւ շիա արաբների միջեւ, ներքրդական խնդիրները: Եւ կրկին Իրաքի քրիստոնյաների եւ եզդիների հարցը մի կողմ կմղվի: Իսկ նրանց հիմնական խնդիրն այն է, որ չունեն կառավարական որոշմամբ պաշտոնապես ճանաչված իրենց տարածքը: Իրենց ներգաւառը (enclave), իրենց ինքնավարությունը. ինչպես ուզում է կոչվի, բայց լինի իրենցը՝ սեփականը: «Նրանք, ասես, եւ կան, եւ չկան», — տեղացի քրիստոնյաների մասին ասում է ամերիկացի լեւին, որ երեք տարի աշխատում է Իրաքյան Քուրդիստանում: — Պաշտոնապես նրանք նույն իրաքցիներն են, ինչ սուննիները կամ շիաները: Հետեւաբար, նրանց շրջանները, գյուղերը, եկեղեցիները ոչ մի հատուկ կարգավիճակ չունեն: Թեեւ ակնհայտ է, որ նման կարգավիճակ նրանց պետք է: Դա թույլ կտա ավելի արդյունավետ իրականացնել ծրագրեր նրանց պաշտպանության, նրանց ավանդույթների պահպանման ուղղությամբ եւ այլն: Որովհետեւ Իրաքում քրիստոնյաները փոքրամասնություն են: Եւ ինչպես ցույց տվեց ԻՊ ի հայտ գալու հետեւանքով առաջացած իրավիճակը՝ ահաբեկչական ուժերի կողմից ոչնչացման վտանգի տակ գտնվող փոքրամասնություն»:

Իրականում Իրաքի քրիստոնյաները ոչնչացման սպառնալիքի ներքո են 2003 թվականից, երբ ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները տապալեցին Սադամ Հուսեյնին եւ զավթեցին երկիրը: Սադամի օրոք պետական համակարգը, որը կազմված էր հիմնականում սուննիներից, ճնշում էր շիաներին ու քրդերին, իսկ կրոնական փոքրամասնությունները (բաղի քրիստոնյաներից եւ եզդիներից՝ Իրաքում բազմաթիվ են ամենահազվագյուտ ցեղային-դավանաբանական խմբերը, օրինակ՝ շաբաքները⁴ եւ մանդեացիները⁵) իրենց համեմատաբար բարվոք էին զգում:

Ամերիկացիները, զավթելով Իրաքը, որոշեցին հենվել շիաների վրա. նրանցից ձեւավորվեց նոր կառավարությունը: Իշխանության եկած շիաները (նրանք Իրաքում մեծամասնություն են) սկսեցին հաշվեհարդար տեսնել սուննիների հետ, որոնց պատասխանատու էին համարում Սադամի կառավարման շրջանում իրենց դժբախտությունների համար: Իրենց հերթին սուննիները, հայտնվելով լուսանցքից դուրս, արագ վերածվեցին արմատականների՝ համալրելով ծայրահեղական խմբավորումների շարքերը: Արդյունքում երկրի արաբական շրջաններում կտրուկ աճեց փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ բռնությունների թիվը: Պայթեցնում էին շենքերի պաշտամունքները, առեւանգում կամ սպանում էին հոգեւորականներին, ահաբեկչական հարձակումներ էին գործում այն թաղամասերի վրա, որտեղ համախումբ բնակվում էին փոքրամասնությունները: Փոքրամասնությունների ներկայացուցիչներն ստիպված էին լքել իրենց տները եւ մեկնել կամ Իրաքի այլ շրջաններ, որտեղ կարող էին իրենց ավելի անվտանգ զգալ, կամ առհասարակ հեռանալ երկրից: Ըստ BBC-ի տեղեկատվության՝ միայն 2008-

⁴ Շաբաքների ծագումնաբանությունը տակավին վեճերի առարկա է: Ոմանք պնդում են, թե վերջիններս քրդական ենթախումբ են: Շաբաքները մեծամասամբ բնակվում են Նինվեի հարթավայրում եւ ապրում են Խեթ կոչվող կրոնական համայնքով: Խոսում են հյուսիս-արեւմտյան իրանական լեզվախմբի խոսվածքով: Սրա հետ մեկտեղ կրոնական պաշտամունքի գլխավոր գրվածքը Քիթաբ ալ-Մանաքիբ (Գիրք դիտողաց) վերտառությամբ գիրքն է, որ թուրմեններն է:

⁵ Մանդեան սաբիաններ. մանդա արամեերէն նշանակում է «խմաստ», հունարեն՝ «զնոգիս»: Հավատքը գնոստիկյան գաղափարների, քրիստոնեության, հուդայականության, իրանյան հին պատկերացումներից բխող խառնուրդ է: Այս փոքրաթիվ կրոնական-ազգային միավորը պատմականորեն հաստատված է Միջագետքի հարավային՝ ճահճոտ տարածքում՝ Իրաքի եւ Իրանի սահմանին: Մանդեացիները համոզված են, որ ջուրը սրբազան է, եւ այն կեղտոտողը վիրավորում է հրեշտակներին <https://religionnews.com/2018/10/18/water-pollution-in-iraq-threatens-mandaean-religious-rites/>: Մանդեացիվոց հավատքով Հովհաննես Մկրտիչը վերջին եւ գլխավոր մարգարեն է. <https://en.wikipedia.org/wiki/Mandaeans>:

ի հոկտեմբերին շուրջ 12 հազար քրիստոնյա է փախել Մոսկվից եւ նրա շրջակա վայրերից:

Տարածաշրջանը, որտեղ կենտրոնացած է (կենտրոնացած էր մինչեւ ԻՊ-ի հարձակումը 2014-ի ամառ) Իրաքի քրիստոնյա բնակչությունը, Նինվեի հարթավայրն է՝ Մոսկվից արեւելք: Հենց այնտեղ են գտնվում եւ Բահդիդան, եւ Բարտեղան, եւ Բաշիկան, եւ քրիստոնեական այլ քաղաքներ ու գյուղեր: Ներկայումս հարթավայրը գրեթե հավասար կիսված է Իրաքյան Քուրդիստանի իշխանությունների եւ Բաղդադի կառավարության միջև:

Ուրվականներ

Մերձավոր Արեւելքում հիմա տարածված խոսք է. «Բոլոր խնդիրների պատճառը արաբներն են»: Հետաքրքիր փաստ է, որ նույնիսկ քրիստոնեություն ընդունածները, որ ծագումով արաբ են, իրենց անվանում են հենց քրիստոնյա, այլ ոչ թե արաբ: Դա հատկապես վառ դրսևորվեց Մերձավոր Արեւելքում «Արաբական գարնան» սկզբնավորումից հետո, երբ մահմեդական արմատականներն սկսեցին հարձակվել քրիստոնյաների վրա: Նման հարձակումները պատճառ դարձան, որ արաբ քրիստոնյաներն սկսեն ներկայանալ ավելի շատ կրոնական, քան ազգակցին հատկանիշով (այսօր նման իրավիճակ է նախկին Հարավսլավիայում, որտեղ նույն լեզվով՝ սերբերենով խոսող ժողովուրդը բաժանվեց երեք մասի՝ ըստ կրոնական հատկանիշի՝ ուղղափառ սերբեր, կաթոլիկ խորվաթներ եւ բոսնիացի մահմեդականներ):

Իրաքյան Քուրդիստանում քրիստոնյաներն անհամեմատ հանգիստ են ապրում: Նրանց եկեղեցիների եւ տների վրա հարձակումներ գրեթե չեն լինում: Առհասարակ, այդ տարածաշրջանում ահաբեկչությունները հազվադեպ են: 2014-ի ամռանը ԻՊ-ի հարձակման ժամանակ քրիստոնյաները նախընտրում էին փախչել Իրաքյան Քուրդիստան: Ուստի քրիստոնյա փախստականների ճամբարներն ավելի շատ են քրդական տարածքում, քան արաբական: Դոհուկ քաղաքում կան ուղղափառ ասորիների թաղամասեր: Կոյա քաղաքում ապրում է Քաղդեական կաթոլիկ եկեղեցու հետեւորդների մեծ համայնք: Այնքավայում, բացի ասորիներից եւ քրիստոնյա արաբներից, ապրում են հայեր: Տարածաշրջանի

ամենահին վանքը (ուղղափառ ասորիներին)՝ Մար Մատթայը, շարունակում էր գործել նույնիսկ այն ժամանակ, երբ ճակատային գիծն անցնում էր դրանից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա: Եւ դա շնորհիվ փեշմարգայի ստորաբաժանումների հովանավորության:

Քրիստոնեության ողջ ընթացքում մերձավորարեւելյան քրիստոնյաների համար ներգաղթն ու արտագաղթը, կարելի է ասել, սովորական էին: Վերաբնակեցումները տեղի են ունեցել հարյուր կամ հիսուն տարին մեկ, նույնիսկ ավելի հաճախ: Սակայն հարյուր տարի առաջ մի նոր միտում առաջացավ: 1915 թվականին Օսմանյան կայսրությունում հայերի եւ ասորիների ցեղասպանությունից հետո քրիստոնյաներն սկսեցին հեռանալ Մերձավոր Արեւելքից՝ տեղափոխվելով ավելի ապահով՝ եւրոպական երկրներ եւ ԱՄՆ: Անցած մեկ դարում, օրինակ, Թուր Աբդին սարահարթում (ներկայիս Թուրքիայի հարավ-արեւելք) բնակվող ասորիների թիվը 500 հազարից նվազել է մինչեւ 2 հազար: Այսօր Թուր Աբդինում կարելի է տեսնել ասորիների լքած ամբողջական գյուղեր: Կան տասնյակ լքված եկեղեցիներ ու վանքեր: Միդյաթ քաղաքում, որը ժամանակին ասորական այդ շրջանի կենտրոնն էր, մնացել է ընդամենը 100 ասորական ընտանիք: Շատ քչերն են խոսում իրենց մայրենի լեզվով՝ արամեերեն, հաղորդակցության հիմնական լեզուն թուրքերենն է: Քրիստոնեական նինվեի հարթավայրը կարող է կրկնել Թուր Աբդինի ճակատագիրը: Չնայած ազատագրված լինելուն՝ ասորական ուրվական գյուղերն ու քաղաքները լուծյամբ գոչում են իրենց ողբերգության մասին:

Սա իմ առաջին նյութն էր Իրաքի ասորիների, նինվեի հարթավայրում ապրող (գոյատեւող) քրիստոնյաների մասին: Այն գրելու համար ես ստիպված էի լուծել բազմաթիվ խնդիրներ:

Ես անկախ լրագրող եմ, ինքս եմ իմ գործի տերը: Մեկնում եմ ինչ-որ տեղեր, գրում եմ հոդվածներ, լուսանկարներ եմ կցում եւ ներկայացնում պարբերականներին՝ հրապարակման: Այդ Պարբերականների հետ որեւէ պայմանագիր չունեմ. նրանք պարտավոր չեն տպագրել իմ գրածները, ես պարտավոր չեմ ընդունել իմ շարադրանքում նրանց առաջարկած փոփոխություններն ու լրացումները: Եթե ինձ դուր չի գալիս նրանց դիրքորոշումը, ես պարզապես նյութն առաջարկում եմ մեկ այլ պարբերականի, երրորդին եւ այլն: Սա անկախ լրագրողի եւ երջանկությունն է, եւ դժբախտությունը. երաշխիք չկա, որ ինչ-որ մեկն ընդհանրապես կցան-

կանա հրապարակել քո գործը, քանի որ դու գրել ես այն՝ հաշվի չառնելով ոչ մեկի շահերը:

Այլ է հաստիքային լրագրողների խնդիրը: Նրանք հետեւում են իրենց գործատուների սահմանած որոշակի աշխատակարգին: Խմբագրությունը նրանց հանձնարարություն է տալիս: Խմբագրությունը վճարում է նրանց ծախսերը: Խմբագրությունը ամեն դեպքում վարձատրում է նրանց աշխատանքի համար: Ռուսաստանում ամենամեծ եւ ամենահարուստ լրատվամիջոցները դաշնային հեռուստաալիքներն ու լրատվական գործակալություններն են:

Իրաք՝ Մոսկվի առաջնագիծ հասնելու համար ռուսական դաշնային հեռուստաալիքներում եւ լրատվական գործակալություններում աշխատող տղաները բավականին մեծ դրամական հնարավորություններ ունեն: Նրանց խմբագրությունները կապեր ունեն Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում, որն օգնում է նրանց ստանալու Իրաք մուտք գործելու թույլտվություն: Տեղում դաշնային լրագրողները վարձում են ֆիքսերի (ուղեկցող, մարդ, որ գիտի տեղացիների լեզուն, գիտի, թե ում հետ պետք է պայմանավորվել ուզած տեղը կամ ուզած մարդկանց մոտ հասնելու համար), մեքենա են վարձում, ապրում են բավականին հարմարավետ հյուրանոցներում: Սակայն նրանք իրավիճակը ներկայացնում են այնպես, ինչպես իրենց հանձնարարել են խմբագրությունում:

Անձնական զրույցներում «թեժ կետեր» մեկնող հեռուստալրագրողները միանգամայն խելամիտ տղաներ են: Նրանք հասկանում են, թե իրականում ինչ է կատարվում այս կամ այն տարածաշրջանում: Բայց եւ երեսպաշտ են. նրանք չեն պաշտպանի ճշմարտությունը, նրանք կհետեւեն գործատուի հրահանգներին: Նրանք ընդհանրապես ցանկություն չունեն զրկվելու առատ կերակրատաշտից իրենց սկզբունքային դիրքորոշման պատճառով:

Մոսկվի դեպքում ռուս հեռուստալրագրողները պետք է ցույց տային «խաղաղ բնակչության տառապանքները, որոնց ռմբակոծում է ԱՄՆ օդուժը» եւ «քաղաքի հրեշավոր ավերումները»: Մոսկվի ազատագրման սարսափը պետք է ծածկեր սիրիական Հալեպի ազատագրման ողբերգությունը: Սիրիական կառավարական բանակը Հալեպն ազատագրել էր 2016-ի վերջին՝ ռուսական բանակի աջակցությամբ: Արեւմտյան խոշորագույն լրատվամիջոցները, բնականաբար, մշակել էին իրենց քարոզչակարգը՝ Հալեպի գործողությունը պատկերել որպես «ռու-

սական եւ կառավարական ուժերի վայրագություններ խաղաղ բնակիչների նկատմամբ, որոնք չեն ցանկանում ենթարկվել Դամասկոսի բռնապետական վարչակարգին»:

Մի խոսքով, ռուս հեռուստալրագրողները մեկնել էին Մոսկու՝ Արեւմտքի «պատասխանը տալու»: Ուստի նրանց նյութերում չկային պատմություններ այն մասին, որ սուրնիները, որոնց ռմբակոծում է ամերիկացիներն ու իրաքյան օդուժը, բավականին լավ էին ապրում ԻՊ-ի օրոք: Եւ եթե ամերիկացիներն ու Բաղդադի կառավարությունը չձեռնարկեին նրանց «ազատագրումը», նրանք կշարունակեին հանգիստ ապրել ԻՊ օրենքներով: Եւ ծայրահեղականների իշխանությունից փախչելու ոչ մի արտառոց պատճառ նրանք չունեին: Իրաքյան բանակն ու ոստիկանությունն իրենց հերթին «ազատագրվածներին» ընկալում էին որպես թշնամիներ, որոնք ինչ-որ պահի կարող են ընդվզել: Ամենավառ օրինակը Համամ Ալի քաղաքում տիրող իրադրությունն է:

Համամ Ալի մեկնելու համար ես ստիպված էի երկու շաբաթ կորցնել, որպեսզի պարզեի, թե ինչպես կարելի է նվազագույն ծախսերով հասնել ռազմական գործողությունների գոտի: Անկախ լրագրողը դրամական առումով շատ կաշկանդված է (հիշեցնեմ, որ ամենեւին էլ երաշխիք չկա, որ արդյունքում ինչ-որ մեկն ինձ կվճարի իմ նյութի համար. իմ ծախսերը կարող են ընդհանրապես չարդարանալ, իսկ հոգվածը «կմնա դարակներում»): Ես չեմ կարող թարգմանիչ վարձել (ինքս արաբերեն շատ վատ եմ խոսում, բավարար չափով գիտեմ միայն երկու օտար լեզու՝ անգլերեն եւ սերբերեն): Իսկ մեքենայի մասին խոսք անգամ չկա: Իրաքի հյուսիսում շրջում էի բացառապես պատահական փոխադրամիջոցներով: Նախ փորձեցի Մոսկու հասնել ինչպես պատահի, ուղղակի վեր կացա ու մեկնեցի այնտեղ: Ինձ ձերբակալեցին իրաքյան անցակետերից մեկում (քաղաքին հագիվ 15 կիլոմետր էր մնացել) եւ թույլ չտվեցին առաջ շարժվել, որովհետեւ չունեի ո՛չ ուղեկցորդ, ո՛չ մեքենա, ո՛չ էլ թույլտվություն Իրաքի դաշնային կառավարությունից՝ Մոսկուի ռազմագործողության գոտում աշխատելու համար: Իրաքի զինվորականների կարծիքով՝ իսկական լրագրողը ռազմական գործողությունների գոտի պետք է մեկնի վարձակալած ամենագնացով եւ արաբերեն գերազանց խոսող ու տեղի իրադրությանը մանրամասնորեն իրազեկ մարդու ուղեկցությամբ: Լրագրողների մասին այս պատկերացում ձեւավորվել է ամերիկյան ներխուժման ժամանակահատվածում՝ 2003 թվականից ի վեր:

Ամերիկացի եւ եւրոպացի հաստիքային լրագրողները փողի պակաս չունեն։ Երկրորդ՝ նրանց խմբագրություններն ամեն կերպ հոգում են իրենց հաստիքային աշխատողների անվտանգության հարցերը, ուստի նրանց առջեւ դնում են «թեժ կետերում» վարքագծի համապատասխան պահանջներ։ Հասկանալի է, որ անկախ լրագրողը (freelancer-ը, stringer-ը) նյութաապես կաշկանդված է եւ ավելի շատ ապավինում է իր հնարամտությանն ու անձնական շփումներին։ Մեկը լեզու է գտնում առաջնագիծ մեկնող զինվորականների հետ, որպեսզի ընդունելի չափի կաշառքի դիմաց իրեն էլ հետները տանեն (կամ գուցե առանց կաշառքի՝ նայած երկրի, ինչ վերաբերում է Իրաքին, այնտեղ զինվորականներն ու ռստիկանությունը շատ լիտի են այս առումով ու փողասեր)։ Մեկ ուրիշը վարձակալում կամ գնում է էժան մոտոցիկլետ եւ շրջանցում անցակետերը՝ արհամարհելով վտանգը (շրջանցիկ ճանապարհները կարող են ականապատված լինել)։ Ինչ-որ մեկն էլ կարող է սեփական ուղեկցորդ ու մեքենա ունեցող հեռուստաթղթակիցների «պոչից կառչել»։

Իմ ռուս ծանոթը, որը սովորում էր Դամասկոսում, ինձ տվեց չեխ լրագրող Ռադանի տվյալները, որը նույնպես անկախ լրագրող է։ Չեխին հաջողվել էր լեզու գտնել դաշնային ռստիկանության հետ եւ միասին մեկնել Մոսկվա։ Ես նրա հետ կապվեցի «Ֆեյսբուքով»։ Ռադանը տվեց էրբիլում ապրող ուղեկցորդուհու տվյալները։ Նա հարյուր դոլարով համաձայնեց ինձ տանել դաշնային ռստիկանություն։ Աղջիկը ծանոթներ ուներ Իրաքի պաշտպանության նախարարությունում եւ դաշնային ռստիկանությունում։ Եթե անցակետերում ինչ-որ հարցեր էին ծագում, աղջիկը զանգահարում էր ծանոթներին, եւ մենք առաջ էինք շարժվում։

Ռստիկանությունն ուներ սեփական խումբը՝ լրագրողների աշխատանքն ապահովելու համար։ Նրանք զբաղեցրել էին Արեւմտյան Մոսկվից 10 կմ հարավ գտնվող լքված մի առանձնատուն։ Նույն առանձնատանն ապրում էին մեկ տասնյակ իրաքցի լրագրողներ եւ երկու օտարերկրացիներ՝ իտալացի լուսանկարիչը եւ նույն չեխը։ Խումբը ղեկավարում էր տարեց գնդապետը։ Նա անգլերեն չէր խոսում։ Անգլերեն խոսում էր սերժանտ Ալան, որը ժամանակին աշխատել էր Իրաքի հարավում 2003–2008 թթ. տեղակայված ուկրաինական խաղաղապահ զորախմբի հետ։

Ալան ընտիր տղա էր։ Ես իսկույն ընկերացա նրա հետ։ Ուկրաինացիների հետ աշխատանքը նրա վրա շատ դրական ազդեցություն էր թողել։

Ռուսները, ուկրաինացիները նրա համար նույնն էին: Այն մասին, որ ռուսամետ աշխարհագորայիները 2014-ից կռվում են Դոնբասում ուկրաինացի ազգայնականների դեմ, նա ընդհանրապես չգիտեր: Մի խոսքով, երեկոյան նրա հետ խմեցինք հորդանանյան անդուր վիսկար (չեխ Ռադանը միացավ մեզ, բայց արագ էլ գինովացավ եւ սուզվեց հեռախոսի մեջ) եւ սկսեցինք համեմատել խորվաթական VHS գրոհային ինքնաձիգները, որոնք իրաքցիները շատ էին օգտագործում Մոսուլի քաղաքային մարտերում, AK-74-ի հետ: Հաջորդ օրը Մոսուլի առաջնագծում Ալան օգնում էր ինձ որպես թարգմանիչ:

Ոստիկաններն իրենց մեքենաներով պարբերաբար լրագրողներին տեղափոխում էին մարտական գործողությունների գոտի: Մեկնելիս ոստիկաններին միացել էին արտասահմանյան առաջատար հեռուստաընկերությունների լրագրողներ եւ առաջատար լրատվական գործակալությունների լուսանկարիչներ: Այդ տղաները կոկիկ հագ ու կապով էին, ապրում էին էրբիլի հյուրանոցներում ու առաջնագիծ էին մեկնում՝ ասես խնջույքի: Մաքուր հագնված էին, արդուկած վերնաշապիկներով եւ տաբատներով, թանկարժեք զրահաբաճկոններով եւ «PRESS» («ՄԱՄՈՒԼ») գրություններով սաղավարտներով: Նկարահանում էին մի քանի տեսարան, մի քանի հարցազրույց վերցնում շարքայիներից ու սպաներից եւ կրկին վերադառնում էրբիլ (մեքենայով մի քանի ժամվա ճանապարհ էր): Նրանք շատ նման էին լպիրշ զբոսաշրջիկներին, որոնք եկել էին տեսնելու ուրիշների տառապանքները: Իսկական բուրժուաներ, մի խոսքով:

Ես, չեխը եւ իտալացին իրաքցիների, ոստիկանների եւ լրագրողների հետ քնում էինք հատակին, ներքնակներին՝ ծածկվելով կեղտոտ ծածկոցներով եւ մեր քնապարկերով: Լվացվում էինք սառն ցնցուղի տակ: Ուտելիքի համար հասնում էինք Համամ Ալիի շուկա: Ընդ որում՝ իրաքցի լրագրողներն իրենց հետ վերցնում էին զենք՝ չինական արտադրության Կալաշնիկովի ինքնաձիգներ եւ իրաքյան «Թարիք» ատրճանակներ: Նրանք չէին վստահում Համամ Ալիի ոչ մի բնակչի եւ նրանց բոլորին համարում էին «ԻՊ գործակալներ»:


Իմ հաղորդումը, ի վերջո, լույսընծայեց ռուսական մամսագրերից մեկը: Ես ստացա իմ հոնորարը, եւ թվում է, թե մասնագիտացած լրագրողի տեսանկյունից կարելի էր մոռանալ այդ նյութն ու զբաղվել ուրիշներով: Բայց ինչ-որ բան ինձ հետ էր պահում, հատկապես ինչը, այն ժամանակ չէի կարողանում ձեւակերպել իմ մտքում, եւ հանգիստ չէր տալիս: Ուզում

էի վերադառնալ Իրաք հանուն ասորիների, հանուն այն բանի, որ ավելի լավ ճանաչեմ այդ ժողովրդին:

Կես տարի անց ես այնուամենայնիվ մեկնեցի Նինվեի հարթավայր: Մոսուլում ռազմագործողությունն ավարտվել էր, քաղաքն ու շրջակայքն ամբողջովին ազատագրվել էին ԻՊ զինյալներից: Այս անգամ այցի առիթը Իրաքյան Քուրդիստանի ինքնավարության՝ դաշնային Իրաքից անկախության հանրաքվեն էր: Բայց հանրաքվեից առավել ինձ հետաքրքրում էին Նինվեի քրիստոնյա ասորիները: Ես մտադիր էի շփվել նրանց հետ, լինել նրանց քաղաքներում ու գյուղերում: Ամենեւին էլ վստահ չէի, որ այս նյութը կհետաքրքրեր ռուսական պարբերականներին: Ես հույս ունեի «ծածկել» ուղեւորության ծախսերը հանրաքվեի մասին նյութերով: Այն, որ հանրաքվեի մասին նյութերը ես կկարողանամ առանց հատուկ ջանքերի վաճառել, կասկած չկար. քրդական հանրաքվեն դարձել էր այն ժամանակվա համաշխարհային լրատվամիջոցների ամենաառաջնային նյութերից մեկը: Այսինքն՝ ստացվում էր՝ հանրաքվեն եկամտի համար է, ասորիների վերաբերյալ անդրադարձն՝ իմ:

Շարունակությունը՝ հաջորդիվ





ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ 2022 Թ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը 2022 թ. շարունակել է փարոզչական իր ուրույն գործունեությունը՝ լույս ընծայելով եւ տարածելով գիտական, հոգեւոր-ուսուցողական եւ փարոզչական գրականություն:

2022 թ. հրատարակչությունը լույս է ընծայել մի շարք փարոզչական գրքեր, աղոթագրքեր, աստվածաշնչագիտական եւ վարժագրական բնույթի աշխատություններ եւ բնագրեր: Հայագիտության շրջանակներում լույս են ընծայվել պատմաբանասիրական, վավերագրական, բնագրագիտական, թարգմանական բնույթի ժողովածուներ եւ ուսումնասիրություններ, փարոզքներ, ինչպես նաեւ եկեղեցական օրացույցներ:

Բացի գրքերի հրատարակություններից՝ Հրատարակչական բաժինը նաեւ համակարգել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնաթերթերի՝ «Էջմիածին» ամսագրի եւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի խմբագրությունների գործունեությունը: 2022 թ. ընթացքում լույս են ընծայվել «Էջմիածին» ամսագրի 12 համարները, որոնք, բացի տպագիր տարբերակից, հասանելի են նաեւ թվային տարբերակով: Ամսագրի տարբեր համարում ներառված նյութերը լուսաբանում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Վեհափառ Հայրապետի գործունեության մի շարք բնագավառներ:

«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը, ըստ սահմանված ժամանակահատվածի եւ պարբերականության, 2022 թ. եւս լույս է ընծայել 24 համար, որոնց էջերում առաջին հերթին տպագրվել են Ամենայն Հայոց Հայրապետի՝ տարբեր առիթներով խոսված բոլոր ուղերձներն ու պատգամները, տեղեկատվական համակարգի տրամադրած բոլոր, ինչպես նաեւ թեմերից առաքված լրատվական նյութերը: Պարբերաբար տպագրվել են կրոնական, պատմական, գրականագիտական, արվեստաբանական, բարոյահոգեբանական ու հրապարակախոսական հոդվածներ:

